

7339

Platynem. Olszyna 55

Leptolepidoptera

- Lepidoptera

20. September 1892

891.99  
F-37

891.542-34  
F - 3.7

# 20ԲԱՆՆ ՈՒ ՆԵՐՆԵՐ

ՎԵՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
1883 թ Ամերանիկ նոյն  
ՏԻԳՐԱՆ ԽԱԶԱՐՃԱՆԻ  
18 նոյեմ. 1918 թ, ԹԻՎԱՆԻ.

Գիրեց

ՕԿՈՅԵ—ԳԼՈՐԴ ՌԵԲԻՈՒՑԵՐԵԵՆԸ

ԹԻԳԼԻՄ

Ճպարաճ Մր. Յարաձեի, Նիկոլ. փ. ու. 21

1896

891.542-34

F-37

иц.



# 20 ЕМУН ՈՒ ՆԵՐԱԾԵԼ F-45

✓ 6850

997.

1883 թուին

Գիրեց

ԱՐԱՏԱ-ԳԻՐԵՑ ԲՈՐԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Центր

Ленина

ИНВЕКТАРИЗАЦІЯ 1886 г.

№

Թ. Կ. Գ. Լ. Ա.

Ճաշարամ Մ. Չարչակի, նկառ. փ. և. 21

1896

2011

1990

6850

✓ 6850.

Ա.

1882 թուին էր: Քալրելի 25-ան չուրու մայիսի 15-ը քոչին ձեռնան էլ մարդ կարում չէր թամեծ հղոցերքան եա դը եր անց կենայ եա դը վոր: Հայ, թորք, թարագեամայ, թիւրքման, քիւրդ, դարաշի, մաղ շինող բոշա, զուրգովի, լոխ էլ բոշած սար ին գինամ. պատճառն որ արանը (գաշտը) մըշանք տքացալ էր, մշանք տքացալ էր, որ շոն կպիր, կենալ չէր, կապը կը կտորէր, սար փախչէր: Ասես թա իրիւնակը կրակ էր թափում, արեն էլ երում, տղարղորում, խանձում:

Քոչը սար գինալիս մին մեծ թմաշա ա. հենց հմարի թա մին լէաւ կարգին, սարքին չուրանի թատրոն ա: Աման տան ապրանք ջոկ ջոկ ին սար գինամ մինմնու հետա. հանցու որ մինմնու խառնուեն ոչ, հանցու որ հրեանը հրանին հետ կու շանի, թակումհակ ինի: Աման տան ըպրանքին առաջը քաշում ա մին չօրան, չօմազը օսին դրած «կռուը հօ, կռուը հօ» ձեն ընելաւ: Չուրանին հետան գինամ ա մին գեռ (մեծագոյն) հվիոր, սիպտակմքօք, մազերը տափաւը քսկիս էծ, էծին հետան ոխճարի սիւրին, ըսդրա հետան՝ գեառան սիւրին, ըսդրա հետան՝ տւարի նախիրը իւրան որթերաւը, ըսդրա հետան՝ տնըմէշաւ բեռնած եղնը, կով, գեռումաշ,

Дозволено Цензурою, Тифлисъ, 14 Июня 1896 года.



3394  
409

2003

ձի, էշ, ըսդրա հետան՝ ձիանց իլխին, ըսդրա հետան՝ օղտի շրանուկը բեռնած մփուաշաւ, եօրզան-դիւչակաւ, գեապա-կրպետաւ, ալրաւ, տաշտաւ, մաղաւ, սաջաւ, խնեցաւ, կոկորանքաւ, ճսրակաւ, մնդերքաւ, աման-չմանաւ։ Վորկալի օղտին վրան էլ կախուած են ինում շրանուկ ըրած, մեծ, պիծի շատ զընկոլակներ (զանգակներ)։ Էս մին տան ըպրանքին մնան մինմնու հետա ջոկ ջոկ զինամ են աման տան ապրանք էլ թեռնած ըլըջուկի (վրանի) քեշաւ, ճպատաւ, կացնաւ, ցկատաւ։ Զօրաններն զինամ են իւրանց ոխճարներին կշտերքաւը, գերոնարածները՝ իւրանց գերոներին, տւարածները՝ իւրանց տւրներին, մէյտարները՝ իւրանց ձիերին, սարւանչիներին էլ իւրանց ուղտերին։ Աման մինը՝ աշքերը չորս բացած (անքթիթ աշօք) ճղճղամ ա, մհակը տափերը պրանում (զարկում գետնին), շւշւցնում, մին մին էլ շեկում (զարկում) ետի գինացող ոխճարի, տւարի, ձիան, գիմշի, եղան, կովի, էշի, օղտի տնտըռուկին (գաւակին), հանցու որ ճելի ճելի գինան, չուրու կրսօր վորգեալի (իջնելու) տեղը հըսնեն, վորգեան։ Սուրբ ծեպին հզի են ինում, կրսօրին վորգեամ աման օր չուրու սար հըսնիլը։

Աչք բարեն տեսնայ կրդացնդ, ըս տեղաս մկըկամ են կմի ոխճարներն ու էծերը, ը տեղադ գեառներն ու հէօլերը, ըն տեղան բուանչում են կմի կովերն ու որթերը, ըս կիւտաս ըղատաւ տոնկամ ա գիւմշակով ու մոզի, ըդ կիւտան խրխնջամ ձի ու քոռակ, ըն կիւտան զողուամ էշ ու բոռակ, գերոզեռում օղտ ու կեօղուակ. ճղճղամ են մարդ ու կուկ,

հլիւոր ու պառաւ, հարմն ու փեսայ, տղայ ու աղջիկ։ Զեռ զեռ չները, թերթերը կէս գեաղ դիւս քաշած, կախ քցած, թնչելաւ, դհընելաւ, ճանճաւ ընելաւ, զլոխները թփոհրելաւ, հագիները սլէն ըրած, գինամ ին ըպրանքին էրկու կշտերքաւը։ Պիծի պիծի լակուտները սապատներաւ, ճուարաններաւ կապտած օղտի, եղան երրայ վնկվնիկամ ին, մրժմրժամ. մէջակ լակուտները, չաթուներաւ կըպտած, քաշում են տղերն ու ըղջերը իւրանց հետան։ Էս սուտանա լակուտները ձիգ ձիգ են անում իւրանց կապերը, պինդ պինդ զէմ տամ իւրանց ուները, կըրծկործում կապերը, հանցու որ ըզատուեն։ Հիպու որ կարում չին որ ըզատուեն, էլլընա կրծկործում ին, ձիգ ձիգ անում, կլանչում, կնձկոնձում (կաղկանձում) մրժմրժամ, փնթփընթամ, դժբութիւն անում, խեղգուելաւ զինամ։ Քոչան շիլ ընկած (շեղուած), իւրանց տէրերը կուրցրած, մլորուած շներն էլ օռնում ին, կնձկոնձում, զաւզա տամ, կլընչիւալանչ գետամ։

Զօրանները, իւրանց կնամնիքը (կանանիք), խոխերքն ու ըրախերքը հենց են լընա՛դիւ կ'ասես՝ պուղւատայ շինած, դիւ կ'ասես թա թափծու իննեն. իրիսներին որ եշում իր, ասես թա կծըպուղունը (հրաշէկ) եր էր ինում, դիւ ասես թա իրեսներան կրակի պեծեր ին թափուում, կարմներ, պաւարտ, ջէյրանի մնան ոննայ թիթեւ. Ոննաւ սար ին գինամ կըրկու դէառած հլիւոր, կոընդակ դէառած պաւաւ, մին մին մհակ բոնած, իրեք ոննանի դէառած, «դէ հա, դէ հա» ընելաւ։ Հենց ձի կար, որ

եղրան չորս հիւգի նստած էր—մերը մէջ տեղումը՝  
խոխան ծեծ ուտելիս, ըսդրանայ մեծը ըռաջին նըս-  
տած, ըսդրանայ մեծն էլ գերւակին նստած, մօրը  
մէջը պեսնդ խոտած:

Հիւգու որ տարին չորային ա ինում, քոչին  
մհար լէաւ ա անց կենում թա սար գինալիս թա  
սարան վոր գեալիս: Ամմա հիւգու որ թոռային ա  
ինում, հղցերքում շատ թրջուում են մարդ, շոր,  
տնամէջ զրի մէջ ճլիխպում, տուրմզկուում են, շան  
հալ ընկնում, հենց դէառնում թան ընկած մոկնը:  
Աման հինչ ցխրփալալ ա դէառնում, ծնտրանում:  
Հսդի ցեխ ժմանակներում մեծ, պիծի լոխ էլ ոննը-  
րերիկ են գինամ, գեալիս: Փոխկերը եր են քա-  
շում չուրու ծնկները, դը երան կապում, մին մին  
մհակ ձեռներին բռնում, գինամ, գեալիս:

Քոչին շատ թիւնդ ժմանակ սար գինացողներն  
էնչանք շատ են ինում, էնչանք շատ են ինում, որ  
հղցին էրկեանքն ու լինքը բռնում են: Խրանց  
տղրան (տեղահան) իլած տեղան չուրու Խոզալլաւին  
չափարիսնան (փոշտի կայարանի) հղին լին ա: Ամ-  
մա ըս տեղան չուրու Թթոջիւրը հղին նղացած ա:  
Հղցին էրկու կողերը տեղ տեղ արտեր են, տեղ  
տեղ ցարի չափարներ, տեղ տեղ քերծեր, տեղ տեղ  
էլ նեղ: Մայիս ամսում քոչը մշանք շատ ա ինում,  
մշանք շատ ա ինում, որ հղցերքաւը էլ մարդ կա-  
րում չի թա եա գը եր հնցնի եա գը վոր: Հսդի  
ժմանակ սուտանան էլ ընկնի ոչ ուշունցատու եւ-  
շիկի ու կղնուող եասափուի ճանկը. էնչանք կը կեռ-  
ուեն, էնչանք կը կեռուեն, հենց կը շին թալակ ըն-

*N6850*

կած աղուէս: Հիւգու եմշիկներն ու եասաւուները  
դէմ են ընկնում քոչին, էլ կարում չեն թա ճէլլի  
անց կենան, էն ուշունցներն են տամ, էն ուշունց-  
ներն են տամ, որ ոչ բրանաւ կ'ասուի, ոչ զամաւ  
կը գեղրուի, ոչ էլ ունջուկաւ կը լսուի. պէտում ա  
էրկու հափուաւ (բռամբ) անջուկներդ օնես, փախ-  
չես: Ջուշուեցիք, որ անգիր ըրալ ուշունցին քերա-  
կանութիւնը, հինչ նաքեարա են, որ կարան ըսդ-  
րանց մնան ուշունց տան: Բւտըրնուցիցիք, որ ու-  
շունցին ծարտասանութիւնը, Ցրամնաբնութիւնը ծա-  
մալ են, կոլ տուալ, թա որ ըսդրանց կշտին էրկու  
տարին շակիրտ կենան, մրդըփարի ուշունցատու ու-  
ստաց կը դէառնան, պատճառն որ ուշունցին բռանի  
ընալին էսա ըսդրանց կշտին: Էլ որ մինը ասեմ,  
որ մինը չասեմ, որ մինը գեղրեմ, որ մինը թողեմ:  
Թա որ Մշակ կազէթ գեղրող ուստապաշին գեայ-  
իւրան զուզզունի զալամը, երպոյի թուղթը երկա-  
լած, բէլքեա կարայ տղստել գելրել:

Կսըպատայ, Մուլիրութաղայ, Գիւլլթաղայ հայ  
քոչն էլ հւաքուեց Երի-Գիւլաթաղ. ըս տեղ հենդ օր  
մնալան ետք՝ քոչեց, գինաց, գլխըւորեց Թոլխառայ  
ձորին ելրայ: Էս հայ քոչին հղին զորդ ա շատ լըն-  
ջեր, լընջփոր (լանջ 'ի վեր և լանջ 'ի վայր), օձի  
մնան ծռըմոռ, նեղ, գժրհամբուր (գժուահամբոյր),  
տեղ տեղ էլ քըքարուտ էր, ամմա էլլիա լէաւ էր,  
պատճառն որ փոշտի հղի չէր. զորդ ա սար գինա-  
ցող շատ կար, ամմա սարան վոր եկող կար ոչ:  
Հսդրանայ կըման (բաց յայսմանէ) էս հայ քոչին գի-  
նացած հղցին շատ տեղերը ծմակ էր: Զեռ գեռ

հիւոր ծառեր հղցին էրկու ընկիւնան բձրացալ ին մինմնու կոլաւ ընկեալ։ Տրեած ծառերը էնչանք շատ ին, էնչանք շատ ին, էնչանք թանձր շոք ին ըրալ, հենց հմարի թա երկինքը մին զեռ կանանչ շաղիք էր բռնալ էս հայ քոչին գլխին։

Սար գինալիս եա սարան վոր գեալիս, հունց որ օրէնք ա աման քոչի, հայ չօրան, գելոնարած, տւարած, որթարած, մարդ, կնեկ, հարսն ու աղջիկ համ քշում ին խրանց ապրանքները համ էլ մինմնու հետ ըսելաւ, խուսելաւ, համուղ համուղ զրուց ըսելաւ գինամ խրանց հովին։ Մեռնեմ սուրբ մըռունին զօրքին (զօրութեան), հայ ճակատը մոռւնած ա, աբուն ու հայան, համօթն ու պտկառանքն շփղափաղ ա անում հունց որ չայ աղգին ըրեսին, ըսդհենց էլ էս հայ քոչին մեծին, պծինին ըրեսին։ ասես թա լոխ էլ անմեղ, միամիտ, սրտաւ մաքուր խտակ ին խրանց գելոներին վնան։

Էս հայ քոչին մէջ մին չօրան կար՝ անումը Սարգիս, մին աղջիկ էլ կար անումը Անա։ Հունց որ մինմնու հետ սէրաւ են ինումք բիւլբիւն ու վարդը, վարւանան ու ճրագը, կլեկն ու նշեղիրը ըսդհենց էլ մինմնու հետ սէրաւ ին Սարգիսն ու Անան։

Բ.

2րլրերդայ մհալի գիւղերան առի մեծն ա Կուսապատը, որ շինուած ա Թութառայ ու Խշընքետայ մէջ տեղումը։ Կուսապատը շինուած ա մին ձորի ձախ լէնջին ելրայ. էդ ձորան էլ վազում ա

մին բարակ, պիծի գետ, որ մին ջաղաց ա բնըցնում։ Գետին աջ ու ձախ կողկերքան տնկուած են լաւ թընակի բաղեր ու թթի ծառեր։ Թնակի բղերում կան թզի, սևկեկի, շմթուլուկի, շինարի, նոնի ծառեր էլ։

Կուսապատը 2րլրերդայ մհալին աշքն ա, պորտըն ա, սերտն ա, պատճառն որ մեծ Մէլլիք-Հթամայ, Մէլլիք-Մժլումայ, Մէլլիք-Վանու շնարն (բաղաքըն) ա։ Էս գեղումը մհէկ կայ մին լէաւ քրըկէր եղցի, անումը սուրբ Աստուածածին։ 6 քհանայ, 7 տոն հիւղիւրական, 15 տոն բէկզատայ. 355 ծոխ, 1850 մարդ մեծ, պիծի, 1200 պառաւ, կնեկ, հարսն ու աղջիկ, 7 կաղլիկ, 3 զոխտակ ծնուածներ, 2 քառ, 2 քոռ, 1 քաշալ, 1 պել<sup>1)</sup>։

Կուսապատում ծնուում են տարին 60 խոխա (ար. իգ. միասին), ինում ա 20 պսակ, 18 ննջեցեալ։ Էրկեան ապրողն ինում ա 100 տրեկան, մէջակ ապրողը՝ 70. կարճ ապրողը՝ 2—20 տրեկան (բայցառութիւն են խոլերա, ծաղիկ, կարմրուկ, պըկուեցք, և այլն դէպքերն)։

Կուսապատայ տեղը ոչ շատ բաձրի ա, ոչ էլ շատ քաշ, մէջակ ա, գեղին իրեք կողքերն էլ սարեր պատած են, ջիւրը լէաւ ա, հաւան էլ սէրուն։ Մարդոց, կնանոց բոյերը մէջակ են, վլուխները՝ բիւլոր, շափին, մազերը, օնքերը, բեղերը, թերթերունքները, մրօքները թոխ, թանձր. աշքերը սկ սկ, նախշուն

<sup>1)</sup> Ռևսաթուերիս մէջ հաշւուած են Մարդակերտ, Հոռաթաղ և Դմոնու շէներքի ծուխերն և անձերն ես, որք բաժանուած են Կուսապատից։

նախշուն, քթերը մէջակ, տեսքաւ, պոօշները բարակ, կարմուր, թոշերը լիքը, տոռդ, ճակատները պարզ, իրեսները բիկոր, կարմուր թոխի խառն (ցորենագոյն), վիզերը հաստ ու կարճ, կտները, ոնները լիքը լիքը, դիմացկան, մէջքերը հաստ հաստ, պենդ պենդ, լանջերը, թէկինքները լէն լէն (այս ընդհանուր դիմագրութեանց և կազմուածքի մէջ կը լինին անշուշտ մասնաւոր տարրերութիւն): Թա՛ մարդիկ, թա՛ կնանիք առողջ, պաւարտ, օժաւ, ըշխտասէր, ծնտրախօս, պտուական են. ձեներն ոչ շատ հաստ են, ոչ էլ բարակ: Առի էրկեան մարդոց, կնանոց բոյերն էրկու խանի գեազայ մին խըրեկ իւիլ են, առի կրճերինն էլ՝ գերզըկէս:

Կուսապատն օնի լէաւ հանդեր, լէաւ տափեր, լէաւ խուտահարը, ծմակներ: Փղոփուրդը հնդերումը վարում ա ցորեն, գեարի, գերոնանի, գերոնըգեարի, հաճար, կունատ, սորեկ, կորեկ, բենքակ, լոբի, բեկլայ, խաշխաշ, հիւեռնը, սիսեռնը, սապէ Կնընշեղան էլ վարում ա կուտեմնը, գինձ, սաւզի, սամիթ, թարխուն, ոեհան, սուսամբար, նախշունսաւզի, նէանա, քեավար, սողան, սիստոր, բեղկ, տակ (ճակնտեղ) գեազար, (ստեպղին):

Հնդերումն էլ իւրանը իւրանց բմնում են ուտելի կնչեղան փիրփետ, խնջող, շրիշ-խնջող, երզնըճակատ, պուտապորտ, ուտմտիտեմ, տտըպաշար, թարթանիջուկ, սմնդիւկ, ձներակ, սոնկնը, կապար, շախկամ, բեխի, տանդէօննը, գինազոխ, շուշան: Զրերին ձորերումն էլ բսնում են կնձմընձիւկ, ճըռճուկ, զրլկուտեմ, դաղակ: Ծմակներումն

էլ խազազ, կոըմզուկ, ծմզկթափան, զիշ:

Ծմակներումն ինում են պտղատու ծառեր—ճըռ-տանձի, ճըռ-խնձորի, ճըռ-տկողնի, ճըռ-գկափի, ճըռ-շորի, հիւնի, ճզպրի, ծտը-տանձի, մուխրը-տանձի, բոշնի, սղնի, լկըթնի: Օրիշ ծառեր էլ կաղնի, չը-կաղնի, հճարկի, հացի, տխկի, թեղի, լուռնի, լնըտրեկի, կոըզնենի, բեխի, գենի (գի), ճըղանի, պճըտրտի, ճապկի, բէանտի, ըրջըխնդեղնի, կիչի, շմշոփի (տօսախի): Հնդերումն էլ ինում են (թուփեր) հումառի, գելըրմասրի, էւկի (աւելի), թբղի, դիւկըգոնի, սմազի, կծուփրի, մոշի, ըղկը-սաքոլ (տատասկի):

Ծմակներումը, սրերումը, հնդերումն էլ ինում են սրսի հալալ ընասուն (սուրբ կենդանի) պախրայ, գերխտար, քօշ, բրէծ, վրնի խող, ըլըբաստրակ: Հալալ հաւքեր էլ մրհաւ, կաքե, թուրաջ, սալամնը, լէօր, տոօն, երզոնիկ, տետրակ, մշհաւ, թորազա, ծետ, շածետ:

Ինում են գեազաններ էլ—ասլան (հազուազիւտ), փալէանկ, զափլան, լիւսեմնը, արջ, գիւլ, դէալա, աղուէս, չաղալ, գշերի, զարադուլազ: Հարամ հաւքեր էլ—դուզուն, զարազուշ, անդ, լաշին, չղան, չրթընազեռդ, թաւար-դուշ, զզըլ-զուշ, դիրդի, լելակ, քամիքունող, զիւլ-ագուե, ագուե, կշեղակ, սւաքաշ, տուլաշ, բայզուշ, չարտ, նրկարար, եռապուպ, կու, կուկու, ծուլկուտկուտ, զոգուն, բիւրիւլ, լծի, բարաճրտ, չփըրծակի, ալակոչկոմ, զըրպատպատ և օրիշ շատ պիծի պիծի, նախշուն նախշուն անհամբրանիք (անժիւ) հաւքեր, որ գեարունիրին ծըլըլում

են, աման մինը իւրան ձենաւը, իւրան հանգաւը։  
Ամմա ըսդրանց անունները իսկի զիտող չի կայ։

Ինում են փրսող գինացող սողուն էլ—օձ, լոկ, քրըթանթուուշ, կտըւհատուկ, խեզնը, մոկնը, կարիճ, բէօվ, կովնի, անախաթուն, ոսկապղոճ, թրթոր, կրմրոկ, ոժիս և էլ օրիշ անհամբրանք պիծի պիծի պղոճներ։ Հաւքի մնան թռչող—ճիճի, մորեխ, թըթրմաղի, ըստծուեղնը (ունի գլխին մի եղջիւր), ըստծուկով, փնթեռնը, մղրաճանճ, չնաճանճ, կանանչճանճ, սւաճանճ, բեռնը, գոռան, մոծակ, մլակ, ճխարակ, կետ (որթերը փախցնող ճանճ)։

Քետերումն էլ ինում են կարմբաձուկ, սևաձուկ, բեղլու, կորա (կրիայ), գեորզնուկ, կարիճ (խաշափար), ջրաշոն (միայն Թարթառ գետում) ձկնեղկուկի, սիպտակ-հաւք (ձկնասէր սպիտակ թռչուն)։

Բղերումը, հնդերումը, ծմակներումն ինում են ինքն իւրան բսած շատ ծաղիկներ—վարդ, միխակ, մնեշակ, զրափարդ, ծմըկավարդ, նարկիզ, ալակիզ, խնձաղայ, խոռնը, և էլ օրիշ անհամբրանք ծաղիկներ։ Ուտելու մնար էլ բենջար, կրմըրբենջար, թալուկ։ Կլերին կշտերըն էլ բսնում են խինդեղնը, կոռթնը, պլանուկ, բէանկի, սիբեղնը, մտիտեղնը, կածուկ, իշըկաթնուկ, կիւլմհայի ծառիկ։

Ախր ես որ մինը գերըեմ, որ մինը թողեմ։ Թա որ գերըում ես, ասում են. «Էրկեան ա գերար, թա որ գերըում չես, ասում են. «Կարճ ա գերպար»։ Ղըըրաղումս էլ ոչ ծոաքան կայ, ոչ ծոկաքան, ոչ գեղզնաքան, ոչ հւքաքան, ոչ ժընկաքան, ոչ էլ ընջրաքան, որ Կալպատայ հնդերում,

ծմակներում իլածը, չիլածը գերըեն լիւս աշխարհ քցեն։

Կալպատումը հենց համփա (ունեոր) տոն կայ որ օնի 20 կթի կով, 20 որթ, 15 կթի գիւմշակով, 15 մողի, 20 լծկան եղնը, 10 լծկան զիւմաշ, 25 աջառ, 25 հերինջ, 500 ոխճար, 400 զեառնը, 15 էծ, 10 հէօլ, մին քանի էլ ձի։ Հենց տոն կայ, որ մինակ մին տանայ զիւթան ա բնըցնում իւրան մճկալաւն ու հօտաղներաւ, աման հնչաւ, իւրան տանան պտկուած (գոյացած)։ Ժղովուրդը լէաւ ապրում ա, իւրան որերը լիրը ցորնաւ, գեարաւ, գերոնաւ, կորկաւ, ամբարները լիրը ալրաւ, խարարները լիրը լորաւ, չուաները լիրը բրնձաւ, մաշաւ, քսակները, պարկերը տոպրակները խշխաշաւ, բըկլաւ, մոթալները լիրը պանրաւ, օչնակները, պուլիկները՝ եղաւ, ձէթաւ, կարասները, բոցիները, պօճկէրը, կուպրուններն էլ ըրապաւ։

Քղաքի մնան չի, որ մին լաւաշը եա մին պռող հացը դնակաւ կտորեն, 40 կտոր անեն, մին տլերքաւ բերեն, ըլաջիդ դնեն, հանցու որ աչքիդ շատ ըրեայ, հմանչեն, խրեք օտես։ Աստուծ օրհնի գեղը. մին հրսանիք, մին կնոնիք, մին ժմահաց իլած ժմանակ մարդ գլուխ էրկու լաւաշ են դնում սուփրին երբայ։ Լաւաշ հաց եմ ասում, մինը մին զեազ էրկեանք օնի, կէս զեազ լէնք, ձիւնի մնան սիպտակ, բմբակի մնան էլ կակնւզ։ Սուփրին երբայ էլ տեղ կիւտում են մին մին խտետ լաւաշ։ Իրեր օրաւ սոված մնացած մարդին ծակ աշքն էլ որ տես-

նում չի, էն սհաթումը կշտանում ա: Քղաքի մնան չի, որ արագը մին օդտի աչք ոռոմկաւ տան քեզ, որ, փորդ շհասած, կէս հցում մնայ, որ, գետի չի հասնող, ցմաքող ջրի մնան փորիդ ու պկիդ մէջ տեղը ցմաքի: Քղաքի մնան չի, որ գինին մի պիծի շիւշաւ բերին, կշտիդ դնեն մին պիծի ստըրանաւ, ոչ աչք մին բէան տեսնայ, ոչ էլ փորդ: Արալը մեծ շիւշաւ կը բերեն, գինու ստըրանաւ կը տան: Դինին էլ սուրահաւ եա մին մեծ ճուռնիկաւ կը բերեն մին մեծ թասաւ, կշտիդ դնեն: Ըուաջիդ կը շարեն եա լաւաշ եա 15 ուրական լիւննկի մնան բիւրոր, թոշին մինը կարմուր, էն մինն էլ սիպտակ պուղ հաց, եղը կժկըթելիս պանիր, մին քանի տեսակ էլ օրիշ-մածուն, զայմաղ, թանաւ, կաթնաւ և էլ օրիշ կերակուր:

Կորպատայ համփա տներան մինն ա չիւմնունց Գէ-որդ-քեռվիսին տոնն: Գէորդ-քեռվիսան զոնաղ սիրող, դարիփ սիրող, գինացող, եկող սիրող մին լէաւ մարդ ա: Ճանանչ, անճանանչ, մեծ, պիծի հու որ իրես ա դնում, իւրան շնմքաւը նի մտնում, մին բէան խնդրում, օնկերը իւրիւր չի տամ, մրկցնում, իրեսը պրանում չի, տանան դէարտակ ետ չի տամ. իւրան տան մէջ գտնուածաւը խնդիրը կտարում ա, օրախ օրախ հղի դնում: Ինըն էլ շատ ուրախանում ա, Ըստծու փառք տալիս, որ կարաց էն օրումը մին բարի բէան անիլ, մին մարդի նեղ օրին հանիլ, իւրան տանան օրախ օրախ հղի դնիլ:

Գէորդ-քեռվիսիս աղջիկն ա Անան, որ մունք տեսանիք հայ քոչին մէջ, սար գինալիս: Անան մէշակ

բոյաւ, սկ սկ, էրկեան էրկեան ծմերաւ, բիւկոր գըլ-խաւ, պարզ ճկատաւ, թուս թուս ունքերաւ, մեծ մեծ լշքերաւ, սոր սոր (սուր սուր) թերթերունքներաւ, կարմուր կարմուր, լիքը լիքը թշերաւ, պիծի բրանաւ, ոչ հաստ, ոչ բարակ մէշքաւ, պենդ կըզմուածքաւ, 16 տրըկանայ իւիլ, 17-այ էլ պակաս մին աղջիկ ա: Անան ծնտրախօս, աբուռլու, հայալու, խոնարհ, հնազանդ, հմանչկոտ, բնոթիւնաւ ծանտր, շէնքաւ չնորհքաւ աղջիկ ա: Իւրան հօրը, իւրան մօրը չերիքնաղին, իւրան աղբօրցը չարապետին, նիկալային, Դաւութին, Աղաջանին, իւրան ըղբրկնանոց, հընկեր, հրուանի, մեծի, պծինի պատելը, յարգանքը իմացող, պահող ա: Անան շատ ըշխըտաւոր ա, տնարար, խելունք, ըղցրախօս ա, ասես թա Անուն բնոթիւնան (բնաւորութիւնից) ծլծլամ ա շէնք ու չնորհք, լիւզուան ծորում ա մեղքի ծոր, սրտան էլ անկեղծութիւն: Ըսդրա մհար իւրան հերը, մերն ու աղբերքը Անուն ըրևան են որդիմն օտում (երգուում):



Հենց հմարի թա Կորպատայ համփա տներան մինն էլ Պտրուսանց Գեղլուստի տղայ Զէաքեարի տոնն ա: Զէաքեարիս որդին ա Սարգիսը, որ Անուն հետ սար էր գինամ: Զօրան Սարգիսն էլ մին մէշակ բնյաւ, միջակ մէշքաւ, լին թըկիւնքաւ, լին լանջաւ, մէշակ գլխաւ, սկ սաթ մզերաւ, պարզ ճկատաւ, բարակ ունքերաւ, նախշուն նախշուն լշքերաւ, սիպտակ ու կարմուր խառն թշերաւ, էրկեան ու դաշէանկ բրերաւ, պենդ կղմուածքաւ, 24 տրեկան մին տղամարդ ա: Սարգիսը լէաւ շոփ ածող, լէաւ

խաղ ասող ա, ձենն էլ քաղցր ա: Սրգիսին լողիւնը, խոնարհոթիւնը, բնսթիւնը Աստուծ ա զովալ, գեղրալ, հաւան կացալ, գեղրիլլ օդիլ չի:

Հայ քոշը Թարթառ գետի Սրամնկի կրմունչաւը հնցաւ, վոր եկը գետին էն կիւսին:

Գ.

Հունց որ մին ծառի մէջը մին զեռ գերան ա, ամմա տակովներն ու ճղները հմբրանքաւ շատ, էսա ըսդհենց ա Թարթառ գետն էլ: Պատճառն որ մէջ տեղը մին մեծ գետ ա, ամմա ակներն ու արխերը հմբռանքաւ շատ են. մին քանի օժաւ գետեր գետալիս են, մինմնու խառնուում, շինում Թարթառ գետը: Թրթառայ ակները բղխում են Սւանայ ծովի արեկեան սրերի լանջերան—Լեայ, Ըոմբի, Ծարի, Քեալուաշարի, Ըոզըձորի սրերի քամակներան, Մըռաւ սարի հարաւային, արեկեան լանջերան, ետաւ վազում դը պի Քեռու գետը: Թորաղա կամ Թրղին էլ բղխում ա Մոաւ սարի երի կիւսան, վազում ժեռ քերծերի, խոր ու մութ մութ ձուրերի մէջաւ, էլլիս խառնուում Թրթառին Զրըբերդայ զիին քերծին կշտաւը: Աղբիւրները մինմնու խառնուելաւ շինում են պիծի պիծի, մեծ մեծ գետեր, ըսդրանք էլ մինմնու խառնուելաւ շինում են Թարթառ զեռ գետը: Թարթառը իւրան երի կիւսան չուրու Պուաւի կարմունչը զժժով ա վազում, ամմա կրմունչաս չուրու Քեռու գետը մըլսրեկ խաղաղ: Թարթառը դը երան չուրու կարմունչս իւրան տակի սալ քարերը քանդալ ա, տարալ. մեծ, խոր ձոր շինալ, տեղ տեղ

նուեր ա շինալ, տեղ տեղ տաշտեր, տեղ տեղ տաշտակներ, տեղ տեղ թորեններ ու կիւչեր, տեղ տեղ էլ շոռթկաններ ու շոշուաններ, ըսդրա մհար վըշվամ ա, շոշուամ, թշթշամ, մոմուամ ու փրփրում:

Հենց հմարի թա Թարթառն ալմաս ա վազում, ոսկի ա վազում, արծաթ ու խազնա ա վազում, պատճառն որ էս գետի աջ ու ձախ կողմերի երայ դիւս են բերալ շատ արխեր: Ամմա հինչ արխեր, հինչ արխեր. ամման մին արխ բնցնում ա չորս ջաղաց, մին ջրատինկի: Էս ըրխերի ջրերաւն են ջրուում Զրըբերդայ ու Զուանչիլի մհալների ցորնի, գեարու, կորկի արտերը, վլթուկի ու բմբակի լաքերը, թնակի, տանձի, խնձորի, թթի բազերը, խյարի, ձմրուկի, եմչի, բազմջանի բուտանները: Էս ըրխերի ջրերաւն են շոռ տամ ջաղացները, տինկերը, մանջըլզները, խմում մարդ, ընասուն: Հունց որ նեղոս գետն ա Մորի հրաստոթիւնը, ըսդինց էլ Թարթառը՝ Զըրբաղին:

Թրթառայ վիասն էլ ա շատ: Աստուծ հեռի տանի վրարած ժմանակ Թրթառայ իրեսը՝ տեսնաս ոչ էւալ ա, քանց տեսնաս. պատճառն որ վըրարած ժմանակ հենց ա ինում լիա մին կտաղած, անկուտումնը ասլան ինի, հինչ որ ռեխն ա ընկնում, կլուում ա, պտատում, տանում մարդ, ձի, գեռումաշ, տաւար, արաբա լոխ էլ քում ա, սպանում: Է՞ն ծառերն ա տկուկապուք անում, քշում, որ շուան պատ չի կեալ. Է՞ն զեռ քարերն ա տղըհան անում, մինմնու թըլսկ-թըլսկիցնելաւ տանում, որ շըլսկոց ասմանն ա հսնում, վըշ-վըշոցը մարդ ա



բռըցնում: Ընդենց տարի ա ինում, որ մայիս ամսում շերթաւ Թարթառը անց չի տամ մարդոց եադէս հնցնել եա դէն: Թա որ էն ըրխերի ջրերը լոխ էլ գետաւը գինալիս ինեն, իսկի չի անց տալ Թարթառը, էն ժմանակ պէտում ա կեամաւ հնցնիլ:

Մին հայ աշուղ թուրքերէն լիւզուաւ մին խաղ (երգ) ա կապալ Թարթառայ եըրայ: Էն խաղան էրկու շարք գելքում եմ ըս տեղ:

«Բու Թարթառ նաշի Թարթառ,  
Զայլարն բաշը Թարթառ.  
Արագինան մուսայիպ,  
Քեռուն եօլգաշը Թարթառ.  
Իւզ իւզ ալթմշ ալթը արխն անասի  
Կենա կոչա Թարթառ<sup>1)</sup>»:

Թրթառայ ջիւրը համ քաղցր ա համ էլ մրսական, ամմա ապրիլ, մայիս, յունիս ամիսներում էլ իւիլ ողտոր ա ինում:

¶.

Վեց ամիս թանձր ձիւնի սիստակ եօրդանի տակ էրկեան քոն իլած ծառերը, խստերը, ծաղիկ-

<sup>1)</sup> Այս է հայ մատենագիրներից Տրտու կամ Դըլուտական կոչուած գետն: Խոկ երգի իմաստն է, Թարթառ, գու մեծութեամբ՝ գետերի գլխաւորն ես, բարեկամ երասխն և ընկեր Կուր գետին, նաշանջ տարուայ օրերի թուով՝ գու մայր ես 366 առուների, ծերունի Թարթառ: Յանկալի էր գնել այստեղ ամբողջ երգը, բայց դժբախտաբար անկարելի եղաւ ձեռք բերել:

Ները զիսդթնացալ ին գեարսւնքուայ ըրիգնակի տըրթիւնան (տարութիւնից). մեռած տղերան կնդընացալ, Ղաղարոսի մնան յարութիւն առալ Հստծու հրամանաւը: Աման տեղ աման հինչ ծլալ էր, տրեւալ, ծաղկալ, կնանչալ, բացուալ: Աման տեղ ըրսում էր կեանք, սէր, ուրխութիւն, աղօթք, օխնանք, փառք: Տափան բձրացալ էր իրեք մատի չափ կանանչ կոյս<sup>1)</sup> խոտը. բացուալ ին կարմուր, գեղին, ալ, կանանչ, ապի, ժանգետոփ, լազգերտի, միխակի, սիւրմէյի ռանգեաւ ծաղիկներ, մասրի վարդեր, ծուրի ծաղիկներ հզար ու մին տեսակ տեսքաւ, էնչանք սէրուն, էնչանք սէրուն, որ Փուանկրստանի նրկարարներն էլ կարալ չեն թա ընդհենց սէրուն ներկնեն: Հս կիւսաս, ըդ կիւսան, ըն կիւսան քերամ են, քչքամ, պլթպլթամ, վլփլպամ, շոշում աղբիւրներ, վազում դպի Թարթառը, դիւ ասես թա ընմբհական ջրեր են: Հզար ու մին տեսակ հաւքեր, թիւրիւրներ կարգում են, ծլվամ, լոք լոք անում, փուփում, թփուեպին անում, բձրանում, քշանում, ուրխութիւն անում, իւրանց ստղծողին փառք տամ, օրհնում, գովում, աման մին հաւք իւրան լիւզուաւը, իւրան հանգաւը (եղանակ), իւրան ձենաւը: Երկինքը մշանք պարզ էր, մշանք պարզ էր, հինց էր իս Բստծու ձեռքաւը գեործած անկար, անսիւն, կետպիւտ շատիր ինէր: Պայծառ ըրգնակի սպատկերը շղչուում էր, շփլզափակ անում պարզ աղբիւրների ջրերի մէջ, ծաղիկներան, խուտերան, տիրիներան

<sup>1)</sup> Կշանակում է՝ որ տակաւին արածուած չէ:

կախ կախ իրած շղերի մէջ, ըսդրանք էլ ըրիգնակի մէջ, Աստուծ էլ լոխին մէջ: Բիւրիւլներին ծլւոցը, աղբիւրներին ըլքոցը, զրերին շոշոոցը, բարակ քամու զլբոցը, տերենների փոփոոցը մինմնու խառնուած, ասես թա աղօթք ին անում: Հենց գիտաս թա Մռաւ սարը Ըստծու տաճարներան մին էր. հենց գիտաս թա մին ըստուծաշէն վանք էր էս սարը. ըսդրանք էլ վանքիս միաբաններն ին, լոխ հւաքուալ ին, կարգում էս վանքումը. իւրանց «Առաւոտ լուսոն» իւրանց շրականը եա սազմուս ըսելաւ օրհնում ին իւրանց Ստեղծողը: Հզար ու մին տեսակ ծաղիկների մինմնու խառնուած ոտն (հոտն) էլ բուրվարի խնկի անուշ ծոխի մնան բձրանում էր էս վանքան դպի երկինք: Հենց գիտաս թա էդ միաբաններն էլ աման վինացող մարդոց կուփի կուփի ընելաւ սում ին. «Այ մարդիկ, դիւք էլ մեզ հետ աղօթք ըրէք, Ըստծու փառք տուէք. դիւք էլ ձեր «Առաւոտ լուսոն» ասէք, դիւք էլ ձեր Ստղողին լոթիւնը գիտացէք»

Մեր հայ քոչն էլ Թթառայ ձախ կողքան քոչեց, ծանտր ծանտր բձրացաւ զը պի Մռաւ սարը, Ըստծու տուած էս բարկը վլյուելաւ՝ հսաւ Խնըգեահաքարասուած տեղը: Աման մարդ ճելլի ըրաւ, բեռները փոր բերաւ, թակն ու քհրավարը եր կալաւ, ըլբճուկի ծպատների տեղերի տափը ծկոտեց բհրսվարաւ, ճպատները տնկոտեց, պտոկները մինմնու բերաւ, դազիլ թլերաւ կպոտեց ճպատների պտոկները, չաթանի տեղը փոր կալաւ, ըլբճուկի մարդ ճելլի ըրաւ, բեռները չորս կիւտերում ին ըրածում մօտի տղերում. պատճառն որ արօտը դեռ հուացալ չէր, դեռ սարի կոյս խոտը շատ էր ըլբճուկների մօտեքում: Ընասունները մշմշալի, փշփշալի, խշխշալի ըրածում ին: Զտես մարդը, որ տեմնում չի էն պիծի պիծի նախշուն նախշուն—սիպտակ, ոև, շմլուտիկ գեառներն ըրըծելիս, էլ սրտան տամ չի թա հոանայ:

Ներաւ ծածկեց ճպատներին գլոխը: Հիւմունց ու Պտրուսանց ըլաճուկներն էլ վոր թողեցին մինմնու կշտի, պատճառն որ շատ սէրաւ ին կնանիքը: Հունց որ աման կնէկ, աման աղջիկ, ըսդհենց էլ Անան սկսեց տղստեղ տղուարել տնամէջը. առաջ մին քանի քար բերաւ, շարեց ըլբճուկի երի կողմաւը, քարերին երրայ սաք սաք դարսեց եօրդան, բարձ, դեօշակ, ըսդրանց ըրեսամն էլ ծածկեց որուկալու նախշուն կարպետը: Պինձէղանն էլ—դազանները, կլթէնները, բաղեանները, լակեանները, քափկիրը, սինինները կոթաւորը և ամանները, տախտի էս կողմում, փտէղանն էլ—տաշտ, խնեցի, թէակնա, կիւշ, շիրեփի, գլէէօլ, ըսդրանց եըրայ էլ ծածկեց նախշուն մզարաւ՝ տախտին էն մին կողմումը: Ալրի չուալները, մափուաշները, խուրջինները, չուաները, բրնձի ու կուրկուտի պարկերը, տոպրակները, չաթուններն էլ տղուարեց ամանների կշտին: Օշնակ, պովիկ, կմոճ, քոցի տղուարեց աման մինը իւրանց սպական տեղում. ետաւ կոժը եր կալաւ ըզբրան շզբթաթախ լցրուց, բերաւ ըլաճուկը:

Հենց հմարի թա մին քանի օր տաւար, սիճար, գեռումաշ, որթ, մողի, ձի, զորի, էշ օրոց (վրանների) չորս կիւտերումն ին ըրածում մօտի տղերում. պատճառն որ արօտը դեռ հուացալ չէր, դեռ սարի կոյս խոտը շատ էր ըլբճուկների մօտեքում: Ընասունները մշմշալի, փշփշալի, խշխշալի ըրածում ին: Զտես մարդը, որ տեմնում չի էն պիծի պիծի նախշուն նախշուն—սիպտակ, ոև, շմլուտիկ գեառներն ըրըծելիս, էլ սրտան տամ չի թա հոանայ:

մարդ ասում ա ինքն իւրան. «Օտեմ ոչ, խմեմ ոչ,  
հռանամ ոչ, էրկու աչք էլ փոխ օնում, չուրու  
պենդ մթնիւր ի՞ա թմաշա անեմ»։ Զօրաններն էլ  
մօտ տեղ նստած շուի ին ածում։ Սարգիսն էլ եա-  
փնջն շոռ կալած, թիւանկը օսան կախած, շուին  
էլ կողքան, նստեց կանանչ խոտին երայ, հիւնի  
չոմաղը դրաւ կշտին, կօթան հանեց շուին, մին քա-  
նի հանգ ածեց, մին քանի հետ էլ խաղ կանչեց,  
ուրիսացաւ, ուրիսուցրուց, ձենը գցեց սար ու ձոր։  
Անան էլ ըլըճուկին մղակումը նստած անջուկ էր օ-  
նում, ուրիսանում, սրտումն ու մտրում ազօթք ա-  
նում, բստծու փառք տալիս, ուրիսութիւնան օղում  
էր թա թև անի, թռչի։

Հու որ օղում ա, չուրանի թատրոն տեսնայ,  
լէաւ կ'անի, որ գեայ ըս տեղ, թմաշան տեսնայ,  
թմաշան եմ ասում, որ Փոանկստանումն էլ հատը  
գտնուիլ չի. թմաշան առանց փողի ա։ Կերած, կշտա-  
ցած ապրանքները մինմնու հետ հոլ են բռնում։  
Գեումաշները մինմնու հետ են հոլ կենում, կեռ կեռ  
պօգերը պուղերի տուած, ճակատ՝ ճկատի, զլոխ  
զլիսի, մինմնու ընդհե՞նց տրըցնում են, ընդհե՞նց  
տրըցնում են, որ թրըխկոյն ասմէան (եթեր) ա  
հնում։ Հոլ բռնողներան ամման մին՝ կզնուած, կտա-  
գած, ըշխատում ա, որ եաղթի հընկերին։ Հաւան  
զլիսին տուած, պլացած քեալան պղպղամ ա, վեղը  
ազ կճղակներաւ քանդում, զլիսաւը շպրտոտում, զլո-  
խը ցխըփալալ անում, աչքերը կրմոտած, հագին  
ցցած, պկին թոփիր կեառ կեառ տնկած, վազ վազ  
անում, մին օրիշ քեալա գտնում, զժժըտակած ընտ-

րա ելրայ ծունթում, հոլ բռնում, որ եաղթի։ Հա-  
ւալու դոչերը վարվեռ զինամ են, գինամ, որ զժժը-  
տակած զիւլի մնան զեալիս, հորած պուղերաւ  
կատար կտարի շեկում, ասես թա կիրկիժը ցրե  
եկը, ըրկուքանան մինին հղողը շաղ եկը։ Են սու-  
տանայ էրքաջ էծերն էլ, կճիպները ցեց կալած,  
մրօնները դըմբդըմբցնելաւ, ծարս ծարս են ինում,  
կիրկիժ կելրկիժի շրըխկացնում, կռուում, զոկուում,  
քրերին գլխին քեանգիրքազի պար զեամ։ Հէօլերը,  
ին ստունի ճոտ հէօլերն էլ խելունկը չեն կենում, էլ  
օյինպազութիւն չի մնամ, որ անեն ոչ, էլ մէյմունի  
հանգ չի մնամ, որ պար չի զեան։ Մինակ պիծի  
պիծի զեառները խելունկը են, հենց սէրճն արուճ  
են անում, հենց սէրճն արուճ են անում, որ մարդ  
ելշկան կշտանում չի։ Պիծի պիծի որթերն լոր լոր  
են անում, դէս ու դէս զժժըտակած վազ վազ ա-  
նում, տրտըկի տամ, կետում։ Զիանքը խրինջամ են,  
հոհոամ, փոռացնում, ոտքերը տափը պրանում,  
մինմնու բաշայ բռնում, կրծկործում, ծարս ծարս  
ինում, ետաւ մինմնու ճկատին, ըթին, լանջին  
շուխտըլափակ ընդհե՞նց շեկում, ընդհե՞նց շեկում,  
ասես թա էն մին ձիանը լըփըկերերը փորը թա-  
փից, կիրկիժը ցրե տուաւ։ Ամմա խսկի մին վնաս  
չի ինում։ Խեղճ էշերին անումն ա կոտրուած, փիս  
եր իլած, ամմա էշերին սէրին մնան աննման սէր  
Ամիրիկայումն էլ, Համազանումն էլ խսկի գտնուիլ  
չի։ Հե՞նց սէր են անում, հե՞նց սէր են անում, որ  
ասուիլ չի զեալ։ Բցւըձախ ոտ են կենում, մինմնու  
բաշը կծում, կրծկործում, հոհոամ, թող թող ի-

նում, խնդրուզի տամ, էլլիա ծարս ծարս ինում, մինմնու ընջուկայ, պկայ բռնում, եալի տամ, ետաւ կնդապար, առի վորկալին էլ ձիրազ բայաթին եր օնում:

Ապրանքները, աման օր ըսդի Զին-Մաշինի մին թատրոն սրբելան ետը, էլլիա սկսում են ըրածիլ, պատճառն որ թատրոնի օյինապազութիւնը մարսեցնում ա իւրանց կերածը:

Սարաս մօտի գեղերում, չէներքում էլ մէջը ջդով (վիրաւորեալ) ձի չի մնամ, էլ սովակը եարու, քոսոտ ջորի, մեխաւ ընկած թոփալ կաղլիկ էշ չի մնամ, էլ լլար, անկի դէառած պառաւ կով, գեռումաշ չի մնամ. էլ, ընկած տեղան չուանաւ օժաւ երկալած, գոռաւ գեարունքհան ըրած թրքոտ եզնը, գեռումաշ չի մնամ, լոխ էլ դժբթիւնաւ բերում են ըս տեղ, չուրու սարաս վոր գեալը օտում են Հնտծու տուած խոտան, էլլիա եըլլրկալում:

Ե.

Ժ. Ը.

Մին ըրմնալի՛, զրմնալի՛ բէան: — Աման տաւար, գեռումաշ, ձի, էշ հմնաց ա ճնանչում իւրան տէրնը ըլաճուկը, աման ըրիւկիւն (երեկոյ) թուշ գեալիս ա, ոտը կենում իւրան տէրնը ըլըճուկին ըռացին: Պատճառն որ ըլաճուկները աման ժմանակ մին տեղ չեն մնամ. գեղերան չուրու սար հմնիլը շատ տեղեր են փոխուում քոչի հետ: Հսդրանայ կըման հիպու որ մին տեղի ըրըծելի խոտը հուանում ա, փոխուում են օրիշ տեղ: — չիպու որ ըրկիւնան

ապրանքը գեալիս ա նոր վորթողած, վերջի շինած ըլաճուկը, նախիրը մուտացած ժմանակ, կթի կովերը, գեռումշըկովերը սկսում են մինմնու հետայ բռանչիլ, տռնկալ. որթերը, մողիներն էլ իւրանց կապոտուած տեղերիցն են սկսում բռանչիլ, տռնկալ. մերերը էն սհաթումը ճնանչում են իւրանց որթերին, մողիներին ձեները, թուշ գինամ ձեներին երայ: Հսդրանց հետան էլ կարգաւ գինամեն հերինչ, աջառ, ձի ու էշ, ոտը կենում իւրանց տէրնը դրանը:

Կթի կով, գիւշակով ըրկիւնանց եա իգնըրուտան (այգարօտ) կործերը չարխած, կաթնաւ լիքը ետ են դէառնում: Որթերը, մողիները իւրանց մերերը որ տեսնում չեն (երբ տեսնում են իւրեանց մայրերը) ուրախանում են, լոք լոք անում, չաթունները ձիգ ձիգ անում, բիհրերին չորս կողմաւը շուտու շուտու անում, օժաւ քաշ քաշ անում կապերը, որ բիհրերը պուք տան, իւրանց մօրանց կալմնը ծծեն: Ամմա հիպու որ կարում չեն, որ պուք տան, բռունչբառնեշ են գեամ (յաճախակի բառանչում են), ագիները պուլի բուլի անում: Կովերը, գեռումշը կովերն էլ մուտանում են իւրանց խոխորցը, լիւզ տամ ընդրանց ճակատները, պոկերը, կոլին տակերը, մէջքերը, կողքերը, տունդերը, հենց շինում, դիւ ասես ինկիզի հարսնի զաշանկ սանդրած գոխ ինի: Էսա ըսդի լիւզ տալաւ, պչպշչուրելաւ մերերը զըրդարում են իւրանց ըրախորցը աման տեղերը: Որթերը, մողիներն էլ խելունք ոտ են կենում, վյելում (վայելում) իւրանց մօրանց սէրը, գութը, խնամքը:

Ամմա մզամեր<sup>1)</sup> որթերը եշում չեն իւրանց մօրանցը  
լիւդ տալին ու սէլին, օժաւ քաշում են, պուր տամ  
բիհրը, ծծում իւրանց մօր կաթը:

Հունց որ աման կնեկ, աման հարսնը, աման  
աղջիկ մին ըրխւկինը, մին էլ իվնըրուտան եկած  
ժմանակ կթում են կովերը, գեռմշակովները, ըսդ-  
հենց էլ Անան: Անան զաշէանկ կապում էր նախշուն  
գոգնոցը, եր քաշում թեքերքը, եր օնում կթեշը,  
սկսում կթել կովերը: Առաջ որթը եա մողին մին  
խրեկ ծծնում էր իւրան մօր կաթնը, ետաւ ետ  
քաշում, կապում մօր-կովին—ըռաջի ոններան, ետաւ  
կթում: Մին կովը կթելան, պըճնելան ետը—քան-  
դում ա որթին կապը, որ ծծի ծծերում մնացած  
իւրան բեժին կաթը: Հիպու որ ըսդհենց կթելաւ  
պըճնում ա կովերը, ընդրա ետը (յետ այնորիկ) կը-  
թում ա գեռմշակովները, ամմա առաջ էրկու ծծե-  
րի կաթնը կթում ա, ետաւ էլ էն մին էրկու ծծե-  
րի կաթնը:

Որթը ստակած եա զիւլ կերած կովին տակը  
քցում են մին գեառնը: Էն կովերը, որ գեառները  
ընդունում են, եր են օնում էն գեառները իւրանց  
որթերի տեղ, սիրում են, կաթն են տալիս. Էն կո-  
վերը, որ չեն ընդունում գեառները, իւրանց ստա-  
կած եա զիւլի կերած որթերի կաշիները մաշկում  
են, չուրուցնում, մէջերքը չոր խոտ լցնում, կթելու

1) Տեղական բարբառով մզամեր են կոչուում եր-  
կու տարեկան որթերն, որոց մայրերն չյղանալու պատ-  
ճառաւ կաթ են տալիս և երկրորդ տարում:

Ժմանակ մին խրեկ նարին աղ շաղ տամ կաշիների  
երրայ, դնում կովերի առաջ: Կովերը ճնանչում են  
իւրանց որթերի կաշիները, լիւդ են տամ աղը, ըսդ-  
հենց կթում են:

Պել կովեր, խամ հերինչներ էլ կան, տուած  
կաթնը քացի տուող, թափող կովեր էլ կան: Ըսդ-  
րանք կթիլը աման կնկան, հարսնի, ըղջկան թէան  
չի, ուստա կնկան, հարսնի, ըղջկան թէան ա: Ըսդ-  
հենց կովերը կթող ուստա կնանիք, հարսներ,  
ըղջկէք բարակ ձենաւ կովերի անունները տա-  
լաւ համուղ համուղ կանչում են:

«Նոռնիկ, նոռնիկ, նանամ նանամ,

Ճամամ, Ճամամ, նանամ նանամ,

Ճաղիկ, Ճաղիկ, պիթում պիթում,

Խուրմա, Խուրմա պիթում պիթում»:

Գեարունքին տաւանները աղ շատ են սիրում.  
Անան պել կովերը, հերինչները աղ տալաւ էր կր-  
թում. աղի կոռճը դնում էր ընդրանց ըռաջին, լիւդ  
ին տամ, ինքն էլ կթում էր:

Կաթները՝ կթելան ետը լցնում են չարխի դըզ-  
դամների մէջ, վառում կրակները, տրցնում, հիպու  
որ մրմանդում ա կաթնը, մերում են (մակարել):  
Ետաւ դշտերում մալում են ցորնի ալիւրը, շդա-  
դում, հունցում, կտորում բիվեր, սաշերը դնում  
կրակներին երրայ, թխում եօխա հաց: Տւարած,  
որթարած լոխ էլ հաքուում են օրերը. չօրաններին  
էլ մին չօրան թողում են ոխճարներին կշտին  
օրոցը մօտ, սիւրուների չորս կողմերումը պահա-  
պան դնում զեռ զեռ չները, իւրանք գեալիս ըլլ-

ճուկերն, որ օտեն լրիկնահացը։ Քցում են սուփրաները, շարում եօխա հաց, պանիր, մածուն, իրես (սեր) կաթնը, թանաւ, կաթնաւ, չուրսըբիւլոր նստում, օտում, կշտանում, Ըստծու փառք տալիս։ Թա որ քղաքի մարդ եա փոանկստանցի էս չօրաններին, տւրծներին չանք օտէր, սարի ցորտ ցորտ ջուրն էլ էնչանք երրայ խմէր, բաքի էն գիշերում մեռնէր եա լիւսին հասնէր ոչ. եա ճարէր եա հաքիմ չի հսնէր։ Ամմա ըսդրանք սվերած են, հինչքան էլ օտում են, մարսում են, հլցնում։

Աման լրիւկին էս օրէքը հենց ա ինում համ հրմնքատոն ինի համ էլ սպատոն։ Լիւմնիկի եա ճրագի լիւսում նստոտում են ըս տեղ, ը տեղ, ըն տեղ մարդ, կնեկ, փեսայ, հարս, տղայ, աղջիկ։ Զօրանները շուկ են ածում, գերոնարածները՝ թիւթէակ, տւարածներն էլ պկոյ։ Որը զոփի ածիւմ, որը զոփի ա պար գեամ։ Որը լազկի ա ածում, որը լազկի ա պար գեամ։ Որը շիքեաստա ա ածում, որը շիքեաստա ա կանչում։ Որը բայաթի շիրազ ա ածում, որ էս հանգաւ խաղ ասում, որը մուլիսամնազ՝ ածում, որը մուլիսամնազ՝ ասում, որը պար ա գեամ, որը ծափ տամ, որը կըկի մնան սուլուլ ա տամ, որը շրթմա թխում, որը ուրխանում ա, որը տրտմում։ Որը ծծաղում, որը լաց ինում, որը ջնջորում ա, որը մտածում, որը ախ ա քաշում, որը թառանչ, որը ուրխութիւնան թև ա անում թա թռչի, որին գլխին էլ աշխարհս սկ ա մթնում։ Էլ որ մինը ասեմ, որ մինը չասեմ, որ մինը գելրեմ, որ մինը թողեմ։ Մերտն, որ կայ, հենց ա լա մին մթեն, խոր

կարան (քարայր) ինի։ Հնու կը կարայ գիտայ թա էն խոր, մթեն, խւարաւ ծածկուած կրանում հինչ տեսակ ասլան կայ մրափած, քանի տեսակ գեաղան կայ մրցիկելիս։ Հունց որ թիւանկին ձենը, գիւլին տրաքոցը զիւրթնցնում ա կարաններում մրափած գեաղանները, ըսդենց էլ զուռնա, քեամանչա, թառու սազ, սանթուռ ու շուի, թիւթէակ ու պկոյ զիւրթնցնում են մարդոց սրտերի կարաններում քոն իւլած եա մրափած ուրխութիւն, տրտմոթիւն, ծիծաղ, լէաց, սէր, ցաւ, պար, ըրտասունք։ Պիծինները, որ հոգ չօնեն, մտածմունք չօնեն, ծափ են տամ, պար գիտմ։ Ջահիլ տղէք ու ըղզկէք, որ եա նշանուած են եա ըզըրգրած տեղ օնեն, էլ իւիլ էշխաւ ածում են, կանչում, պար գեամ։ Մին տարան եա էրկու տարան պսակուած փմէքն ու հարսները, որ ըրկիւնանց ըրիւկին են մինմնու իրես տեսնում, ուրխութիւն են անում, խաղ ասում, պար գեամ։ Մէջ մարդ, մէջ կնեկ, հլիւոր, պառաւ իւրանց մետքն են բերում իւրանց մեռած տղէքն ու ըղզկէքը, թոռներըն ու ըզգականները, ախ քաշում, տրտմում, քաշում մին անկիւն, մինակ թաքուն ջնջորում, լաց ինում։

Մինն ասում ա լաց ինիլաւ ինքն իւրան։ «Ա՛խ, ըներակ (երանի՛) հնցած տարի ըս օրին, իմ սրտի սիւն Մէքին սաղ էր. ամմա մհեկ մեռած ա»։

Էն մինը՝ ըրտասունքերը սելի մնան շւշոցնելաւ ասում ա, «Ջոխտ աշքս մին բիւնաւ զիւս պլծնի, Սայէ՛, մեկալ տարին սաղ էր, էս չօրաններին հետ շուէ էր ածում»....:

**Մեկալը.** «Քար կտրուեմ, չուրանամ, Վարդի՛,  
չորս ամիս ըսդրանայ առաջ էս ըզգկոց հետ բիւրդ  
իր գեղում, մհեկ էլ ըրեսում չես քո հընկրո-  
տանց հետ»:

**Մեկսալը** (միւսն). «Զոխտ աչքաւ քուռանամ,  
Գիւղի՛, էրկու տարի առաջ թիւթէակ էր ածում էս  
գեղունարածների հետ։ Աչքերս էլ տեսնում չեն քու  
էդ շումալ բօյը, անջուկներս էլ լսում չեն քու հրեշ-  
տակի ձե՞նը, քու թիւթէակի հանգերը»։

**Մին օրիշը.** «Հիւղիս քը մատաղ, Մարեան. նը-  
շանած աղջիկ էր, թա որ սաղ ինէր, մհեկ մին  
ըրախայ էլ օնէր։ Գործակալին հիւղին սուտանան տա-  
նի, որ չհաս ըրաւ, ըրախաս էլ պէարդի եկը, մե-  
ռաւ, իւրան նշանածն էլ»։

**Մին օրիշը.** «Քար կտրուեմ բալամ. քար օտեմ,  
քացախ խմեմ, Զաքի՛, ճակատս պենդ ա, մեռնում  
էլ չեմ, թա պլծնեմ, էլ լիւս աշխար չի տեսնամ։  
Սրարին (պատճառ եղողին) խոխերը կտորուին,  
հացը թորնան չի կենայ, ցորեն հնձի, գեարի օտի՛,  
օխտը շին շոռգեայ, փորը կշտանայ նչ, մահը սետ  
չէր (պատճառն մահը չէր. բնական մահուամբ շմե-  
ռաւ) մեր տէրը չհաս ըրաւ...»։

**Սարգիսն աման հանդ համ լէաւ ածում ո համ**  
**էլ կանչում.** ձենին էլ շատ լէաւ ա, խայաթու մնան  
ըարակ, կիւլապաթունի մնան կակուդ, մեղրի մնան  
էլ համուզ։ Հիւպու որ շուխն ածում ա, պլծնում,  
էլ համուզ։ Հիւպու որ շուխն ածում ա, պլծնում,  
էլ կայ, ածիլ էլ կայ, ածիլ էլ կայ, ածիլ էլ  
ասիլ էլ կայ, ասիլ էլ։ Սարգիսը հե՞նց էշխաւ ա-  
ծում ա, հե՞նց ըլատաւ (սիլավառ սոխակի նման

եռանդագին երգում է) ասում ա, որ մարդ լսած  
ժմանակ հայե՛լ մայե՛լ ա ինում։

Անան ու Սարգիսը հենց սէրաւ ին, հենց սէ-  
րաւ ին, դիւ ասես թա Անան ապրում էր Սրգիսին  
սրտումը, Սարգիսն էլ Անուն սրտումը։ Հունց որ  
մարդի հիւղին ջոկ ա, մարմինը ջոկ ամմա հիւղի,  
մարմին հենց միւտորուած են, որ տննողին աչքին  
մին մարդ ա ըրեսում։ Էսա ըսդհենց ին Սարգիսն  
ու Անան էլ։ Ամմա հունց որ հիւղին ջուկուելան ե-  
տը մարմինը մեռնում ա, էլ ապրում չի. Սարգիսն  
ու Անան էլ էնչանք սէրաւ ին, էնչանք սէրաւ ին,  
Աստուծ ոչ անէր, թա որ ըսդրանցանայ մինին գլո-  
խը մին փորձանք գեար, էն մինն էլ ապրիլ չէր,  
կը մեռնէր։ Պատճառն որ Սարգիսն ու Անան պիծի  
ժմինականց մին գեղում ծնուած, խոխայ ժմինա-  
կանց խաղ ըրած, ասած, խօսած, մին տեղ սար  
զինացած, մին տեղ նստած, երկացած, մին մին  
ծափ տուած, պար եկած, աման օր մինմնու իրես  
տեսած, մծացած, սէրած, սիրուած ին։ Ղորդ ա  
չօբանին, զորդ ա գեղում, սրերում, ձուրերում ապ-  
րած ին, ամմա իւրանց գեղուներին մնան անմեղ,  
խոնարհ ու բարի ին։ Մհեկ, որ մծացալ ին, արու-  
ռը, հայան, պտառանքը, նամուսը աման հնչի եադ-  
թում ին։ Այս Զաքարաղ, քու վեղին ու ջրին մա-  
տաղ, քու տափին ու երկինքին մատաղ, քու ըրիդ-  
նակին ու լիւսներին մատաղ, քու տղըմարդին ու  
օղլուշաղին մատաղ, քու նամնւս ու զըլրաթին մա-  
տաղ, քու արռւու ու Կային մատաղ, քու հմօթին  
ու պտկուանքին մատաղ։ Ձհարի, քպաքի տղոց ու

ըղջկորանց մնան սլեթա չին, ըրեսին փէարտաները պտառուած չին. դեռ հալա համօթն ու պտկառանքը կընընչկարմուրի (ծիածան) մնան ոչանկ ոչանկ շրփուշափաղ ին անում Սրգիսին ու Անում իրեմներին, ու աման մարդի ու օղլուշազի իրեմներին: Անան մծացալ ա, էլ հմանչում ա թա պարգեայ: Աման մարդի բնոթիւն մին չի, մարգոց հմբարքաւը բնոթիւն կայ: Անան պար ա գեամ մինակ էն ժմանակ, հիպու որ իւրան մերը մի քանի հետ առում ա «պար եկ»: Օրիշ ժմանակ Անան պար ա գեամ հիւրգուաւ, ծափ տամ մտքաւ, ուրիսոթիւն անում սրտաւ: Թա հինչ տեսակ ասլաններ են մրափում Սրգիսին ու Անուն սրտերումը, էդ թողում ենք, որ Տմբլաշի-Խաչան ապերը գերրի, պատճառն որ զուրնա ածող ա, տկլբազ թակող ա, ըսդի ըըներում ուստա ա, լէաւ ա գիտում, գլոխ ըսդի ըըներան դիւս ա գեամ:

Զօրանները էլլբհա դինամ են, ոխճարները քը-  
շում խոտ տեղեր:

१०

Կարպատում մնացողներն էլ հպարաալ նստած չին։ Աման մարդ ցեաքեաւ չփարալ էր իւրան բաղը, բօստանը, արտերը. կտրալ էր թնակի մանները, տնկոտալ սարիները, սրեմնաւ կպոռալ սարիներան մանները, դիւս կրալ կտորուած ճղները, քնդալ թը-թի ծռերին չոր չոր ճղները, լէաւ բհալ թանակների, ծռերի տակները։ Աման մարդ ծմական կտրալ էր,

բերալ տոն իւրան ըլաթին հետի կոտրակ, համնը  
մասան, մած, լիւծ, մնառովսք, սամի, գեուրծա-  
վար, մձկոլծպատ, հուտղմպատ, պարաստալ խոսի,  
ծապան, կղջան, սմբետան, սրմըքցի. Աման մարդ-  
փարալ էր գերոնանի, հաճար, կունատ, գերոնք-  
գեարի, սորէկ, լորի, խաշխաշ, բեկլայ, հիւլեռը,  
զարդուդալի. բօստաններում էլ գեազար, բեղկ, տակ,  
սողան, սխտոր և օրիշ կինչեղան. Մեր հիւոր պա-  
պիները սրմելիս ետ են անում գեօտիները մջքերան,  
զիրաւ (զիւրեաւ պար. հոլով) տամ փափախների  
գլոխներաւը, ետաւ սերմում գեազարի, բեղկի, տակի,  
սուղանի, սխտորի սերմերը, հանցու որ մեծ մեծ  
ինեն, զեռ զեռ բռնեն ըսդրանց գլթխները, գոնդերը:

Ալաթը վարում են մին ջոխտ գեռմաշաւ, մին  
ջոխտ էլ եղնաւ. գեռմաշները քշում ա մաճկալը,  
եղներն էլ քշում ա հոտաղը: Էրկու ջոխտը միասին  
ասուում ա չորոց:

Ըլլթավարը պրօնելան ետք պտրաստուում են  
մհեկ էլ գիւթնացիլ անիլ։ Աման գիւթնատէր  
պտրաստում ա գիւթանի ատանը, էշը, թոռը,  
խրազանը, մածը, մ'ծախքերը, թերը, կաքեւը,  
փամփալը, գեղագանը, զոնին, մնծ-ակնը, պիծի-  
ակնը, բութակները, զեուրծավարները։ Գիւթ-  
նակապ ուստէքն էլ գեալիս են, հուրեղաւ տաշում,  
տիւրաւ ծկոտում, աման հինչ իւրանց տղերում  
պնդյնում։ Փուկարար ուստէքն էլ կուրդանակները  
եր կալած գեալիս են, փոկ քաշում եզան խամ կա-  
շիները, լիւսում ծապանները, կղղանները։ Դամրչի  
ուստաներն էլ զօդում են գիւթանի խոսի, ձեւիչ՝

Ճմբարակ: Կնանիքն էլ տներում պտրաստում են սմբետան, սրմըկորեկ, սրմշրջի, սրմշխուրջին: Աման գիւթանի լծեցին հենդ ջոխտ գեռմաշ, հենդ ջոխտ էլ եղնը: Մին մաճկալ, մին մճկլաղբեր, հենդ էլ հոտալ գեռութանները տարան, սկսեցին վարի: Կորեկները պրծնելան ետը գիւթնացին էլ պրծան լէաւ լէաւ հոռվոլներ տալաւ: Գիւթանաւրի էս հոռվուլները գերըիլը աման թանակ լպզտողի բէան չի, մինակ Կորպանցի բանաստեծ Յարութիւնին բէանն ա որ գերի:

Գիւթնացիլը պրծան, խոտերը հսալ ին, պէտում էր հարիլ, չուրուցնել, դիղել, հանցու որ ձմեռնը տաւար, գեռմաշ, ձի, էշ մնար ոչ սոված: Մրեցին դարեազները, հրեցին խոտերը, մին լէաւ չուրուցըին, առաջ թուփակ թուփակ գրսեցին չուրացած խոտերը. մին քանի թուփակ մինմնու երայ զրին, դէառաւ թուփ. էս թուփերն էլ արաբաներաւ կրեցին, մինմնու երայ գրսեցին կալերին, գեռմերին կշտերին, իլաւ դէզ:

Թոթն էլ հսալ էր, կաթուկ էր տամ: Աման թութատէր պտրաստեց չատիր կտաւը, թակը, մին կողման թափեց հսած թոթը, ածեց կրմներին մէջ, մին կողման էլ սալքեց քեարխանի դազանը, սարփուժը, լիւլան, նովը, օշնակները: Քսդրանք տպատեղ սպրցնելան ետը կատեցին ջուրը նովերի երայ, վոեցին կրակներ դազանների տակ, թոթերը թփելաւ, արաղը քշելաւ պրծան, տանայ մհար էլ քնեցին թիւնդ արադ: Ծախու արաղները լցրին

ոումքոց մէջ, տանայ արադն էլ կուպրունների մէջ, պրծան:

Գեարի, ցորեն էլ հմելաւ ին:

## Է.

Աման սուրբ ծեղին տւարած, գելոնարած եր ա կենում քնըտեղայ, իգնարօտ տանում ըրալուա (առանց երեսը լուանալու) տաւալները, գեռմաշները, գեառները, ձիաները, էշերը:

Ըզկերը, հարմներն էլ կանուխ զիւթնանում են, եր օնում կոժերը, դորակները, կոլաները, փարչերը, վազում ալբիւրը, լցում ջրաւ էդ ամանները, լուանում իրեմները, մին մին կարճ աղօթք անում, իրեմները խչանում, վիր ամանները գնում ուսերին, ետ գեալիս օրէքը:

Ընելի բէան ու գեործ շատ կայ. պէտում ա ըրկիւնան մերած մածունները հարել, ամանները, քսակները, տոպրակները լոխ էլ գրտակել, հանցու որ թափուր, պատրաստ ինեն, որ նոր կթելիք կթներին, շնելիք ալանիրներին տեղ ինի: Աման կնեկ, հարմնը, աղչիկ իրեք ոննանի կախանսն կախեց լինեցին. «Յիսանս Քրիստոն» ասեց, խնեցուն մէջ թափեց մածունները, հարեց, կարագ եղը թանան ջոկեց, կարագը խառնեց կարագ եղին հետ, հալեց, ածեց ելզամանին մէջ, թանն էլ սպառան տուաւ մեծ քսակին մէջ, քսակին ոեխը պենդ կապեց, դրաւ սալ քարին երայ, մին զեռ սալ քար էլ քըսակին երայ, որ քամուի չըլթանի մհար: Էրե-

կուան մայա տուած պանիրներն էլ տոպրակներան հնեցին, մեծ մեծ կտորեցին, աղաւ ըրին, ըրեռում վ փոեցին, որ չուրանայ, աղ օտի: Ետաւ ամանները լոխ լուացին, ըրեռում չուրուցրին, տղստեղ սքաքեցին: Անան էլ իւրանցը ըրաւ, պրծաւ,

Անուն մեր չերիքնազը՝ օրհնում էր իւրան աղջիկը. «Անա, ծաղկես դիւ, Աստուծ պահի քեղ, մուրատիդ համնես, բարաւ կապենք կնընչկարմուրդ»: Տեսնող կնանիք ու հարսներ էլ ասում ին. «Ճատ ապրի Անան, հալալ ինի իւրան ծծած ծեծը, իւրան կերած հացը: Օխնուի էն տոնը, էն օճախը, որ տեղ մծացալ ա Անան, օխնուի էն հերն ու մերն, որ ըսդի շնրաւ չնորհքաւ աղջիկ են մծացրալ: Ըներանկ էն տանը, որ Անան ըն տեղ հարսնը կ'ինի. բախտաւար էն տղին, որ քեղ կ'օգի. հինչ դռնաւ որ մտնես, դրախտ կը շինես»:

Հեշտ էր: Կովերը բռնչելաւ եկին իգնըրուտան, գեռումշակովերն էլ տռնկալաւ: Հարսնը, կնեկ, աղջիկ էլլինա կթեցին, տքցրին, մրեցին: Եկին տւարածներն էլ, լոխին. ոնները շղթաթախ, պուրոտած, տրեխ, գիւղայ, փթաւայ, հեսկի ջրի մէջ զլըխբալիս: Աման տւարած հանեց տրեխները, գիւղաները, ետ տուաւ հեսկի, փթաւայ, սրբեց պուրոտած ոնները, գեցաւ չոր գիւղայ, գիրաւ (զիւրեաւ) տուաւ հեսկի, փթաւայ: Հիւր տրեխները ծակուած ին, կրկատեց, հիւր տրեխներ առի մաշուած, անպէտ էր, մին ջոխտ տըրիսացու կաշի, մին խրեկ վոկացու եր կալաւ, հանցու որ համ տաւարը տանի, պահի համ էլ փոկքաշի իւրան մհար տրեխս անի, գենայ (զգենուլ բառ):

Տւարած, որթարած, հացը կերաւ, որը իւրան ուրական ուտլացուը հացը, պանիրը դրաւ գեօտկին մէջ, կապեց իւրան մէջըին, որ հաց, եղուշոր դրաւ չանթումը, որը տղուարեց պիծի խուրցինումը, իւրան տաւարը, որթերը էլլինա քշեց արօտ: Օրոց մէջ մնացող մարդիկը պարապ չին, չօրաններին մհար տրեխս ին անում:

Կնանիքը, հարսները, ըղջիկըն էլ քամուած, թնձրացած թաները լցրին տաշտերին մէջ, նարին աղ շաղ տուին երրայ, մին լէաւ ճմոեցին, ճմթեցին, ետաւ հուցեցին, իւրիւր քցեցին: Կնանիքը «Յիսուս Քրիստոս» ըսեցին, հունցած թանին երրայ խշընեցին (խաչակներել) ետաւ սկսեցին բլըթել, ու խոնչաներին, տախտակներին, թերմաշ մեղարներին երրայ բէանդուումի նախշուն շարել ըրկի տակ, հանցու որ չուրանայ: Հւրեցին չուրացած չորթանները, տղւրեցին, նոր հարած թներան լւլացածները տղրցրին, կտրուեց, տակի շումաթը դէն ըծեցին, չորն էլ լցրին ամանների մէջ, հանցու որ խառնեն կարագ եղի հետ, օտեն:

Կսօրը մօտ էր. ըփեցին կաթնաւ, թանաւ (պահոց օրերը պահում են սրբութեամբ) պտրստեցին ուխճարների, գեղուների չներին, լակոտներին շակերը, պտրստեցին տոպրակ, քսակ, կիւշ, զագան: Ոխճարներն եկին. չօբան, կնեկ, հարսնը մին մին աման եր կալած կթեց, լցրուց մեծ դազանի մէջ կաթները, տաք տաք տուաւ պանրի մայան. ետաւ կնանիքն ու հարսները նոր պանիրները լցրին քսակնե-

բին, տոպլրակներին մէջ, ետ դէառան օբէքը։ Աման չօբանի ձեն տուաւ իւրան գերոնյածին։

—ՀԵ հԵ հԵ Գիւղի՛ (Մոսկվ, Մարտի՛, և այլն),  
հԵ Գիւղի՛:

$$-\xi F_J \cdot \delta F_J \cdot \delta F^*_{-J}.$$

— Ա դա գեառները թիւլ ըրա է գեառները՝  
գեառները։

Մին էլ էն տեսնում, գեառները տմակները թող թող ընելաւ, մկալաւ, էն դերով հէօլերն էլ կճիշները ցեց կալած, դժմակած վազ տուին, ոխճար ու էծ էլ ըս կիւսաս վազեց մկալաւ, մինմնու խռնուեցին, մին աչք ճպերում գտաւ աման գեառնը իւրան մերը, աման հէօլ էլ իւրանը. մկոցան դրնդաց, ըրոտաց, գեռւվգեռւվաց սար ու ձոր: Մին էլ էն տեսար, գիրթ կտրուեց մկոցը. գեառներն ու հէօլերը չուքեցին իւրանց ըռաջի էրկու ոնների երրայ, սկսան գիւրգեահ գիւրգեահ ծծել, բերանները փրփրցնել, բէազի բէազի էլ դիմչաւ մօրը կործին տրբքցնել:

Զօրանները չներին լակ չեն տամ ոչ գիշեր, ոչ  
էլ ըրիկին, հանցու որ չուրու լիս զարթին կե-  
նան, ոխճար, գեառնը գիւղի, գեռղի չի տան. լակը  
մինակ տալիս են կսօրան կսօր: Զօրան, գերոնա-  
րած չներին հետի, մինմնուանայ հեռի հեռի լիա-  
ման են շինում, հանցու որ չները կռե չանեն: Ցա-  
փում փոսեր են շինում, քրերաւ փոսերին կողքերը,  
տակերը թակում, պնդցնում, լիաման շինում: Թան,  
շոր, բրդած հաց, նալի պանրի փշրանք խառնալ  
ին, լակ շինալ բերաւ կնանիքն զադաններաւ: Զօ-

բան, գերոնարած բժնեցին լակերը. զեռ զեռ չեղ-  
րը, հազիները սուլի բուլի ընելաւ, լոր լոր ընելաւ  
վազ տուլին ամաքը իւրանց վլրմանին ելրայ, գիւր-  
գեահ գիւրգեահ, մոմուլաւ, մըթմըթալաւ լիցին,  
լըփլըփորեցին դէս ու դէն երշելաւ, լակամաններին  
պատերը, տակերն էլ թերթեցին: Լակը ճելլի պրծը-  
ցնող չները վազ տուլին, մինը էս լկուտին խոզկո-  
թան բռնեց, թփըհարեց, շպրտեց, լակը խլեց, լա-  
փեց, էն մինն էլ էն լկուտին մէջքան կծեց, տափին  
զրըխցրուց, կլանչոցը ասմանը հոցրուց: Կիշոցին  
ելրայ չները լոխ հւրուեցին, զլոխները լսլանի մը-  
նան ցցած, կեարզանները զեառ զեառ տնկած,  
քթերն ու մոռլթները հւարած, ճիները դնչղած, հա-  
զիները կռնդիւրշիկ մէջքերին ելրայ ծալ ծալ ը-  
րած, քուլուկ կացան, ծարս ծարս իլան. թանթիւլ-  
ները մինմնու օռի դրան, մինմնու բաշ, ըռեխ, քեթ,  
անջուկ ճութուտեցին, պտուտեցին, մոմուացին,  
խոլսուացին, բիւրդ տուլին, բենբակ գերպեցին: Զօ-  
րանները նի հսան, չներին անունները տալաւ կդնուե-  
ցին, ճըղճըղացին. «Ալաբաշ, Ղափլան, Պօղղար,  
Զամբէշիր, Ասլան, կորէր, քշուեցէր, հոացէր, դէ  
հա, դէ հա»: Ճները չօբաններին կզակին երշեցին  
ոչ: Զօբանները նի հսա՞ն, հի՞նչ նի հսան. հիմի  
չօմազաւ մին ըսդրա, մին ընդրա գերւակին տրը-  
ցրին, մինմնուտանայ հոցրին: Ճների աման ընո-  
թիմնը գերիլը աման ա ժ ո կրգըցովի բէան  
չի. Փուանկստանում մին մարդ չները կերակրելու  
մհար մին միլիօն ֆուանկ ա կտակալ: Մին ընկե-  
րութիւնն էլ կայ Փուանկստանում, որ ասուում ա

«Ծնաղարման ընկերութիւն»։ Ծներին արարմոմկը էսա ըստրանք լէաւ կը գերբն, պատճառն որ չներին իլիկն ու ծիլիկը բնած են։

Զօրանները գինացին հաց օտիլ։ Դեառները հէօլերը կշտացալ ին ծծելայ, խաղ ին անում իւրանց մօրանց հետ։ Մերերն էլ պշտչորում ին իւրանց գերոներին ճակատները, աշքերը, պկերը։ Միւրուների կշտերքի չօբանները սկսեցին շուի ածիլ, ովաճար, գեառնը նստոտեցին, համ անջուկ ին դնում շուոց ձեներին համ սէրուն սէրուն արուճ անում։ Մարդ, որ գերոներին արուճը տեսնում ա, օդում ա թա վեց աչք էլ փոխ օնի, թմաշա անի։

Մինակ էն գեերով էծերն ու հէօլերը մհալ չին դնում էն շուոց համուկ ձենին, որ նստատեն, արուճ անեն, կերածները մարսին։ Հոմնց որ կըրադացող չար տղէքը եշում չեն իւրանց վրժըպտներին ըռխին. նրստած տեղը եա զասի ժմանակ չըոթիւն են անում։ Էսա ըսդհենց ին էն սուտանայ էծերն ու հէօլերն էլ. էն գեերով էծերն ու հէօլերը ծարս ծարս ին ինում, նստատած ոխճարներին, գեառներին զլխաւ դէս ու դէն մաղալախի ին խաղում, զոփի, եալանի փահլուանի ին տամ, չըշարում գեառնը ու ոխճարը։ Լիւսահիւզի մեր պապերը ասում ին։ «Քրիստոս արդարները ոխճարի ա նմանցրալ, մեղաւորներն էլ էծի»։ Էծերին բնոթիւնը շատ լէաւ գելրալ ա լիւսահիւզի Ադամ-ազբարը։ Հզար ափսոս, ա կիզի Դարվին։

Զօրանները մին աչք ճպելում գեառները ջուկեցին. Էլհա ոխճար, գեառնը տարան խոտ տեղերը։

Աման օր էսա ըսդհենց ա սար գինացողների թէանը-գեործը։

¶.

Ճատ տարիներում ապրիլ, մայիս ամիսներում չէրթաւ, էրկու չէրթաւ, բէազի էլ ամսաւ Մուաւ սարը իրիվնակի, ըրկի իրես չի տեսնում. սարին տական եա շատ կէսան չուրու կտտարը ծածկուած ա ինում բշրթողպաւ։ Հենց հմարի թա գշերն էլ ա գշեր, ցիրեկն էլ ա գշեր։ Բսդի քշրթողպը առաջ նարին նարին շաղում ա, ետաւ բարակ բարակ մզմզամ, ետաւ, ծլլրկթ անում. մին խօսքաւ ոչ մրգլվարի թոր ա գեամ, ոչ ետ օնում, կտրում։ Նըրբազի հաւան ոչ օրացուցի կզակին ա մհալ գընում, ոչ տօնացուցի ըռխին ա եշում, ոչ էլ եփրեմ-վերտու ըստածին անկուզ օնում։ Նըրբազի հին մհար օրացուց շինող փլըսոփայ ուստան հալա իւրան մօրը փորան ծնալ չի։

Շէրթաւ, էրկու չէրթաւ սոված մնացած՝ գիւլ, աղուէս, չաղալ, գեաղան, լոխ էլ ըստի մին քշրթողպ օրի, քշրթողպ մինզլգշերի են եշում, հանցու որ մին որս անեն, իւրանց սոված փորերը կշտացնեն, պնդյնեն։ Հունց որ գշեր ցերէկ կատուները մարադ կացած, մոկներին հետը կարած են ինում, աղուէմները՝ հւերին, չղանը՝ ճուտերին, զիրզին՝ ծտերին, սուտանան էլ մարգոց, ըսդհենց էլ գիւլերը գշեր ցիրեկ ոխճարներին, գերոններին, տւրներին հետը կտած են կենում։ Գշերը մին էլ

լուսմ ես, որ առաջ մին քաւթառ գիւլ էրկեան զուզա տուաւ, օռնաց «Աւու՛ ւ ւ՛»: Ետաւ մնացած գիւլերն էլ ըսդրա հետան, լոխ մին տեղ սկսեցին Քիւրդի բայաթու դասկեարլզը (նաքարատ). «Աւու աւու աւու աւու»: Հենց գիտաս թա Բստծու իրեն եր բրբառնմ են, որս օզում: Չտես, խամ մարդ որ ըռցի բերան լսում չի գիւլերին զուզան, ըլալուշը՝, օռնուցը՝, մարմինը սրսըպատճում ա, սերտը՝ թմիթմփամ, զանը սոսուամ, մետքը զրգանդում, ծնկները թուլաննում, ոննան չուրու գլոխը դողում, մազերը փշաքաղնում, հիւգին էլ թոթուամ: Ամմա չօբանները, գերանարածները, տւրածները ըդի բներում ուստա են, հենց են լիա սուտունին հետ կուող Միքայէլ հրեշտակն ինեն. ըսդրանց մհար եա գիւլերը օռնած եա կշեղակը չոչուցած, լիա մին ա. պատճառն որ չօբաններն էլ Զօբանների ինիվերսդետայ դիւս եկած, տիրումաթիկայ ոտացած են: Ծներն էլ պակաս ուստա չեն. լիա որ գիւլերին զուզան լսում չեն, աչքերը չորս են բանում, սիւրիւներին չորս կիւսաւը չարխ են տամ, զիրաւ (դհօտիւ) շոտուշուտու անում, կնձկոնձում, ոտ քաշում, գը եր լոք տամ, գը վոր լոք տամ. Էլլա չարխ տամ: Զօբաններն թիւանկները ճոճընում են գը պի ուռնոցի ձենը եկած տեղը, հանցու որ գիւլերը վախեն, հոսնան, կորչեն: Ամմա գիւլերն էլ չօբաններան ու իւրանց չներան պակաս ուստա չեն, գեազանների համբալսրանայ դիւսեկած են, ասլան պրօփեսօրայ, կուկորթիլոս ու վազը, քեհեմովթ ու դափիւն դասսարբաշի ուսքեարնե-

րան էլ վկըյական ինքկալած են: Գիւլերը գշերը լչաւ են տեսնում հինչ ցերեկը. ոննա թիթե են, սուտունայ ճելի վազում են, զիրզուանայ ճելի հրսնում որսին, գնակայ ճելի էլ ճութուատում: Թիւանկն ձենը՝ որ լսում են գիւլերը, բոս են տամ, ծունթում, հոանում իւրանց օռնած տղերան, հմնում սիւրիւն չների պակաս կողմերը: Ծներն էլ դէս են վզվազում, դէս են վզվազում, գիւլերին ոտը քաշում, թնչելաւ անկուց դնում, էն սհամթումը գիւլերը գտանում: Սկսում ա շան ու գիւլի կռելը: Ծներին հզոցան իմանում են չօբանները որ գիւլերը կռուում են չնելին հետ, երրայ են անում (կրակում են) թիւանկները, ճելի վազ տամ էն կողմը, ճղճզամ, պնդըձենում. «Ասլան բռնի, Ալարաշ բռնի, Ղափլան, Պոյնախ, Զամբար բռնեցէք, դէ հա, բռնեցէք, ծիւ ծիւ լրէք, դէ հա, հսալ եմ, էս եմ ձեր կշտին, բռնեցէք հա»: Ծներին աչքերն էլ են գշերը տեսնում, քաշթողպ ժմանակ տեսնում: Բրութին ոտան, թիւանկն տրըքոցան, չօբաններին ճղճզոցան սրտուանուած չները բռնում են գիւլը, խտտակոխ կենում, տկըզլոխ անում, եաղթում: Քշաթողպ ժմանակ չօբաններին աչքերը տեսնում չեն. ըսդրա մհար թիւանկները խտուրու են երրայ անում. պատճառն որ վախում են թա գիւլան շիլ կայ, չներին եա ովսճարներին նի կեայ: Կռուի թիւնդ ժմանակ հենց հմարի թա չները լոխ հաքուում են կոիւ իլած կողմը: Գիւլերը էդ ժմանակ բոս են տամ կռուի տեղան, նի հմնում սիւրիւն շոն չիլած կիւսը, թաւար դուշի մնան երրայ տամ, խրտիած

ոխճարներան մին մին ըռելին օնում, իլիմ իլիմ կորչում։ Ըսդրանց հետան հանում են մեկալ գիւլերն էլ, պտռոտում են որսերը, լիլփորում։

Գիւլերը, հիպու որ կարում չեն որս տանեն, պուք են տամ տանում ըռելի ընկած ոխճարներին որին տմակը, որին կործը, որին կճիպը, որին պլները։

Քը մատաղ, կրդացնդ, ախր մին բէան էլ կայ։ Էդ բէանին ոչ հարիւր տրեկան չուրանին խելքն ա հանում, ոչ ութասուն տրեկան պռաւին, ոչ տւարածներին, ոչ էլ մեր կրդացողներին։ Ճկատումը քուռամեխ որտուած չժրգեցի մին գիտկան էլ չի մնացալ, որ մարդ գինայ կոշտը, ձեռնին, ոտնին ընկնի, հրցնի, համ սվորի համ էլ սվրցնի։ Ըսդրա մըհար էդ բէանը ըս տեղ գելրում ենք։ աշխարհը ա, գիտուալ չի գեալ (չգիտցուիր), բէլրեա մին անկրննիը քննած, ըշխարհիս տակն ու զլոխը գիտող, մին Ըդամայ օձի խելքը խոնեցող վիխոսփայ, Սզումուն իմաստունին խելքին տէր մին իմաստուն, Դէանանդա—Փահուլի մնան մտքաւ անտակ ծով մին կագեթածի, Դարվինի մնան գեազանների, զոչերի, մէյմունների, որձակինների, գիւլերի, էշերի լիլին ու ծիլիկը քննած, իրեք բաթման թանաք լոլտած, գիրք շինող մին խորէին մարդ էդ բէանին խելք հոցնի, կզեթում գելրի, լիւս աշխարհ գիւս ըերի, հանցու որ չխմացողներն էլ կարդան, կրդցնեն, սըգորին, ըղորմի տան էդ բէանը գելրովին ծնողացը։ Եդ բէանիը էսա հրես։—Ամմն ընասուն ցրեկաւ հըռնացի գիւլ տեսած ժմանակ եա փախչում ա, ըզա-

տուում եա մին քարի, մին ծառի, մին քոլի, մին մարդի գալուն զէմ տալաւ գիւլի հետ կռուում, հինչը ամմա էշը ցրեկաւ որ հոնացի գիւլ ա տեսնում, էն սհաթին զլ՛ում ա իւրան բայաթին ու զուխտըլափակ վա՛զ տամ դըպի գիւլը, կշտին առաջ մին լազկի պար գեամ, ետաւ մին կնիգապարհ, հետաւ եալի տամ գիւլին չորս կիսաւը։ Էլլրհա զլում Քեօրողու հանգը։ Գիւլն էլ առաջ կեղծաւոր ու դալբազան բարեկամի մնան սէր ա անում, ինքն էլ իւրան հանգաւը մին մէյմունի պար գեամ, հագին սուլի բուլի անում, անջուկները ցցում, ետաւ բարբառելով մաքրազարդում—։

թ.

Հենց հմարի թա մայիս ու յունիս ամիսներում աման օր համ թոր ա գեամ, համ արև անում Մուաւ սարում։ Ըսդի տարիններում աման օր չուրու չեշտերինքը հենց պարզ ա ինում, հենց պարզ ա ինում, գիւ ասես թա երկինքը խալիս ըրծաթայ շինածր ըստուծաշէն մին զէ՛ռ սաշ ինի. գիւ ասես թա Դզրփատայ, Մուաւյ, Դզստանայ սարերն էլ մին զէ՛ռ կմկարանք ինի էդ սաշին տակը դրուած, իրիգնակն էլ մին հրեղան կրակ էդ սաշին տակին վաելիո։ Օրիշ ամիսներում պարզ ժմանակ էլլրհա շատ լսրել շիլ ընկած, մլորուած թողալ ա ըրեսում, մին պատառ էօ ձորին տական կացած, մին պիծի պատառ էն ձորին, առի մին պիծի պատառ էլ էն մին ձորին, եա ձորակին։ Ամմա մհեկ, ասես թա լաբզ-

տած ինեն սարերն ու ձորերը, դիւզերն ու խութերը, ասես թա էւլաւ սրած, տարած են թուղպերը:

Երիգնակը չուրու չեշտ չուրուցնում ա երէկուան թրջած տափերը. մին էլ տեսնում ես որ բարիրոսի ծոխի մնան տփերան բձրանում են շմելինք (գոլոշի) ու շալքերը դը պի բաձրի սրերին գլուխները. Զեշտա ետ մին էլ տեսար, որ մին զուզունի շանք թողպ թառ իլաւ Մոաւայ գլսին, մին ըգուի շանք Դզրփատայ, Քիրսայ գլսին, մին օգտի շանք էլ Քեթ սարի կտարին: Քանի իրիգնակը բձրանում ա, էն շանք էլ իւլիլ տքանում են սար ու ձոր, դիւզ ու խութ, էնշանք էլ շտանում են շալը ու շմելինք, բըձրանում ու խառնուում սրերի կատարների երրայ թառած թուղպերի հետ: Երկու սհաթան ետը մին էլ տեսար սրերին կէսան երը ծածկուալ են սև սև թուպերաւ: Սրերի նշերի երրայ թողպերը հենց դիւզ ոտ ին կացալ, հենց դիւզ ոտ ին կացալ, դիւզ ասես թա թուղին տակաւը Մոաւայ չուրու Դզրփատ մրաթել տուած ինի: Ուուսաստանի պլանշին հինչ նաքեարա ա, որ կարայ ընդհենց դիւզ պլան տայ. Ինկիզի դիւլիկեարը հինչ նաքեարա ա, որ կարայ ընդհենց լէաւ մրաթել տայ:

Կէս սհաթան ետը մին էլ տեսար երկինքը գըլխիդ սև մթնեց. թորաւ<sup>1)</sup> ծնտրացած թողպերը հարբած մարդոց մնան ծուըծուի ըրին, մինմնու տակաւ գլսաւ դէս ու դէն անց կացան, մինմնու ճկատի, կողքի տրըցրին. հրեղան կեծակը օձի

մնան կուրմեռ ընելաւ, մին աչք ճպելում շրախք ձեփեց ըս տեղին, ըս տեղին, ըս տեղին. որ գիրթ ուրոտաց, տրըցտրաքեց, գիտաս թա երկինք փոլեկը գլսիդ. երկիրը, սար ու ձոր դղղողաց, գեռվգեռուվաց, դիւրիւր եկը, ժաժ եկը (շարժուեց) ոններիդ տակին. զրգանգեց, սրսըպատեց, սրտաճաք, լըլպատառ իլաւ մարդ, ընասուն, գեազան, հաւք: Հենց գիտաս թա ըշխարհիս թգւորերը լոխ էլ, եր կալած իւրանց թօփերը, թօփսանան, գիւլլա-բարութը, գօրքերը, հւաքուալ ին էս սարերը, մինմնու հետ կու անում: Դեռ մին ըրըտուցի ձենը չկտրուած մինմնու հետայ տրըցտրաքում են, դողում, գելուգեռում. ասում ես—էսա ըշխարհիս վերջն ա: Կեծակը, որ գիրթ շեկում ա, մին էլ էն ես տեսնում որ սալ քարը պանրի մնան էրկու լափուջ ըրաւ, էս քերծին կէսը շրախք պարան տուաւ, էն քերծին մին կողմը բրդըգիւմեց, վոր ածեց. սարը տական չուրու գլուխը թփմհարեց, աչքերդ սւացաւ, սերտդ թմթմփաց, մոլի մնան վտացար (վայտանաւ), վոր ընկեար:

Կծակին ու ուրըտուցին հետան մին էլ տեսար գիրթ սկսեց լավը (ամենայորդառատ և մեծաշիթ անձրեն). ամմա հունց լավ, հունց լավ, հու որ Զըռհեղեղը տեսալ չի, գեայ, տեսնայ: Մին սհաթում աման մին չոր չոր ձուրերաւ, ձորակներաւ վազում են մին մին, պղտոր պղտոր, զեռ զեռ գետեր, վշշալաւ, թըշթըշալաւ, շոշուալաւ եր օնում, տանում ըռեխ ընկած մարդ, ընասուն, տղընան անում մեծ մեծ քարեր, տկըռկապուր անում, դր պի Թարթառը

<sup>1)</sup> Ըրմատ թուրել բայի—անձրեւ:

գլորում, տանում ծառեր, գերաններ, կոճեր։ Քարերը քրերին որ թրըսկացնում ա, շրըսկացնում մինմնու հետայ, մարդ մնամ ա զրմացած։ Ջրերի վշշոցան, քրերի թրըսկորսկոցան մարդ ա քռանում։

Կոօրայ էրկու սհաթ հնացած՝ մին էլ տեսար թողպերը լոխ իլիմ իլիմ կորան, կնընչկարմուրը կապեց, երկինքը պարզեց, կորած իրիմակը էլլըհա դիւս եկը, պայծառ շղողաց, չուրուցրուց թրջուած ըլաճուկ, չօբաններին, տարածներին, գերոնարածներին ու որթարածներին շորերը. հաւքերն էլլըհա սկսեցին կարդալ, ոխճար, տաւար էլ գճոր ըրած տղերան դիւրիւք եկին, ըրըծեցին։

Աստուծ հեռի տանի, բէազի բէազի էլ մայիս, յունիս ամիսներում մծլհատ (մեծահատ) կարկուտ ա գեալիս։ Մծլհատը գեալան մին սհաթ առաջ ընտուն, գեազան, հաւք դիտում են որ ալիկործում ա ինլացուք (լինելոց)։ Տաւարները, ոխճարները, որթերը, գեառները առաջ սկսում են ըշդահաւ ըրածիլ, ետաւ իւրանց ըռաջի ոնների կճզակներաւ ճելլի ճելլի քորել ընկուչների տակերը. Ագռեներն էլ լոխ հաքուում են մին տեղ, կռկռամ, քշըրարձի անում, կռաւում, շուրշուտու անում քածրումը բիւրպատ, ետաւ մարինները քաշուում են իւրանց բուները, որձակներն էլ մտնում են քերծերի ծակըծուկ տեղեր։ Ճներն էլ կծոտում են, քորում են իւրանց մէջքերը, տունտը, հազինները, մէջքերին ելրայ դէս ու դէն թաւիլ տամ (թաւալիլ)։ Ճենց դիտաս թա ըսդրանց կաշիններին տակ որդն ա ընկեալ եա մզմող, ոռուքը բուլղի են կարում, հազինները կծոտում։ հիպու որ

կարում չեն թա ըռեխները հսցնեն, քոր գեալիս տեղերը քորեն, կըձկոնձում են։ Ըսդհենց են կատուներն էլ։

Զօրան, տուարած, գերոնարած, որթարած էդ նշաններան գիտում են որ իւրանց ըռաջին փորձանք կայ. էդ նշանները ճնանչում են որ կրկուտի նշաններ են, ոխճար, տաւար, գեառնը, որթերը քուում են, հոյնում ձուքեան, ձորակներան դը պի ըածրի տեղեր։

Մին էլ տեսնում ես զիրթ մին օժաւ քամի փշեց արևմտեան ընկիւնան. թող թող ըրաւ, դէս ու դէն շպրտուեց օբոց քէշանները, շաղ տուաւ, էս կիւս, էն կիւս խոնչանների, մեղարների, սինինների, ելրայ բռնած շրաթանները։ Կնեկ, հարս, աղջիկ ճելլի ճելլի հւարում են թափուած շրաթանները իւրանց ամաններաւ ներս տանում. ետաւ էլլըհա դիրաւ ածում ըլլըճուկների քէշանները, դաղիններաւ պենդ պենդ կպոտում, պիծի պիծի որթ, մողի քաշում ըլլըճուկների մէջ։ Քամուն հետան սացան թողպերը, մինեց օրը, սկսեց զողուալ, տրըրտաքիլ, գելոգեռուածլ, վշվըշալ, վշվըշալ, կեծակը կծակի հետան առանց կտրելու կծրպեծին տալ։ Վշոցին հետ գեալիս ա գիւլիւք, ետաւ կարկուտ, ետաւ մծլհատ. ամմա հնանց մծլհատ, ամման մինը մին ձուկ չանք։ Մծլհատը, որ գիւլլի մնան զժժըտակած շեկում ա տաւրի, ոխճարի, էծի, գեառան, հէօլի, որթի, մողու պուզերին, ճկատին, ընկուցին, քթին, կճիպին, գերժուում են ա պարանինները, տանըհնենդ հետ ոռուքը շոռ տամ, գլուսը, մէջքը, կճիպը թփըհարում, թուփ

դառնում մին տեղ, պլոխները կոխում մինմնու փորի տակ: Եծերն էլ մկամ են, դը եր լոք տամ, դը վոր լոք տամ, էլ իւկի պլոթին անում: Վայ էն չուբանին, տւրածին, գերոնրածին, որթրածին, որ փփաղին զլոխը ծակ իւլաւ, եափնջին էլ ճրզոտած. մծըհատը մինմնու հետայ մշանք նի ա սլրանում, որ սրտըզըթէօլը նի ա կյնում: Ախր ես որ մինը ասեմ, որ մինը չասեմ, որ մինը գերեմ, որ մինը թողեմ, ոչ ըսելաւ ա զլխում, ոչ էլ գերելաւ. թա որ Հայոց «Մասիս» Ռուսաց «Կոլոս» Ինկլիդի «Թայմզ», Փռանկի «Դեբա» Նեմցի «Յայթունկ» 2ին-Մաշինի «Ալակոշկոն» կազէթների ուստաբաշիներն էլ, որ իւրանց ոսկի զալամները, ըրծաթի թնըքամանները եր կալած գեան, էլլընա կարալ չեն թա տղստեղ գերիլ, կարալ չեն չօբանների, ըծերի, մծըհատներան քաշածը տղստեղ գերիլ: Ըներին հալն էլ թղում ենք:

Կրդացող, Քստուծանայ եմ ինդրում, որ աշքաւդ տեսնաս ոչ՝ ոչ ըսդի մծըհատ, ոչ էլ մծըհատի հնցած տեղերը. պատճառն որ աշքերդ կը տեսնան, ըրտսունքերդ կը շոշուան, մետքդ կը մլորուի, սերտդ կը ճմոռուի, հիւգիդ կը թոթուայ, մազերդ կը փշուքարին, մարմինդ էլ կը զրդանդի: Մծըհատը հինչ տեղաւ՝ որ հնցնում ա՝ սլրիշակ ա անում, էւլում ա, սրբում, տանում: Քամին, կեծակը, մծըհատը, ասես թա խօսք մին ըրած, քանդում էն ժղովներին, հաւքերին ծմակներին տոննը. օժաւ քամին ծուում ա արտերը, մծըհատն էլ փշրում ա, ճխար-քիւրդ անում ցորեն, գեարի, գերոնանի, բաղ, բաղ-

ճա, բոստան: Մծըհատը ետ ունելան ետը տեսնում ես աման արտի, բաղի կշտերքին ոտը կացած, ձեռները խաչ ըրած, ծոցում դրած գեղացի մարդիկ, որ վիզերը ծուած, լցըկումած ասում են. «Աստուծ, քը մատաղ, ախր դիւ գիտում ես որ մունք էս ըրտերաւը, էս բղերան ենք տալիս թագաւորին ոսկին, կնդոտորին պտուղը, Ծամիածնայ սրբադրամը. ըսդրանցանաւ ենք պահում մեր խոխերքն ու ըրախերքը, մեր գրնաւը նի մտնող, դիւս եկող զննաղ, եկող, զինացող, աղքատ, օզող: Հենց գիտանք թա մեր շենին մարդիկն ու կնանիքը շատ մեղաւոր ին, շար ին, ախր էս շինումը անմեղ խոխերք, ըրախերք էլ կան, ախր ծեծը բրանին մանուկներ էլ կան. մեղ պատժի. ընդրանք քեզ հինչ են ըրալ, Աստուծ, քը մատաղք:

Մին էլ տեսար ործակ հաւքերը դիւս եկին իւրանց փախսած մտած ծկերան, տետրակը վաղ տուաւ իւրան բունը, տունը՝ իւրան, կարեկ՝ իւրան, չարտը՝ իւրան, ագուեկ՝ իւրան. ամմա տեսան որ իւրանց մարիները իւրանց ճոտերաւը կտորալ ա մծըհատը: Աման հաւք իւրան հանդաւը իւրան ձենաւը լաց ա ինում, սար ու ձոր վլոխը կալած սոգ անում. «Վու վու, տուու տուու, բիւ բիւ, ծիւ ծիւ, շախ կզա, շախ կզա, կը ոռ կը ոռ, չը ոռ չը ոռ. պատճառն որ աման մինը համ մարին կուրցրալ համ էլ ճոտերը. ըսդրանց դէարտն էլ շատ ա՛:

Օժաւ քամին հինց զախտին (ամենասաստիկ) փշալ ա, որ տկոկապուք ա ըրալ էրկու հարիւր տրեկան գեռ գեռ ծառերը. էս ծառերն էլ վոր ընկ-

Նելիս իւրանց տակաւն են ըրալ օրիշ շատ ծառեր, ճղնըկուտուր, ճխարիւրդ ըրալ, ծմակին տոնը քանոդալ: Էղչանը վնասը թա որ մարդիկ տուած ինին ծմակներին, մէշարէակին լոխ էլ Սիրիր կը զրկէր. ամմա դէ հինչ անես, մէշարէակուն ծառաները կարում չեն քամին բռնեն, շտուափ ինք օնեն:

Ճատ տարիներ էլ փետ. մարտ, ապր. ամիս ներում քշաթողալը պատում ա Նըրբաղի դիւզերը. մին կիւսը Բագուի ծովը, մին կիւսը Պատանի սարերը, մին կիւսը Ղըրբաղի սարերը, էն մին կիւսն էլ Աղստեի գետը. էսչան տեղում թողալը բռն աղնում, գշեր ցիրիկ նստում: Սրերան որ եշում ես, էս թողալը հենց ա ինում լիա ծով ինի: Հու որ ծով չի տեսալ՝ գեայ տեսնայ: Էս թողալը էնչանք անիրես ա, որ Նըրբաղան դիւս չի դեալիս. հենց ահա տնօրինեայ եկած ինի:

Ժ.

Գեարիները հսալ ին, տոող տոող (ատոր) հառկերը ծուալ ին իւրանց պկերը, գլուխները. հնձող հայ ին կանչում: Յորեներն էլ հեղի ին դէառալ. խոխերքը գինամ ին, հասկները քաղում, փոնջեր կապում, բերում, կրակների ըրայ քեստերը էրում, հղլըդորում հափուներում (ափերում), թփըհան անում, ետաւ օտում: Խոխերը շատ սիրում են հեղին. ամմա որ ցորենը հսնում ա, պնդում, չուրանում, էլ հեղի չեն անում, հնձում են: Գելընանիքն ու հաճարներն էլ հսկրհանալ ին, խախալ խախալ

շնելաւ հերանց ին գինամ (ծածանում էին): Բս տարի արտերը շատ լէաւ ին, պատճառն որ համ կարկուտ, մծըհատ, մհրեխ, մհկնը, կրմրոկ, թրթոր չին տեսալ, համ էլ իւրան ժմընակին թոր էլ եկալ, իւրան ժմընակին էլ արև ըրալ: Արտերը ոչ ժենզեալ էր կոխալ, ոչ էլ ժախուր խեղտալ. արտերը կարգին սարգին ոտ ին կացալ, էնչանք սէրուն, էնչանք մաքուր, դիւ ասես թա սամնդրուած ին:

Հունց որ աման գեղերում, ըսդհեց էլ Կարպատում պարստեցին հնձելու, կրելու, կսելու մհար, հինչ որ կար: Հնձելու մհար չին, ըուըշակապ, մննանուց, ջրակոժ, ջրըկոլա: Կրելու մհար էլ առաքա, լուծ, սամի: Հու որ արաբա չօնէր, ճեղի ըրաւ, կացնաւ, ետաւ հուրագաւ տաշեց, դիւրաւ էլ ծկոտեց արաբի ըկներին թոփերը, կռները. ետաւ թոփերի մէջ վոր տուաւ դանդաները, ըսդրանց գլխաւն էլ դարանները (կրունկները) սեպերն էլ վոր տուաւ, պնդըցրուց դարանները: Կռները մինմնու մօտ բերաւ, կռների մէջաւ, ծկոտած տղերաւ անց կցրուց զեօտինները, վոր տուաւ մախառները, ծաղերը, տախտակները, կռների տակի արջերը, կաքեւները, ետի ու ըռաջի կարմիւնչ տախտակները. զռնին էլ դրաւ էրկու ըկների մէջ, քցեց տան տակը, մհւառւիքն էլ հնցրուց կռներին ու լուծին մէջ. կռղանն էլ պատրաստ էր:

Կսելու մհար էլ հու որ (ով որ) օնէր պատրաստ կամնը, մհան, կռեշան, կլաթի, քմելի, եղոլի, ծըխեւիլ, կակուր էւիլ, շտարար, պահեց. հու որ օնէր ոչ, բէանդռումի դամիլ տուաւ կմներին տա.

կերը, կմսղքարաւ էլ մին լէաւ քարեց, մնացած ներն էլ պտրաստեց:

Կարպատայ հունձւորները գինացին, որ առաջ ջրովի արտերը հնձեն: Աման մարդ իրեսին խշընաց, Բատծու փառք տուաւ, չոխան ու խլեղը հանեց, քցեց զրամանին երայ, հանցու որ ջիւրը տրքանայ ոչ (եա ջրեկուան դրաւ չուքարան ծառի տակ) ըռջակապը հնցրուց պոկը, կապերը կապեց մէջրին, շինը երկալաւ, իրեք փետի, մին մէշունի մննանոցները տղուարեց ձախ ձեռնի մններում, եալլուխը կապեց զլխին. Էս կարճ աղօթքը ըրաւ ըղութքանին. «Ճին կինաս Աստուծ, տուածդ ուրխութինի արժան անես, Քեզ փառք, Աստուծ», ետաւ հնձեց:

Աման հնձող առաջ ձեռնի շինաւ հնձեց, ձախ ձեռնի հափուռը լցրուց, ծեղպատ տուաւ, մին էլ ընդրա զլխաւը հնձեց, էրկու ծեղպատն էլ տուաւ, շինեց մին ծանկ. ետաւ դրաւ հնձուած տեղում խոզանի մէջ. ըսդհենց հնձելաւ իրեք ճանկ տակին դրաւ, իրեք ճանկ էլ ընդրա զլխին, իլաւ մին կուտակ: Ետաւ աման հնձող ցորնի արտերից քանդեց կեմացու ցորեն, շինեց կեմ; իրեք կուտակ մին կեմի մէջ զնելով կապեց խորանը, խորսներն էլ տեղ տեղ հւըրելաւ քորդակ դրաւ (թուփակ): Էսա ըսդհենց հնձելաւ, կպելաւ, թուփելաւ հնձեցին գիշարու, ցորնի արտերը: Մինմնու հետա հսալ ին մնացած արտերն էլ. լոխ էլ հնձեցին, կպեցին, զիգեցին: Արաբաներաւ էլ ճըհաճու կրեցին խորսները կլերին կշտերքին դիզ տուին կարգին, որը բիւլոր, որը չորս-սուանի, որն էլ եղցու ձեւաւ:

Աման մարդ բահաւ քերեց իւրան կալի խոտերը, ժենդեաները, կածուկները. կնանիքն էլ սըրբեցին, աւկեցին, դիւս թափեցին քերուածքը, զրեցին կալերը, երրայ էլ ցրկ տուին գարման: Աման մարդ, կնեկ, հարսնը սուրը ծեղին վազ տուին կալերը, գեարու զիզին գլխան խորսները թող թող ըրին կլերին մէջ, եղոլաւ քանդեցին, ցցւեցին, աշան ըրին, ցորնի կեմերը զոկեցին, կուտեցին ցորնի զիզերի կողըին, կամները զրին աշանների երայ, լծեցին հղները, ձիանքը, ետաւ սկսեցին կասեկ: Աշանները էրկու հետ եղոլաւ եղեցին, էրկու հետ քմելաւ, մին հետ էլ թիաւ: Հիպու որ տեսնում են աշանը իլլաց (մանր կասուեցաւ), կասուածը միանաւ թուփ են անում թեղ տամ քամին փշացած կողմում, ճխելաւ, հետան էլ կակուղ էլկաւ մնացածը սրբում, խառնում թեղին հետ: Ետաւ տղամարդ, հլիւոր կամ հեր ու որդի կամ էրկու աղքեր կամ մրգունեկ ըջւըձախ ուտը կացան, առաջ քմելաւ, ետաւ էլ թիաւ քմեցին թեղը, ետաւ էլ շտարարեցին, չուալներաւ կրեցին, լցրին տներին մին անկիւնը: Էսա ըսդհենց են կասում տրեկան մնացած ցորեն, գելունանի, հաճար էլ:

Ցորնի կալերը կսելիս, քմելիս, մին էլ տեսնում ես ըրկիւնադէմ մինմնու հետայ կալերը թիւուեցին մին մին չուալ, խուփճին, տոպքակ, քսակ, պարկ եր կալած իրիք ոննանի դառած, մէջրան կուացած հլիւոր, ջագուքեար պառաւ, մին եա էրկու ոննաւ կաղլիկ, ոննին մինը փետաւ կրկատած, մին ձեռնը գոճ եկած եա չուրացած, մէջրը կուզիկ, բոռ ա-

շուղ, աշքերը շիլդի, Ըդամայ մնան տկլոր զուրդօղ-  
թ, փափաղը կշղակի բուն դառած բօշա, օպստոսի  
ըղուէսի մնան մազերը թափած դարաշի, օձի տոպ-  
րակը կողքան կախած օփսունչի, փափաղը բրդրդիւ-  
սած դէօվրիչ, ես հինչ գիտամ պրկըպիոյ ածող,  
բեօսազեալդի, սուտոնի շորեր գեցած մարդ, մէյ-  
մոն պարածող թողք, արջ խղզնող մալական, ախր  
ես ո՞ր մինը գեղրեմ, ո՞ր մինը թողեմ. ախր էս իմ  
բէանն ա. ըսդրանք եա պէտում ա Աղքատասիրաց  
ընկերութեան գրագիրը մին մին տղտեղ գեղրէր  
եա էլ պրիստաւ Քեարիմ-թէկի միրզան դէաւթար  
քցէր: Հինչիցէ, հա էն ի ասում, էդ օգողները լոխ  
էլ շոռ են գեամ Կորպատայ կալերը, գեարի,  
ցորեն հւարում, տանում:

Աստուծ օրհնի Հայոց ժղովուրդը, իւրան հա-  
լալ ըշխըտանքաւը, ճկատին ծծլալիս բրտնքաւը՝ կե-  
րակրում ա ըշխարհիս մըշեմները, հաւքերը, աղքատ-  
ները, վնքերի, անապատների միաբանները, քահա-  
նէրը, ուստէրը, եկող դինացողը. պատճառն որ իւ-  
րան բորբանումը գեղրուած չի. «Ճալ չեմ»-ը, բրա-  
նումն էլ «կայ ոչ»-ը: Աստուծ օրհնի Հայոց ժող-  
վուրդը. թագաւորին բեժինն էլ են տամ, բէակին  
բեժինն էլ, Աթոռին բեժինն էլ, կնդստորին բեժինն  
էլ, իւրան տէրին, դլաքին, գունագին, վրժըպեաին  
բեժինն էլ: Աստուծ օրհնի Հայոց ժղովուրդը, ոչ  
ոնքը փող ա քցում, ոչ իրեսը թթւցնում, ոչ էլ  
ճակատը մրկիցնում. իւրան դինաւը, իւրան կալաւը  
մտնողնին սրտաւ տամ ա, օրախ օրախ հղի քցում:

Որերը սրբեցին, դիւս տուին, որը խուզանաւ

կղխըց, որը բեխի ծառի տրեաւ. ցորեն, գեարի,  
գերոնանի, հաճար, կորեկ, լոխ էլ լցրին որերի մէջ,  
տախտակները շրեցին որերի ըռեխներին ելրայ,  
ըսդրանց ելրայ էլ խոզան, խուզանի ելրայ դար-  
ման, դրմանին ելրայ էլ վեղ ըծեցին, անդցրին:

## ԺԱ.

Օպստոսի 15-ն էր: Մըերումն էլ թողլ չէր  
մնացալ, քաշուալ ին, իլիմ իլիմ կորալ: Էնչանք  
պարզ էր, էնչանք պարզ էր, երկինքը հենց էր նոր  
կլեկած մին զե՛ռ սինի ինի:

Հուզգուն, զարաղուշ, անգ, լաշին, չղան լոխ  
էլ դէօվրան ին դիւս եկալ, բաձրի տեղաւ շոտրշոռ-  
տու ին անում Մուաւայ ելրայ. ըսդրանց թեներին  
վշլշոցան հենց հմարի թա մարդ քումում էր:  
Լանջերը լէն, միխակի տեսքաւ, անվախ հաւքեր են  
լաշինները: Ըսդրանք իւրանց բուները շինում են  
բաձրի քրծերի ճկտների ճեղքերում, Լաշին-Լայա  
քերծում: Ըսդրանց բուներին ոչ սուտանան իւրան  
ստունու թիւնաւ սերտ կ'անի, որ մուտանայ, ոչ էլ  
օրիշ հաւք՝ իւրան հաքըթիւնաւ, պատճառն որ մին  
աչք ճպելում աչքերը կը հանին:

Դուռնաներին (կոռւնկ) ձենը, Բղկադան գեա-  
լիս եա Բաղգադ գինալիս, որ լսում են լաշինները,  
էն սհաթումը դիւս են գեամ իւրանց բուներան,  
բձրանում երկինք, որ զժժըտակա՛ծ երնուց գեալիս  
են, շեկտում դուռնաների շրանուկին, մին էլ տեսա՛ր,  
չորս հենգ հատ դուռնա շրա՛խք վոր ընկեան: Լա-

շինները նի են հմնում ըսդրանց հետան, ծիւ ծիւ անում իւրանց որսը, գերզում, մնացածն էլ տանում իւրանց շհացած (մեծացած) ճուտերին։ Մնացած դուռնէքը ցըս են գեամ, կռկռամ, բիւրպատ շոտըշոտու անում չորսն էս, վեցն էն կիւսաւը, տասը՝ վարվեռ գինամ, կռկռալաւ էլլրհա մին տեղ հւաքուում, շրանուկ ըրած գինամ իւրանց հղին։ Էս հւքերին դաւի-դարարան, գինգատն ու սկեստին աման գերողի բէան չի, պատճառն որ «Էս թան չի, աման մարդի բան չի»։ Ֆերրողը պէտում հւքերի լիւզուն հոկացող ինի, հւրաբան ինի. անջնւկդ կանչի Դարւէն։

Աման ըրիւկին որ օբէրն են հւաքուում չօրան, տւարած, որթարարած, գերոնարած, շուրու հաց օտիլլ ըսդրանցանայ աման մինը ասում ա թա էն օրը հինչ ա տեսալ, հինչ ա պտահալ, իւրան գլխաւը հինչ ա հնցալ։ Մինն ասում ա.

—«Ապէր (հայր), բա ապիլ չես, ըսօր մին կինտ գիւլ եկը, որ մեր Խինա կովը օտի։ Բէարաքեալլա մեր Ղափիլան շոն, ընդհենց մին ելրայ պրծաւ, ընդհենց մին ելրայ պրծաւ, որ Շրուանը գէս թողեց։ Մին օրիշը ասում ա իւրան մօրը։

—«Այն, ըս օր կսօրին մօտ էրկու քաւթառ գիւլ եկին, որ ելրայ տան մեր որթերին։ Ամմա չները առաջ հոնացի տեսալ ին. մին աչք ճապելում նի հսան, չորս կիւսաւը պտեցին բիւրպատ։ Դիւլերան մինը սուտունի մնան փախաւ, պրծաւ։ Էն մինը կարաց ոչ թա չներին ձեռքան պրծնի։ Աչք բարին տեսնայ, չներան մինը գիւլին խզըկոթան

բռնեց, մինը՝ մէջրան, մինը՝ դունտան, դարթու դարթու ըրին. բրդրդերդի տալաւ սպնեցին։ Մեկալը.

—«Այն, ըս օր գեառները ըրթելիս, ըրկունին կեռքները հենց դինալ ին, հենց դինալ ին, դիւ ասես թա ոսկաջրած էր»։

—«Այանը քը մատաղ, Մալքենւմ, էս սարումս կայ ըդհենց խոտեր, որ ոսկախոտ կասեն։ Հինչ տաւար, գեռումաշ, ոխճար, որթ, որ էն խոտան օտում ա, էն սհաթումը կեռերները ոսկաջրում են։ Լիւսահիւգի մեր պապերը, տատերը ասում ին. «Ճու որ էն խոտը ճնանչի, տակռաւը պուք տայ, պահի, հինչ պղնձի, ըրծաթի, ըրկաթի որ քսի էն խոտը, էն սհաթումը ոսկի կը դէառնայ»։

—Այն, դէ որ ըդի ա, ես աման օր աշրս ելրայ պահեմ, էն խոտը գտանամ, քաղեմ, շատ ոսկի շնենք. հրստանք, բէակզատա դառնանք»։

—«Զէ, քը մատաղ, կարալ չես գտանաս, գեառներն էլ գիւլի կը տաս, մեզ ըդի բախտ հնտ կը տայ։ Ճատ մարդիկ չըշարուալ են որ էն խոտը գտանան, ամմա չուրու մհեկ իսկի գտանող իլալ չի։ Օրիշը.

—«Պէծի-ապեր, ըս օր դէօվրան ին դիւս եկալ զուզուն, զարադուշ, թաւար-դուշ, լաշին, անգ. մըշանք շատ ին, մշանք շատ ին, դիւ ասես թա երկինը թուղպած ինէր։ Հենց ին լիա սկ գեցած ինէն. ոխճարի, գերռների սիւրիւների զլխաւը շոտը շուտու ին անում։ Ըդրանցանայ մինը որ երնուց վշշալաւ եկը, մեր պիծի գեառնը ճանկերը կալաւ,

Էլլրհա մին աչք ճպելում բձրացաւ։ Ամմա մաշալլահ Պտրուսանց Սարգիս, թիւանկը ընդհենց լէաւ նշան կալաւ, որ զարալուշը թեերը թիւլացած եկը, տափին վոր ընկաւ, գեառնը ըզատուեց։ Ամմա հինչ անես, մին օրիշն էլ ելրայ տուաւ, Գէորգ-քեռւխանց չնըլակուտը տարաւ։ Մեկսալը.

— «Մեծ-հարսնը, ըս օր չեշտին մին քերծի կշտի չները բունակ ըրին, հջեցին, հջեցին։ Զոխտակ լիւլանին ձեռնիս բռնած վաղ տալաւ մուտացայ. հինչ տեսնամ, Մեծ-հարսնը, հինչ տեսնամ։»

— Ա զա, դէ ճելի ըրա ասի մին տեսնամ, սերտս ճարեց հինչ ես չանադ թիւլցրալ։

— «Մեծ-հարսնը, հինչ տեսնամ, հինչ տեսնամ. մին զե՞ռ արջ, արջ եմ ասում հա՞. քութթամեր արջ, բրդբրդոդ, անջուկները մեծ մեծ, մզմազոտ։ Հաս որ նշան չի կալայ, կլլրկոնծի տուաւ բաձրի տեղան մրժմրժալաւ, փնթփիլնթալաւ զրխկաց տափին. կաշին մաշկալ եմ, բերալ։ Մշկելու ժմանակ էլլրհա չները բունակ ըրին, հինչ տեսնամ, հինչ տեսնամ, բա ասիլ չես, սպանուած արջին որձ հընկերը՝ մին կտոր մես ըռեխը կալած՝ տանում ա քթութներին։ Նշան կալայ սրտըգթէօլին, որ գիւլլան նի չի եկը, բուլղի կտրեց, թրմնի լնկաւ քերծին տակը։»

— «Բէարաքեալլա՛ թիւնի, տղամարդը պէտում ա ըղի սրտոտ ինի, լէաւ նշան օնսոգ ինի։ Մեկսալը.

— «Լաշինները մին քանի հետ ելրայ տուին գուռնաների շրանուկներին. ամմա հունց ին կոկամ, հունց ին վրլթամ, ասուիլ չի գեալ։»

Օպոց մարդիկ, կնանիր, ըղջկերը էլ ասում են

իւրանց տեսածը, լսածը տւրըծներին ու չօբաններին. «Ըս օր մեր տէրն եկը, էրկու մանուկ կնքեց։ Մին մուղդուսի եկը, հւաքեց եղ, բիւրդ, պանիր, շրաթան, եր կալաւ, գինաց։» Հսօր բիւրգերը ծխեցինք. ըս օր տանան ըզրկալ են մըզմհար կանանչ լոբի, ձմերուկ, եմիշ։ Եսա ըսդհենց են մինմնու ասում էս, էգ, էն, մինը, մեկալը, մեկսալը։

Անուն մերը սաջաւ թրթերուտ էր թխալ, էրկու հատ տուաւ Անուն ու ասեց. «Ճաք տաք հրմեժին տար Պտրուսանց տն, եկ։» Սարգիսը տաք տաք եր կալաւ մինը համ ըշտահաւ կծոտեց համ էլ Անուն հետ խօսեց. «Անա էս հինչ լէաւ թրթերուտ ա, էս հու ա թխալ. Անա, դիւ ես թխալ թա մերդ։

— «Ես հունցալ եմ, իմ մեր թխալ ա։»

Սրգիսին մերն էլ մին ձմերուկ ըզրկեց հրմեժին Հիւմնունց մհար Անուն ձեռնաւը։

Հունց որ աման տարի, ըսդհենց էլ ըս տարի չօբանները ըրվիւնանց խօսք մին ըրին, որ էկուց ըռւտհանայ ուխտ գինան Մուաւայ սորբը։

## ԺԲ.

Հրըբաղին առի բաձրի սրերան մինն ա Մուաւ սարը, որ ընկեած ա ծար, Ըռատակ, Զրաբերդ, Կիւլստան և Գարդման մհաներին մէջ։ Մուաւայ առի բաձրի կատարն, որ սահրատ ա Զրաբերդ ու Կիւլստան մհաներին, մին զե՞ռ ցեց, ապառաժ, ժեռը բարի թումբ ա, պղղած Մուաւայ գլխին ելրայ։

Մեր պլանչիքն ասում են որ էս կտարին բձրոթիւնը 11219 ոտք ա: էս կտարին ելրայ բձրընալու մհար էրկու դժրհամբիւր կեծան կայ—մինը Կիւտասնի կիւտան, էն մինն էլ՝ Զըլքերի մհալի կիւտան: էս ժեռ քար սարի գլոխը մին մեծ կալի չանք տափակ ա, տափակ տեղի չորս կողմաւն էլ մեծ մեծ քարեր շարած, հանցու որ մարդ վոր չընկնի: էս շարուած քրերին մէջ մին սիպտակ խաչ քար կայ, որ ուխտատեղ ա, անումն է Մուաւի սորք: Մեր լիւտահիւգի պտերան մին քանինը ասալ են.

— «Էս Մուաւ ճինաւորին գերեզմանն ա, որ թաղուած ա էս սիպտակ խաչ քարին տակին»:

Մին քանինն էլ ասալ են.

— «Որդիք, էս սորբը մին լէաւ բրիստոնեայ հայ ա ինում. անօրէնները գեալիս չրշարում, տանչում են, որ Լուսաւորչի լիւս հաւաաքը ուրանայ, ամմա ուրանում չի. ասում ա.

«Չեռք չեմ քաշիլ լիւս հաւատան,

Հոանալ չեմ իմ Քրիստոսան,

Թէ կուզ կտորէք, ինձ սպանէք,

Ինձ չէք զոկիլ Լուսաւորչան»:

Ըս տեղ նհրտակում են, ելրայ լիւս ա դամ:

Զօրանները հնցան Թրդին գետաւը, բձրացան Մուաւյ սորբը, աման մինը մին խորհուրդ օնէր, աղօթք ըրաւ չօրան Մուսես մրգին, չօրան Դաւիթ մրգին մնան, խնդրեց Հստուծանայ, Որ կտարի էն խորհուրդը: Սարդինն էլ աղօթք ըրաւ իւրան մհար էլ, իւրան Անուն մհար էլ. ամմա ետաւ ասեց մին

խրեկ պենդ պենդ, պատճառն որ ինքն լոխցա ետ էր մինակ աղօթք անում.

— Աստուծ, իմ ջանս Քը մատաղ, ես չօրան մարդ եմ, գիտում չեմ թա աղօթքը հունց կ'անեն: Աստուծ, իմ հիւգիս Քը մատաղ, իմ հօր սերտը թա որ սառած ա, տքցրու, թա որ արկաթ ա, մում շինի, թա որ պողուատ ա, կըկցրու, թա որ քար ա, մռամոշ շինի, որ ինձ Անունանայ ջոկի ոչ: Մինակ էս ա իմ խնդիրքը Քզանայ Աստուծ:

Զօրանները, որ խառնալ ին գեառները կթի ոխճարի հետ, որ ցմաքալ ին, էլ կաթնը շին տալիս, ուխտ ընելան ետը, ետ դէառան դպի օրէրը. ըսելաւ, խուսելաւ, ծծղելաւ օրախ օրախ: Գերոնարածներն էլ, որ էդ օրում պահալ ին ոխճարները, անդնաս էլլոհա պահ տուին չօրաններին:

## ԺՊ.

Օգստոսի 25 էր. պկասալ ին սրերին խոտերը, սկսալ ին ցրտերը. աման սար գինացող հունց որ քոչալ էր ըրանան սար, ըսդհենց էլ սրերան քոչեց, քշացաւ արան, աման մինը գինամ էր իւրան ձմրնանցը: Մեր հայ քոչն էլ քշացաւ Թրթառայ ելրայ, մին քանի օր մնայ. ետաւ հնցաւ Մոսանկի կրմնջաւը, էրկու շէրէթ էլ մնաց Երի-Գիւլաթաղ: Աման մարդ եկը, իւրան պահ տուած ապրանքը առաւ, տարաւ:

Սարան քշընալիս ամմա օր Սարդինն ու Անան մինմնու կշտաւ ին գինամ, ասում, խօսում:

Մին հետ (անգամ) չօբան Սարդիսը հղի զինալիս առում ա Անուն:

—Անա, էսա որ զինանք Ղարա-Թափա, նոր զինաւ՝, նոր հացաւ մին լէաւ հրսանիք ենք ընլացուք. պատճառն որ իմ հեր ասալ ա էս խօսքը, լսողներն էլ եկին, ինձ լսեցին։ Անա, մեր հրսննքաւը լէաւ պէտում ա պար գեաս հա՛. շաբաշ եմ տացուք։ Ծներաւկ էն օրին, որ մեղ ժամ կը տանեն պսակելու։

Անան հմնչելան կրմրեց, աչքերը տափին կալաւ,  
իսկի խօսեղ ոչ:

—Աղջի Անա, բա խել խօսում չես ինձ հետ,  
դիւ աման օրուայ Անան ես, ես էլ աման օրուայ  
Սարդիսը. ետ մի մնալ, եկ, հմանչիլ մի. դէ մին  
ասի, տեսնամ, հինչ ես ասում:

Պայծառ ըրիգնակի մնան պարզ էր Անուն  
սերտը, հիլու մնան խստակ մետքը, հրչուակի մնան  
մնմեղ հիւղին. պատճառն որ քլուած տճարի դրան  
մնան ասես թա փակուած էր Անուն բերանը. Անան  
մծացալ էր, պտկառանքը եադթում էր, սէրը ծածկու-  
ում էր հմօթան։ Անան մինակ սրտի լիւզուաւ էր  
տալիս Սրգիսին հարցին պոսխանը, կախ գլխաւ,  
քաշ կալած ըչքերաւ էր խօսում իւրան սրտի սիրա-  
կան Սրգիսին հետ։

—Անձ, դիւ ինես իմ արկը, էս խեր քնլտե-  
ղին հինչ ես ասում:

— Մարզիս, նղանալ մի, Քստծու կամքաւն ինի:  
Մարզի սերտն, որ կայ, հենց ա մին տաճար  
ինի: Հոնց որ մին եղցում (Եկեղեցում) տեսնում ես

օրախ օրախ մին տղայ կնքեցին. Էպսի օրն էլ առօք փառօք պսակ ըրին, էն մին օրն էլ համուզ հանգաւ, բաղցը ձենաւ տիրացուները պտարագ են անում, մեկսալ օրն էլ էն եզրումը տեսնում ես մին մեռալ նաժում դրուած, էլլո՞ա էն քննէքը, էն տըրցուէքը սոզի գեանձ ըսելիս: Տեսնում ես ուրխովթիւնը փոխուալ ա տրտմովթիւնի, կնոնքը՝ պսակի, պսակը՝ մոլի, պարը՝ լացի, հրսանկքը՝ սոզի: Եսա ըսդհենց բէաներ են հնցնում աման մարդի սրտերաւն էլ. պատճառն որ տարին տարուն չի յրմարում, ամիսն՝ ամսին, շէքէթը՝ շէքթին, օրը՝ օրին, սհաթր՝ սհաթին, մնութն էլ մնութիւն:

Ուրխութիւնաւ լցուալ ին մեր Սրբիսին ու Ա-  
նուն սրտերն էլ. պատճառն որ Սրբիսին հերն ա-  
սալ էր թա ըս տարի հրսանիք եմ ընացուք, նոր  
հացաւ, նոր գինաւ, նոր շուրերաւ պսակիլ եմ տլա-  
ցուք Սարգիսը Անուն հետ. աման հինչ պտրաստում  
եմ, որ ըշունքիս ետի ուրերում հրսանիքը բռնեմ:  
Ամմա զեղան մին բարեկամ մարդ էր եկալ Երի-Գիւ-  
յաթաղ, որ Սրբսին մօրը ասում ա.

— Զէարեարան մետքը փոխալ ա, Էլ օգում չի  
որ լստարի հրանիք անի, պատճառն որ ասում ա.  
«Տղատէրը ես եմ, Էն աղջկիք (Անան) օգում չեմ».  
մին էլ ասալ ա. «Մին օրիշ աղջկի եմ ուզլացուք,  
հրսանիք անեմ տղիս լս տարի»:

Էս խօսքերը հմտում են Սրբիսին ու Անոն, ըրկորան էլ շատ տրտմում են, իւրանց սրտերի ուրիշութիւնը փոխուում են տրտմութիւն. Էրեկ որ էն-

շանք օրախ ին, ըս օր ընդրա տասը չանք տրտում  
են, դիւ ասես թա սգլոր ին:

Անան կոժը եր ծնում, գինամ ջուրը, լցնում,  
քաշուում մին անկիւն հանցու որ մարդ տեսնայ  
ոչ. ետաւ չոքած անում ա էս ազօթքը. «Աստնծ,  
Քը մատաղ, ես մին չօրան աղջիկ եմ, ոչ դիր եմ  
գիտում, ոչ էլ կարդալ. իսկի գիտում էլ չեմ թա  
ազօթքը հունց կանեն: Մինակ լէաւ գիտում եմ որ  
Դու ես իմ ստեղծող Աստուծը, Տէրն ու Տիրականը.  
մինակ լէաւ գիտում եմ որ խոխերքը մին շատ ուր-  
խացած ժմանակ, մին էլ շատ տրտմած ժմանակ  
վագ են տամ զը պի իւրանց հերն ու մերը, ընկ-  
նում ընդրանց խտեղը, եաւ ուրբառթիւն անում  
եաւ լաց ինում: Աստնծ, Քը մատաղ, ես էլ եմ Քո  
ըրախան, էս նեղ ժմանակս լաց ինիլաւ զըպի Քեզ  
եմ վագ տամ մլորուած մտքաւս, Քո խտեղը ընկ-  
նում տրտմած հիգուաւս, կոտրուած սրտաւս: Աս-  
տնծ, Քըզանա խնդրում եմ, Որ Սարգիսը հղար  
ձեռքաւ պահես. Քըզանա խնդրում եմ Սրգիսին  
հօրը սերտը կըկղնես, որ բարի խօսի էս խեր  
բէանումը. պատճառն որ Սրգիսին սերտը բարակ ա,  
զըմանալ չի իւրան հօրը չար ըրբրմոնքին: Աստնծ,  
Քը մատաղ, թա որ էս խեր բնատեղը (ամուսնանե-  
լը) զլոխ չի գեայ, առաջ իմ հիւգիս առնես, մեռ-  
նեմ, պրծնեմ, հանցու որ տեսնամ ոչ աշքաւս Սրգի-  
սին հալին ու մաշուիլը, հիւղոթիւնն ու մահը:  
Աստնծ, հիւգիս Քը մատաղ, թա որ իմ ազօթքը  
զուր չի գեայ Քեզ, ընձանա նղանաս ոչ, պատճառն  
որ ես մին չօրան աղջիկ եմ»:

Էս ազօթքը ընելան ետը Անուն սերտը թիթե  
էր, մետքը՝ տեղը, հիւգին օրախ. դիւ ասես թա  
Սարգիսն էն էր (ահաւանիկ) Անուն սրտումը, Անան  
Սրգիսին սրտումը, Աստուծ էլ էս ըրկուգանին սըր-  
տումը:

Զօրան, գեղոնարած, տւարած, մարդ, կնեկ,  
տղայ, աղջիկ, լոխ էլ լիքը, պաւարտ, կարմնելու,  
վարդի մնան շփղշափաղ ընելիս: Իրեմներին որ  
մարդ եշում էր, հենց գիտաս թա պծըպեծին էր  
տալիս: Մարդ մարդի խօսում ա թա. «Մարան նոր  
վոր եկած ա»: Մլեօնչի հևանդ մարդիկ, կնանիք  
կան, մին միլեօն մանէթ կը տան էն հաքիմբաշուն,  
թա որ կարայ էն հեանդները ըսդրանց մնան լոց-  
նի, թա որ կարայ Լողմանու դղերաւ ըսդրանց  
պաւարտոթիւնը տա ընդրանց:

Ոխճար, տաւար, գեռումաշ, ձի մշանք քիւքեա-  
ցալ ին, որ մազը քշիր, եղը՝ կը կաթէր:

### ԺՊ.

Կսըպտեցուց, Մարդակերտացուց ու Հռութղեցուց  
ձմբնանց գեռումերն ա Ղարա Թափիան, որ Մարդա-  
կերտան քաշ ա: Էս տեղ շինած են տներ, գեռումեր,  
օթաղներ, կալեր, կլըպաններ, մարագներ, դալեր:  
Էս տեղ բնակուող մարդ, ընասուն, լոխ էլ խմում  
են Թրթուայ դիւս բերած Ջիւ-արխի ջրան,  
հնցնում ա Ղարա-թփի տակաւը ու ջրում Կսըպե-  
տեցուց արտերը, որ ըստեղ կասալ ին, դարմանը  
ցյրալ մարագները, կլըպանները, խոտերն էլ դիզալ,

հանցու որ ձմռնապենդ իլած ժմանակ մնան ոչ սոված ոխճար, տաւար, ձի:

Ըշունքուեխ էր, մին քանի հետ թոռ էր եկալ, տափան չորս մաննի հստութիւնաւ բձրացալ էր կիւղուակ խոտը (աշնան խոտ, բառ փոխարերական):

Հայ քոչը հսաւ Ղարա-թափա, աման մարդ ճելի բրաւ, բեռները վոր բերաւ կլերում: Դորդ ա մոծակը պկսալ էր, ամմա էլլըհա դիւս են գեալիս տների, դեռումների, օթաղների պտըծկերան, քեօքանում փողն ու զուռնան, ոազն ու թառը, սանթուրն ու քեամանչան, ըծելաւ պչպչորում նոր եկած զոնաղներին իրեմները, ճակատները, քթերը, անջուկները, ձեռները, մատները, ընդետը ասում. «Բարաւ էք եկալ, բարաւ էք եկալ, հզրբարի էք եկալ»:

Տները, գեռումները մտնիլը հեշտ բան չէր. պատճառ որ ամեռնը մարդիկ քաշուում են, ըս տեղ մարդ չի մնամ: Լիւն մշանք շտացալ էր, որ մարդ սերտ չէր անում թա տներին ու գեռումներին մղակներաւը նի մտնէր: Հունց որ աման տան հարմն ու աղջիկ, ըստհենց էլ մեր Անան, առաջ ճիւէլաւ սրբեցին տները, օթաղները, գեռումները, ետաւ էլ կակուղ էւլաւ. ետաւ էլ սրբեցին տների օնցերը, մին էլ սրբեցին տները: Կրդացնդ, Ըստուծանայ եմ կանչալ որ նշ աչքաւդ տեսնաս սրբողներին քաշածը, նշ էլ լուանցը դժղժոյը: Լուանքը մրջեմնի մեան զիրաւ ին հնցալ սրբողներին ոններան չուրու գլոխները: Լուանքը, էն սոված լուանքը ընդհենց կծոտում ին, ընդհենց կծոտում ին, որ բուզի բուզի ին ածում, երբոր անիլ տամ, դիւ ասես թա հարիւր հզար

մխաթաւ ծկոտում ին խեղճ սրբողների մարմինները: Լոխ էլ վառալ ին թորենները. սրբողները իւրանց շոքերը թափուկին, պրծան, ետաւ տղստեղ, սաք սաք տղւրեցին տնամէջը-իլած բէանները:

Մեր հայ չօրան, մարդ, կնեկ, մեծ, պիծի էս գիշեր թա հոնց լիւսցրին, մոնք կարալ չենք էդ գելրենք. պատճառն որ էդ գելրիլը աման թանաք լազգառղի բէանը չի. էրկու հայ աշուղ, որ Ղարա-թափումս պտահալ են շատ տարի առաջ՝ տարուան էս ժմանակներում, մին մին գիշեր էլ ըս տեղ մնացալ, լուին ու մուծակին չնորհները վայելալ, մին մին խաղ են կապալ ըդրանց երրայ, ըռաջինն ասալ ա.

«Մինը չի, էրկուսը չի, հարիւր հազարով ա գալիս, Լազկի չի, թաթար չի, ամմա սարասկեար դո-շոնով ա գալիս, Թօփի չունի, թուանկ չունի, բզով, մախաթով ա գալիս. Էս քեափուր լուի ձեռքից լազկի հանգի պար եմ գալիս:»

— Են մինն էլ ասալ ա.

«Հարիւր չի, հազար չի, հարիւր հազարով է գալիս, Հարսնիք չի, պսակ չի, ամմա փողով, զուռ-նայով է գալիս, Մեժլիս չի, մածարք չի, սազով, քեամանչով է գալիս.»

Յաւ չունեմ, մոծակի ձեռնից խղացաւով <sup>1)</sup>  
պար եմ գալիս:

Տակից լուն, պլխից մոծակ,  
Ոչ կրակ են, ոչ էլ կայծակ.

Ալս, որ տեղ ես, սնւրը լուսածագ,  
Քուն չի կայ հէյ, ա տնածակ. (Նաքարատ)  
Հարիւր չի, հազար չի, հարիւր հազարով է գալիս,  
Հարսնիր չի, պսակ չի, ամմա փողով, զուռ  
նայով է գալիս,

Մեժլիս չի, մածարը չի, սազով քեամանչով  
Է գալիս.

Յաւ չունեմ, մոծակի ձեռնից խղացաւով պար  
եմ գալիս:

Մինակ պակաս ին տմբլան ու քալաբանը,  
անկնւջդ կանչի Տմբլաշի Խաչն ապեր. նանը կծի  
ճղոտուած տմբլադ, ծուանը կոտրած զուռնադ եւ  
էլ հիւնի կոպաներդ. հինչ տեղ որ ես, տմբլադ եր  
կալ նի հսի, պատճառն որ մարդիկ առանց տմբլի  
են պար գամ:

### ԺԵ.

Մեքտեմբերի ամիսն էր. ամմա դիտում չեմ  
թա քանիսն էր: Թա որ Կողապատայ տրերան էլ  
հրցնես, լոխ էլ դիտալ չեն թա քանիսն էր, պատ-

<sup>1)</sup> Խղացաւ է կոչուում Սաւուզ թագաւորի  
հիւանդութիւնն, որը բժշկում են Արցախում շեփո-  
րով կամ նուագարաներով պար ածելով:

ճառն որ լոխին գեղումն էլ խառնուած էր:

Ժղովուրդը պրծալ էր հունձայ, կալայ, կոտայ:  
Բղըտէրերը պտրաստալ ին քղելակ, կծոց, շարա-  
միւշ, կարաս, քոցի, ածօկա, քեարիսանի դզնան,  
սէարփիւշ, նով, լիւլա:

Բղերին մղակներաւը որ մարդ նի էր մտնում,  
հենց էր գիտում թա մեր Աղամ պապու Դրախտն  
ա մտալ: Սեւ, սիպատակ, կարմուր, լուզուրիկ լուզ-  
ուրիկ խաղողները փլստրատին ին տամ, շվրոշափաղ  
անում ճթերան կախուած: Ճթերան որը թոշին  
մինը ըրեին էր տուալ, որը տիրեներին մէջ գեա-  
ղուալ, որը կախ կախ իլալ, տափին նստալ: Հենց  
թանակ կար, մշանք շատ խաղող էր բերալ, մշանք  
շատ խաղող էր բերալ, որ սարին ծնտրոթիւնան  
տակին ճկուալ էր: Թղի ծոերին երայ հենց հմարի  
թա տրեայ շատ թուզ կար: Ճմթելուկը էնչանք  
շատ բերալ էր, որ ճներին տկերաւը խեչակներ ին  
տնկոտալ, որը բրդբրդոտ էր, որին մին թոշը կար-  
մուր, մինը սիպտակ, որը տկլոր անբիւրդ: Նոռնն  
ու սեւկեւիլը մին խրեկ պակաս ին:

Խղուղին դիւշմանն էլ շատ ա: Որ մթնում  
էր, աղուէս, շաղալ, գշերի բղերին կողկերը ումը  
սիւրիւ սիւրիւ հւաքուած Քիւրդի խաղ ին կանչում,  
ձեները ձեների խառնած Զին-Խաչինի հանգաւ լէյլի  
ասում: Մեծ մեծ բղերում գշերներն մարդիկ կային  
որ պահում ին բաղերը, բէազի բէազի էլ թիւանկ-  
ները տրըցնում ին զըպի լէյլու ձենը եկած կողմը,  
հանցու որ թիւանկներին ձենան, բրութին ոտան  
փախեն, փախչեն կորչեն էն սոված, մինմնու ուխ

կրծկործող, ըլալուշ անող աղուէսները, չաղալները, գշերիները։ Ամմա ըսդրանք էլ պակաս սլեթա չեն, հենց են ինա Թաթարստանի զոշունի համբալսրանում կուրսը վրջցրած, կռուի մէջ ուստա դէառած, դիպոմ ինք կալած, մեր երկիրն եկած ինեն։ Ա կիդի ուստարաշի Դարւին, անկուցդ կանչի. էլլրհա դիւ կ'իմանաս ըսդրանց բնոթինը։ Հինչելցէ. աղուէս, չաղալ, գշերի բոս են տամ, ստունի մնան դէս ու դէս վազվագ անում, ոչ թիւանկի ձենայ են վախում, ոչ բրուժի ոտայ քաշուում, էնչանք սլեթա են. չուրսւ Ըդամայ մութը կշտացնում են իւրանց փորերը, ետաւ իլիմ իլիմ կորչում։ Բղըտէրերն էլ պակաս ուստա չեն. ցրեկաւ գնդում են էդ գեազանների մտած ծակըծուկը, սարում թալակները, բռնում։ Աման ըռտհանայ բղերան լսուում են ձեներ. «Թախը, թախը. թրը՝խը, թրը՝խը. շրախը, շրախը. կեաւ, կեաւ. մը՝ու, մը՝ու. հաւի, հաւի։ Սուտանան էլ ընկնի ոչ թլակի մէջ։ Ուստա Գէորգը քը մատաղ, կրգացող, էս գեազանների քաշածը ոչ բրանի լիւզուաւ կ'ասուի, ոչ էլ զլամի լիւզուաւ կը գերրուի. մինակ կըրպտեցի բանստեղծ Յարութիւնը կը կարայ գերրել։ Քաշում են էրկեան մհակները, տրըքցնում, զորս դիւ պատուիրեցեր, նի պրընելաւ սպանում։ Ամմա դէ հինչ անես, մարդ մարդի խօսում ա. «Հենց ա ինա հօգստոսի աղուէս ինի»։ մազերը վոր տուած են ինում, զարաշու մնան էլ տկլուրացած, մորթիքը դին չօնեն։

Բաղերը հասած եա աչք ընկած ժմնականց չուրու բաղիլը լազաթը տեսնում են հաւերը-պու,

գիւլ-ագուև, կչեղակ, չարտ, զոզուան, տուլաշ, տոռն, տետրակ, ժեռ, մշհաւ, ծետ, չլածետ, մղրաճանճ, սւաճանճ, գեղին ճանճ լոխ էլ հւաքուում են բաղերը, ըսդրանք գլխան են օտում, աղուէս, չաղալ, գշերի էլ տական։ Ղորդ են ասալ մեր լիւսահիւգի պապերը թա «Տաձին լէաւերը արջերը կ'ոտեն»։ Խղուին, թղին, շմթլուկին լէաւերը հաւքերն ու ճանճերն են օտում, ծծում, կշտանում, լիանում, կտուցներան էլ ծկոտում, թափում թանակներին տակերը։ Են ըշխատասէր մղրըճանճերը՝ ծծում, քաշում, բղբզալի, տղտղալի տանում են շիրաները, լցնում մղրըճացերին ծակերը։

Մարդ, կնեկ, տղայ, աղջիկ մին ըռւտհանայ մտան բաղերը, սկսեցին քաղել։ Առաջ «Յիսուս Քրիստոս» ըսեցին, քղեցին ըղուէսի, չղալի, գշերու ոեխ նի հսած խաղողները արադ քշերու մհար. ետաւ քղեցին լէաւ խաղողները գինի շինելու մհար, լցրին չէարաւիւշները, լուացած ոններաւ կոխ տուին, օշնակներաւ շիրան կրեցին, լցրին պօչկոց մէջ, ճեճաները թափեցին արադ քշերու ճեճի ելրայ։ Հիպուոր գինի շինիլը պրծաւ, մհեկ էլ սկսեցին արադը քաշել։

Մին ընիծքատու պառաւ էլ գեղան դիւս եկը, անիծք տալաւ դըպի բաղերը գինաց։ Կսրպատայ մհծ, պիծի, լոխ էլ վախում են էս պռաւին ընիծքան. պատճառն որ մարդ կենդան կենդան, տանաւ, տեղաւ, հանդաւ, հանդաստանաւ ընիծքաչոր ա անում էս պառաւը։ Ամմա գիտուաց ոչ թա էս պառաւը հիւր էր անիծք տամ։ Հունց անիծք, հունց անիծք.

մին լսողն ա փեշման, մին էլ չի լսողը. մին ասողն ա փեշման, մին չասողը. մին գերբողն ա փեշման, մին էլ կրդացողը: Վախում եմ թա գերբեմ ոչ, ինձ էլ ընիծքաշոր անի էն պառաւը, համ էլ կրդացողը, չի գերբելութ մհար ինձանայ նզանայ, մին անիծք էլ ինքը տայ ինձ. ըսդրա մհար գերբում ենք ըս տեղ, որ սաղ սալամաթ պրծնենք համ պռաւին ընիծքան համ էլ կրդցողին:

«Ծպամարդ մեռնես դիւ. տոնդ քանդուի, պրիշակ դէառնայ. բայզուներն ու ալակոչկոճները բնւն դնեն տանդ մէջ. օճաղդ ու մղակդ կնանչի. վարածդ ոչ կնանչի. կանանչ խոտին գինան՝ չուրանայ. ոսկի բռնես՝ քայր դէառնայ. արծաթ բռնես՝ մոխիր դէառնայ, ձիւկնը բռնես՝ օձ դէառնայ. ջուրդ ծակ կարան դէառնայ. տաշտդ, կարասներդ, որերդ դէարդակ ինեն. օխտը շէն շոռ գեաս, փորդ կշտանայ ոչ. հոմացած փուշիդ թորնան չկենայ. էն ցաւին գեաս, որ ճար չինի. նստես՝ տակդ էրի. եր կինաս՝ գերլուսդ էրի. աջ ձեռնիդ կարօտ մեռնիս, հիւգիդ սուտանան տանի. վեղը քեզ գերբեգման չտայ։ էս ընիծքին պակասը թողեցինք որ Ազարեանը վրջցնի։

### ԺԶ.

Աշունք էր։ Մին քանի հետ թոռ էր ելալ. տափերը փըփկալ ին, հենց դէառալ մռամոշ, հենց դէառալ, դիւ ասես թա տխտըմոր ինէր։ Լծկան գեռմաշ, եղնը կլերան պրծնելմն ետը հնդստացալ ին, էլիա կերալ, խմալ ուժւացալ։

Աման մարդ էլիա պտրաստալ էր ալաթ, խուփ, փոկ, սրմըգեարի, սրմըցորեն, սրմըքցի, սրմըխուրցին, լիւծ, սամի, սմջետան, կղղան, ծպատ, չօտաղները լծեցին եղնը, գեռմաշ, ալաթները զրին լծերին ելրայ, քշեցին տփերին կոշտը։ Մաճկաներն էլ ձիանցը բեռնեցին սրմացուները, ուրական ուտեկու հացը, ետաւ հսան ամաքը իւրանց տափին կոշտը, փոր կալան բեռները, «Յիսուս Քրիստոս» ըսեցին, ծրեցին կորիները, կապեցին սրմըքցիները, իրենները պրընեցին ըղութրանին, իրեսներին խչընեցին, էլիա «Յիսուս Քրիստոս» ըսեցին, ցորենը լցրին սրմըքցիներին մէջ, ետաւ սրմեցին կորիները էս աղօթքը ընելաւ. «Տէր Աստուծ, Դու մինը հզար անես, ուրիսոթիւնի արժան անես, էս սերմածը կիրնչցնես, աղատ պահես կրկուտի, մնկնի, սուրեխի, կրմըուկի վնասայ, Աստուծ, Քը մատաղ, Քեզ եմ պահ տամ սերմածս։ Մին հիւոր, աղքատ մաճկալ էլ առաջ չոքեց, դլակի ըղութրանին ըրաւ էս աղօթքը։

«Աստուծ, ես էլ Քը մատաղ, իմ խոխեքս ու ըրախսերքս էլ. Աստուծ, Դիւ գիտում ես, որ օրիշ տեղայ ինձ մհար մին կաթ չի կաթում, մին կապեկ փուլ չի գեալիս իմ տոնը։ Աստուծ, Քը մատաղ, Դիւ գիտում ես որ ես օրիշ փեշակ չօնեմ. իմ փեշակը էս վար անիլն, մշակոթիւնն ա, իմ դիւքեանն էլ էս տափին ա. Դիւ լաւ ես գիտում որ իմ ապրանքն էլ էս տափին ա, իմ հրստոթիւնն էլ, դիւքեանս էլ։ Տէր Աստուծ, Դիւ գիտում ես որ մինակ էս տփերաւ եմ տամ թագաւորին ոսկին. մինակ էս տփերաւ եմ տամ թագաւորին ոսկին.

Նակ էս տփերաւս եմ ապրուստ անում – ապրում, ըպ-  
րըցնում, պահում, մծըցնում իմ խոխերքն ու ըրա-  
խերքը և անում ընդրանց չորերը։ Աստուծ, իմ մե-  
ղաւոր հիւգիս Քը մատաղ, իմ տկլոր խոխերքն ու  
ըրախերքը Քը մատաղ, իմ դէարտակ տոնն ու դէօ-  
նը Քը մատաղ, Քզանայ կերման օրիշ, տէր, տիրա-  
կան, ստեղծող աստուծ չօնեմ։ Մինակ Դիւ ես իմ  
Տէրը՝, Տիրականը՝, Հստեղծովը՝, Աստուծը։ մինակ  
Դիւ ես իմ թերը՝, թեկիւնքը՝, պահապանը։ Քո փեշկն  
եմ բռնալ, միան Տէր Աստուծ, եա իմ կոռնս կտրի  
եա Քո փեշքը, եա էլ ինձ սիրես մի թողիլ իմ  
խսոց, ըրախոց կշտին, սիրես մի թողիլ իմ շեմ-  
քաւս մտնող տէրտէրի, տրըցուի կշտին, եկող, գի-  
նացող մծըւորի, եասաւուի, ըղքատի, բարեկամի  
կշտին։ Աստուծ, Քը մատաղ, Քզանայ խազնա չեմ  
օգում, հրստոթիւն չեմ օգում, մինակ էս ա իմ օղա-  
ծը, մին էլ մին սաղ ջան։ Աստուծ, Քը մատաղ,  
դիւ գիտում ես որ մեր մշակներիս ըշտանքաւն են  
կորվարուում երկնքի հաւքերն էլ, տափի մրջեմնը,  
մոկն էլ, թագաւորն էլ, վանքերն էլ, տէրտէրներն  
ու դալաքներն էլ, տաւար ու գեումաշ էլ։ Թա որ  
իմ մեղքս էնչանք շատ ա, Աստուծ, որ կտրում ա  
Քո ըղորմութեան առաջքը, իմ անմեղ ըրախորց  
սայիցը տաս»։

Չոքած տեղան եր կացաւ, կորին սերմեց և  
սկսեց վարել ըրտսունքերը սրբելաւ, հանցու որ  
տեսնայ ոչ իւրան տղան։ Ճելլի ճելլի ասում էր.

— Բոյիդ մեռնեմ, Մարտի, յաջ (յառաջ) ասի.  
ապերը քը մատաղ, Մարտի, խեղդ ճրդուած ա,

քըզ մհար խլպացու եմ ինքունլացուք, ընունիդ մա-  
տաղ, յաջ ասի։

— Ապեր, փափաղս էլ աճրդուած։  
— չա, յաջ ասի, փափաղ էլ եմ ինքուն-  
լացուք։

Մին էլ լսում ես ըս տեղան, ը տեղան, ըն  
տեղան հօտաղները ասում են։ «Յաջ, Բողի, յաջ  
նշան, յաջ Մարալ, Գեօգի, յաջ Զէյրան, Խնձոր,  
Սարն, Ուի, յաջ, յաջ, դէ հա ա, դէ հա ա, դէ  
հա ա ա։

Մաճկաներն էլ մինմնու հետա ասում են։  
Թուռու<sup>1)</sup> (քաշեցէր)։ Հիպու գեումաշները, եղները  
ալաթը ծուռմ են կորդին կողմը, խարակ անում,  
մաճկաները ճղճղալաւ ասում են։ «Վրայ, վրայ,  
վրայ քշի, քը մատաղ»։ ամմա հիպու որ ծուռմ են  
ծրի կողմը, ասում են։ «Ֆարի, էարի»։ հիպու որ  
հսնում են ըլեւելը, ասում են մաճկաները գեու-  
մաշներին. «Վլհահօօօօ», հօտաղներն էլ ասում են  
եղներին. «հօօօօ հա <sup>2)</sup>»։

<sup>1)</sup> Կրտացող, ես մեռնեմ, ինձանայ նղանաս ոչ, էս  
թուռու բառը հունց որ գիւղացիք հնչում են, մունք  
կրացիք ոչ թա իսկական ձենը գեցրենք։

<sup>2)</sup> Մաճկաներն և հօտաղներն օրն 'ի բուն խօ-  
սում են իւրեանց անասնոց հետ, որք ունակութեամբ  
սովորում են այդ ձայների նշանակութիւնները և հլու-  
թեամբ կատարում մաճկաների և հօտաղների հրաման-  
ները։ «Յաջ յաջ զայն կրճատեալ յառաջ յառաջ։ «Վրայ  
վրայ» — բաշեցէք ակօսուած կողմի վերայ. «Էարի  
էարի» — չերկուած կողմի վերայ բաշեցէք. «Վլհահօօօ»

Հիպու որ վարում են, պլրծնում սերմած կորին, նոր կորի են քաշում, էլլոհա սերմում, վարում: Քսդհենց կորի կորի սրմելաւ, վրելաւ պլրծնում են մին տափր, ետաւ սկսում մին օրիշը: Առաջ վարում են սրերին տափերը գեարի, ցորեն, ետաւ էլ վարում են Ղարաթիին տափերը:

Հշունքավարը պլրծնելան ետը էրկու էրկու տափ էլ ցելեցին, ետաւ եղիը, գեումաշ դիւս ըրին, որ ըրածեն, պատճառն որ ցորտը ընկեալ էր. սարերն էլ ձիւնալ ին:

### ԺԷ.

Նոյեմբերի 20 էր: Ֆմակների ծառերը, որ առաջ լոխ էլ կանանչ ին, մին ուշանդեաւ ին, մասկ էլ քաղքցի կնանոց, հրսների, ըզչկոց մնան նոր նոր մօտա ին գեցալ, սազուալ, զուզուալ, զաշէանդ զրդարուալ: Ցիրմները տեղ տեղ սպատակալ ին, տեղ տեղ սւացալ, տեղ տեղ դզնալ, տեղ տեղ կրմրալ, տեղ տեղ մող գեղին, տեղ տեղ բաց դեղին, տեղ տեղ մող կարմուր, տեղ տեղ ժանդեառի, տեղ տեղ կիւլինագ, տեղ տեղ նարնջի, տեղ տեղ ալ. էլ մը մինը գելրեմ, մը մինը թողեմ. հզար ու մին տե-

հօօօ հաս—կանզնեցէք. Խարակ—երկու ծրի մէջ մնացած հողի անհերկ մասն. ըռաւել—արտավայրի երկու սահմաններն. թերես նշանակում է առաւել քան զայդ մի՛ անցաներ: Առ հասարակ արօներին լծում են չորս անասուն, այս է 2 գոմէ և 2 եզն, որ կոչ չուռում է շուրուց (ծագած չորս բառից):

սակ ուանդեաւ անսելի, անգելրելի, անպտմելի, ըրմեալի, զրմնալի մօտա ին գեցալ. Փռանկստանի նրկարարներն հինչ նէաքեարա են, որ կարան էս ուանդներաւ ներկեն ապրչւմի, քմբակի, կազի, բրդի, թթանի թելեր եաւ կտաւներ եաւ ճոթեր:

Մին քանի օրան ետը մին օժաւ քամի՛ եր կացաւ, մին օժաւ քամի՛ եր կացաւ, որ ասուիլ չի գեալ: Հունց որ անխզմատանկը գողերն իւրանց ձեռքն ընկած մարդիկը ոննան չուրու գեղլոխ պլոկում են, տկլորցնում, ընդհենց էլ էս քամին ծառերը լոխ էլ պլոկեց, տկլորցրուց, նախշուն նախշուն տիրեները թափեց, կուրցրուց. շատ հիւռը ծառեր էլ որը տկոկապուք ըրաւ, որն էլ ճղնկուտուր:

Պտրաստալ ին նոր զցցներին նով, քարեր, ցեց, տպարակ (տափարակ) թոփ, թեմեր, ոննը, զենորդնուկ, Ճնճաքար, կրոնկնը, չանչախ, տաշտ, ըլրատոն, թի, զլան, մեծ-լինգ, պիծի-լինգ, դիւր ու չաքուց<sup>1)</sup>: Էս կտորները լոխ էլ տղստեղ ըլին,

1) Քրաղացի մասանց անուններն են նով—նաւ, քարեր—աղօրու քարերն, ցեց—ցից, տպարակ—որ զետեղուած է ցցի վերի ծայրում և որ դարձնում է գլխաքարը. թոփ—թուփ, որի միջից անցած է ցցի վարի ծայրն, թեմեր—որը ամրապնդուած են փայտեայ թփի մէջ և որը ջրով դարձնում են աղօրին, ոննը—ոտն, որ է զեկ ալրի աստիճանին, որի ստորին ծայրն հաստատուած է կրնկան մէջ, գեորդնուկ—գորդ երկաթեայ, որի մէջ գառնում է ցցի վարի սուր ծայրն. Ճնճաքար—Ճնճաքար, որ գորդի տակին է՝ կրնկան մէջ զետեղուած, որի վերայ պտտում է ցիցն: Արդէն յայտնի են մնացեալներն:

սրբեցին։ Աման մարդ իւրան աղունը պտրաստալ էր, տարաւ ջաղացները, աղաց, ձմոնան մհար ալիւր ըրաւ, բերաւ, լցրուց ամբարները, չուալները խարարները։

Գեազան, սողուն, մրջեմնը, պղոջ լոխ էլ քաշուալ ին իւրանց ծակուծուկը։ Հստծաւ կուրցրածին մնան կոլալ ին բեռնը, սւաճանճ, վնդեռնը, մոծակ, մինակ տեղ տեղ մնացալ ին կենդ կենդ լուանք։ Էն խելունք, ըշխտասէր, իմաստուն մղրբճանճերն էլ ըկնամումաւ պատալին իւրանց ճնճըթոյներին բերանները, մտալ ներս, չափով վայելում ին իւրանց ըշխտած համուղ մեղրը։

Մին ըռւտհանայ եր կացաւ աման մարդ, տեսաւ որ սիպտակ սւանաւ ծածկուալ ա սար ու ձոր, հանդ ու հանդաստան։ Ամմա Ղարա-Թփում ձինն ոտը չէր կացալ, ոխճար, տաւար հնդերում ըթածում էր, պատճառն որ տեղը քաշ ա, դեռ պենդ ցրտալ չէր։ Աման ըրիւկին չօբան, տուարած էլհա իւրանց ուրիսոթիւնը անում ին՝ շուի, թիւթէակ, պիոյ, փող ըծելաւ, պար գեալաւ։ Մեր Սարդիսն ու Անան էլ շատ օրախ ին։

### ԺԵ.

Թա Կոըպատայ թա Ղարա-Թփի պառաւները, կնանիրը, հարսները, ըղջկերըն էլ պարապ նստած չին։ Ճխարակները քանդուած ին. աման կնեկ, պառաւ կշտին դրաւ ճխակի կտորները—մնծ-տախտ, պիծի-տախտ, մեծ-ոններ, պիծի-ոններ, թոփ, միւ

(նետ), թեւեր, կոռնը, շուռառուէք, ջոխտակներ, փար թիլ, անկուշ, փալան, իլիկ, լիսեռնը, կուպրածթիլ. ետաւ տղստեղ սարբեց, փարեց, անկուշը եղեց, կուպրաթիլը կապեց, փորձեց, պտրաստեց։ Հարմն ու աղջիկ էլ բերան սանդերք ու բուրդ, սկսեցին գերզել, մնալանչ անիլ, տալ մանողներին։ Մանողներն էլ մալանչերը մնեցին, ոստեր շնեցին, ոստերը ըրկուտակեցին (երկուտակիլ) կծեկներ (կծիկ) ըրին, կծեկնեցին։ Խաւացուն ջոկ մնեցին, մջաթիլը ջոկ, ըուջաթիլը ջոկ, ըզբաթիլը ջոկ։ Էծի մագերին էլ գերզեցին, մնեցին, լիւսեցին սմբետան, չուան, չաթու, նուխտակոթ, դազիլ։

Թիլերը մնելան ետը սկսեցին ներկիլ դղնբժաղկաւ դեղին թիլերը, նընջափետաւ նարինչ թիլերը, թխոցաւ սեւ թիլերը, ծրենբիետաւ ծիրանի թիլերը, տորնաւ կարմուր թիլերը։ Նրկարարներին էլ ներկիլ տուին կանանչ, աքի, սուրմէի, ժանգետի աւ թիլերը։

Ետաւ որը սրաններումն, որը տներում պտրըստեցին ոստանները—տփերում պնդցրին ոստանի ոնները, տորգերը գրին ոնների մէջ, էրկու տորգերաւ դիրաւ տալաւ հինեցին ըռըջաթիլը (առէշաթիլ)։ Ետաւ բերին ազք, ըզբափետ, ըզբըճալատ տաճարկ. տաճարկը մինումէջ անց կցրին հինած ըռըջթիլերի մէջաւ, ըզբեցին, պրծան։ Ոստաններին սեպերը պնդցրին, կախեցին ոստաններան նախշուն թելի կծեկները. բերին, շրեցին մշաթիլ, թլատու, կուփիչ, մլրատ, դանակ, հանցու որ հրնացուներին մհար գեործեն նախշուն գեալաւ։

— Անա, քոյիդ մատաղ, հրմներիդ բժիշկին  
մհար տես հինչ գեապա եմ գեուծլական հա—  
ասեց Անուն մերը:

— Այսն, մշի անենք, հանցու որ ճելի պլծնենք  
— ասեց Անան իւրան մօրը:

— Հա, քը մատաղ, իմաց եմ առալ, տես, է-  
սա գեալիս են ըզգկեքը:

Ճորերը քցեցին ոստանին ըռաջին, նստուեցին  
Անուն հետ իրեք հասած ըղջկեքը, ետաւ սկսեցին  
գեործել: Առաջ 15 մջաթիլ դէս ու դէն անց կցրին  
հինածին մէջաւը, աման մին մջաթիլ անց կցնելիս  
տաճարկը դը եր, դը վոր քշեցին, թլատուներաւ  
թլատուեցին, կուփչաւ կուփչեցին. ըրենակ (օրի-  
նակ, բնազործ) գեապին եցեցին, աջ ձեռներաւ սոր  
դանակները կալան, ձախ ձեռներաւ էլ նախշուն  
թլերի ճոնտերը, սկսեցին գեործել: Հիպու որ մին  
ջարկ (շաբք) նախշուն թիլ էս զլսան չուրու էն  
զլոխը մնեներաւ անց կցրին, դնկներաւ էլ ծկթցրին,  
ետաւ մին մջաթիլ էլ զլսաւը անց կցրին,  
թլտուեցին, կոփչեցին, մկրատներաւ խուզեցին, տա-  
կին թուզեցին մին մաննի հատութիւնաւ սէրուն  
խաւ: Քսդէնց մին ջարկ նախշուն թիլ, մին ջարկ  
էլ մջաթիլ հնցըցներաւ, թլատուելաւ, կոփչելաւ,  
խուզելաւ մին ամսում գեապան գեուծեցին,  
պրծան:

Հենց ճելի ճելի գեործում ին, հենց ճելի  
ճելի գեործում ին, որ աչք չէր հանում. իսկի գի-  
տուում չէր թա թիլերը հունց անց կցրին, հունց  
ծկթցրին: Մարդ օդում էր թա վեց աչք էլ փոխ

Փնէր, թմաշա անէր. պատճառն որ շատ եշելան  
կշտանում չէր:

Առաջ բարակ ճպատաւ մին լաւ թափ տուփն  
գեապան, ետաւ կտրեցին, չնորհաւորեցին. Անան  
մին պատիւ ըրաւ իւրան ընկեր, գեապան գեործող  
ըզգկորանց. մին էլ չնորհաւորեցին. մին աղջիկ եկը,  
ասեց էն ըզգկորանց մնին.

— Պապին ձեն ա տամ, երկաց, գինանք:

Լոխ էլ երկացան գինացին իւրանց աները:

### ԺԹ.

Հունց որ երկիրս լուսաւորողն ա մին ըրիպնակ,  
Ազգիս հիւգեռուր կառավարիչն ու վլոխը մին կթըլ-  
կոս, մին վիճակինը՝ մին առաջնորդ, մին չէնինը՝  
մին քովսա, ըսդենց էլ աման տան մեծն ու կա-  
ռավարիչն ա մեծ պապին: Հենց հմարի թա աման  
տոն մին պիծի վիճակ ա, էդ տան տպամարդկիկ,  
կնանիր, տղէք, հարսներ, խոխեր, ըրխեր, ըզգէք  
լոխ էլ մին պիծի ժղովուրդ, աման տան հլիւր պա-  
պին էլ մին փորձուած կորվարիչ, մին պիծի թա-  
գաւոր:

Աման տան մեծ, պիծի, լոխ էլ հնագանգուում  
են պապուն հրամանին: Պապին ա լոխին էլ բնը-  
գլխի գնում, աման մինը մին բէանի, մին գեործի  
գնում. հու կը կարայ պապուն հրամանան դիւս գեայ:  
Աման տան մեծ ըրկիւնանց հրաման ա տամ իւրան  
տղոց ու թոռներին որ ըռւահնայ սուրբ ծեղին  
եր կենան գինան մինը էս հինչ գեործին, մինը էն

հինչ գեործին, մեկալը, մեկսալը էն հինչ գեործին։  
Արինը պկասած, քոնը կտրուած պապին (ա-  
մեն ծերունի) մթեն մթեն եր ա կենում, լոխցին  
(ամենին) անունները տալաւ ձեն տամ։

— Զեղ մատաղ, եր կացէք սուրբ ծեզը՝ ծեզալ  
ա, Աստուծ ձեղ երայ բարին ծեզի, եր կացէք բէշ-  
նի զինացէք։ Ետաւ իրեսը լուանում ա, սրբում,  
պրանում ըզութբանին, իրեք հետ խչբհանում, ազօթբ-  
անում։ «Սուրբ ծեզ, ո. լիւս, ո. ըռաւոտ, ո. Աս-  
տուծ, իմ որդոց, իմ թոռանց երայ ծագես բարի  
ծեզ, բարի լիւս, բարի ըռաւոտ, բարի աջողոթին։  
Հայոց եղան, Հայոց ազգան անպակաս անես Քո-  
ղորմութեան բարի ծեզը, բարի լիւսը, բարի ըռա-  
ւոտը. ինձ ու իմ պռաւին արքաւութիւն տաս»։ Ե-  
տաւ գինամ են եղցի, չուրու տէրտէրներին գեալն  
ըզօթում։ Մ. պապին ըսդի էր ազօթք անում։ «Աս-  
տուծ, իմ հիւգին Քը մատաղ, տղայ ժմանակս մեղք  
եմ գործալ, մեղայ Տէրիս, տղամարդ ժմանակս մեղք  
եմ գործալ, մեղայ Տէրիս, հիւրու ժմանակս մեղք  
եմ գործալ, մեղայ Տէրիս։ Գիտալաւ, չգիտալաւ ըր-  
կուշերթի մեղուցեալ եմ, մեղայ Քրիստոսիս, ըրըք-  
շերթի մեղուցեալ եմ, մեղայ Քրիստոսիս, չրուշերթի  
մեղուցեալ եմ, մեղայ Քրիստոսիս, հնողշերթի մե-  
ղուցեալ եմ, մեղայ Քրիստոսիս, օրբաթ մեղուցեալ  
եմ, մեղայ Քրիստոսիս, կերրկեամուտ մեղուցեալ եմ,  
մեղայ Քրիստոսիս, կիրակի մեղուցեալ եմ, վայ ինձ,  
վայ ինձ, վայ ինձ, անօրէն մեղացս վեշման եմ,  
մեղայ Ստեղծողիս։ Եղան գիւս վեալիս էլ պաշում  
են դոնըկողի օծուած պիծի խաչը, անում էս վեր-

ջի ազօթքը. «Աստուծ, Քեղ եմ պահ տամ (՚ի պա-  
հու տալ) իմ որդիքը, ու թոռները, խոխերքը, ըրա-  
խերքը, հարսները ու ըզչիերքը. ընդրանց ձեռներան  
բռնած հանդ տանես, խտած էլ տոն բերես, ինձ ու  
իմ պռաւին արքայութիւն տաս»։

Պապիները, մեծերը գեալիս են տոն, մին մին  
թաս արագ թող անում, օտիս օրերն էլ իրեք թնը-  
խարաւ (թերախորով) ձու. Ետաւ փոկ են քաշում,  
կաշիները ձեռում, տրեխներ անում իւրանց որդոց ու  
թոռանց մհար։

Պապիները ու մեծերն են տան գատաւորներն  
ու գատաստան անողները ըռւետանց չուրու մթնիլը։  
Պիծի պիծի խոխերքը գեալիս են գեանգեատ անում։  
Մինն ասում ա լաց ինելաւ. «Պապի, Թագւին գր-  
խիս թխեց»։ Թագւին ասում ա. «Պապի, թխալ չեմ,  
խաղ ընելիս կոռնս նի եկը»։ Մին օրիշը. «Պապի,  
Սհակը վէկս խլալ ա»։ Մեկալը, մեկսալը մինմուտ  
հետա զալիս են խանչ խանչ գեալաւ եալ լցրկուած  
գեանգեատ անում։ Խանչ անօրէն քը մատաղ, կրողա-  
ցնդ, ախր ես մը մինն ասեմ, ո՞ր մինը չասեմ, ո՞ր  
մինը կերպեմ, ո՞ր մինը թողեմ։ Թա որ «Մանկավր-  
ժական» կղեթի ուստաբաշի խմբագիրն էլ գեայ իւրան  
զազի թեփուռը երկալած, էլլա կարալ չի թա տը-  
զստեղ գերքի։ Պապուն կոշտը հենց ա լիա դիւան-  
խանա ինի. պատճառն որ գեանգեատաւորը պկա-  
սում չի։ Պապուն տաւթարումն ու բրանում զաւթբի  
չկայ. ճելլի ճելլի կտրում ա գատաստանը, հղի գը-  
նում—խլած խաղալիքները առնում ա, տամ ամաքը  
իւրանց տեռնը, պշաչորում ա թխուած տեղերը,

ետաւ ասում. «Պապին քը մատաղ, կը մծանաս, կը մոռանամ»:

Աման ըրիւկիւն, որ հնդաւորը տոն ա գեալիս, տղատեղ պատմում ա պապուն աման մարդ էն օրուան պտահածը, գլխաւը հնցածը, բերած փուլն էլ պապուն տամ: Պապին ա տան գանձապետը, ծախտած գինու, ըրազի, եղի, բրդի, մորցուքի, ձուի, ցորնի, գեարու փուլերը լոխ հւարուում ա պապուն եա տան մեծին զընձանակը: Աման պապի եա տան մեծը տալիս ա խրան գանձանական թագաւորին ոսկին, անում տան ծախքերը ուրխութիւնի եա տրտմութիւնի հետի, շորի և էլ օրիշ պտքական բըների հետի:

Տնամէջի ըներում էլ տան թագուհին ա պառաւ տատին: Կնանիքը, հարմաները, ըղջկերը լոխ էլ պէտում ա հնազանդուեն տատուն, հունց որ մին տան մէջ, ընդհենց էլ աման տան մէջ: Հաց անիլ, մաղիլ, հունցիլ, էփիլ, թխիլ, կարիլ, լուանալ, կրկատիլ, բիւրդ գվիլ, մանիլ, հինիլ, գեործիլ, քղհան անիլ լոխ էլ պէտում ա ինի տատուն հրամանաւը: Եղի, պանրի, տհալի, մածնի, բրնձի, և օրիշ ուտլղանի ընալին տատուն ձեռնումն ա:

Հիպու որ պապին Սիմօն ծերունու մնան շատ հլւորում ա, տան մծոթիւնը տամ ա խրան մեծ որդուն տան մեծին պծինին ըստացին, լոխին էլ հրամայում ա որ հնազանդ ինին խրանց նոր մծըւորին: Ետաւ կանչիլ ա տամ տէրը, խոստովանուում, սըրբութիւն առնում, տեղումը նստում, մին մին օրհնում տղէքը, հարմաները, ըղջկերը, փեսաները, թոռ-

ները, ծոռները. «Էն հացան օտէք, որ ոչ հատի և ոչ էլ պկասի: Զեր բռնած վեղը (հողը) ոսկի՞ դէառնայ, մոխիրը՝ արծաթ, քարը՝ ալմաս: Զոր քարին որ գինաք՝ կնանչի: Հինչ կզնըւող մծըւորի, դատաւորի իրես որ դիւս գեաք՝ գեառնը դէառնայ: Աստուծ օրհնի Զեր հանդը, հանդաստանը, բազն ու բազան, վարն ու հոնձը, կալն ու կոտը: Հայր Ըստհամայ օխնանքը անպակաս ինի Զեր սուփրան ու սղանան, տաշտան ու մազան, որերան ու կարաօներան, չուբերան ու քավիներան: Զեր Էն օխնի, որ ձեռնան երը ձեռք չի կայ, օխնանքան երն էլ օխնանք: Զեր Ըստծու եմ պահ տամ, իմ պառամ էլ Զեր (եթէ տակաւին ողջ է լինում): Էս հինչ մարդը պրտական ա մեզ 20 մանէթ, էն հինչ մարդը 12, էն հինչը 3, էն հինչը 3 պազի: Մեր ըռնըլացուքը լոխ էսչանք ա: Եղցուն պրտական ենք մին մանէթ, նրկրարին 4 պազի, զիշուն 2 պազի, տէրին էլ մին կոժ զինի: Մեր տլացուքը լոխ էս ա. էլ կայ ոչ: Դէ, ա պառաւ, Մերին աղջիկ, 70 տարի մին տեղ ապրալ ենք, քըզ եըրայ կզնուալ եմ, բեզ ուշունց եմ տուալ, իւիլ, պակաս եմ ասալ, մեղայ Ըստծու. հալալ ըրա ինձ:» Պառաւը բռնում ա հլւորին աջ ձեռնը ու ասում. «Հալալ ինի, հալալ ինի. կտակ չօնես»: Կտակ օնեմ ոչ. 30 մանէթ հիւգըպահուստ օնեմ, էսա հրես. ինք կալեք, ինձ ժամաւ, պատարագաւ թղեցէք»:

Ըսդհենց օխնելաւ մեռնում են պապիները: Ետաւ որդիքը, թոռները լաց ինելաւ ասում են էս սոզը. «Մեր տան շէնքն ու չնորհը՝ պապի, մեր

տան սիւն ու գերանը՝ պապի՛. մեր տան մեծն ու կռվարիչը՝ պապի՛. մեր տան թագաւորն ու իշխանը՝ պապի՛, մեր տան համն ու ոտք՝ պապի՛, մեր հերն ու վարժապետը՝ պապի՛, մեր տան սէրի կապն ու կշոռը՝ պապի. մեր տան աղօթքն ու օխնանքը՝ պապի՛, մեր եղցուն ժամնորն ու ըզութարարը՝ պապի՛, մեր չնըմէջի զարդն ու զարդարանքը՝ պապի՛, հէյ պապի, փայ, վայ, վայ պապի, պապի»:

Կնանոց ասած սոզը մունք կրացինք ոչ գերրիլ. պատճառն որ աման թանաք լզգտողի բէան չի. լիւս դէառնայ «Բաղգասար դպրի» հիւզին. մզանայ էլ իւիլ լէաւ ա գերրալ: Թա որ մշտոցին գեանձեռը գերած չինէր, հունց կինէր մեր տէրտէրներին ճարը, որ եղցում ըսեցին էս գեանձը. «Ես զիս եղի հաղար տարու, զափիլ եկաւ օրս մահու... կացէր բարով բարեկամներ»: Ամմա դէ ասիլ էլ կայ, ասիլ էլ. մոլի գեանձը պէտում ա իւան-բացին ասի, Տէր-Յարութիւնը՝ ասի, որ հաւքերը թառ ինն, ասր ու ձոր սո՞դ անեն:

Մեռալը տարան թղեցին, ժմահացը կերան, ուղրամթասը մինմնու հետայ խմեցին, հանգստեանը ըսեցին, եր կացան, ցրկ եկին:

Գէորգ քեռվիսան ինքն էր իւրան տան մեծը, Պտրուսանց Զէաքարան էլ իւրան տան մծաւորը:

ի.

Նըրբաղի գեղերրում, չէներքում տղոց հետի աղջիկ հաւան կենալ, նշանիլ եա տղայ հաւան կե-

նալ, նշան եր օնիլ, աղջիկ տալ—էդ իրաւոնքը գեռ պտկանում ա աման տան մծերին: Հասած տղայ, աղջիկ իրաւոնք չօնեն, որ ասեն. «Էդ օղիլ չեմ, ընդրա գինալ չեմ»: Հինչ կարող ա էն տղան եա էն աղջիկը, որ հմրձակուի, էդ խօսքերը ասի իւրան մեծին ըռաջին: Թա որ ոխճարը կը կարայ չուրանին ըռաջին խօսիլ, զիւմաշը մձկալին, եղնն էլ հուտաղին, մեր մնալների տղէրն ու ըզկէրն էլ կը կարան խօսիլ իւրեանց մծերին ըռաջին: Պատճառն որ մեր մնալների մեծերը հունց որ իւրանց մծերան տեսալ են, սվորալ, ընդհենց էլ անում են. հունց որ իւրանը իւրանց մծերին հնազանդ են իլալ, ընդի հնազանդոթիւն են օգում. իւրանց պիծիններան. հունց որ իւրանը անխօս են իլալ իւրանց մծերին առաջ, ասում են. «Մզանայ պիծիններն էլ պէտում ա անխօս ինն մեր առաջ, ծպուտը եր չանեն»:

Մինակ մին ըզըտոթիւն ա մնացալ հասած տղոց ու ըզկորանց, մինակ էս ա իւրանց էրուած սրտերին մխիթարանքը—խօսում են ըրեսաւ, ծկատաւ, ըչքերաւ ու ունքերաւ: Ամմա հմւ ա կարդում էդ խղճերի հրեսաներին երրայ պարզ տպուած ըզըշանքի գիրը. հմւ ա անկուզ օնում ընդրանց կախուած, կնճռոտուած ծակատների գեանգեատներին. հմւ ա մնալ դնում ընդրանց ըրտսունքուտ ըչքերի իննդքին. հմւ ա եշում ընդրանց իւրիւր տուած, մրկացըած ունքերի խուսքերին: Լիւզիւները կարում չեն որ խօսեն, փաստազան են բռնում իւրանց ճակատը, ազքերը, օնքերը. ամմա ըսդրանց կզակներին էլ եշող չի կայ:

Հիպու որ աման կողմայ նեղի եկած հասած տղայ, աղջիկ տեսնում են որ անճար են մնացալ, իւրանց սրտակից մարդոց, կնանոց ձեռնաւը մէջ են գցում ազգական, խաթրլու մարդիկ, կնանիք, հանցու որ կըկցնեն իւրանց հօր ու մօր սրտերը: Գեղերումն չէներըումն մինակ հրսանիք են անում ձմեռնը—նոյեմբեր ամսան չուրու մեծ բարիկենդանի օրերը:

Սարդիսը տեսաւ որ ժմանակն անց ա կենում, աման հրսննքատէր անում ա խրան հրսանիքը, իւրան հերն էլ իւրան խօսքին ելրայ հաստատ մնաց ոչ, կըկեց ոչ որ հրսանիք անի, սրտին նզոթիւնան հևանդացաւ, սկսաւ ուրան ելրայ մաղուիլ: Էս որ իմացան Սրգիսին էրկու ազգական մարդիկ, խօսք մին ըրին, որ առաջ մինը գինայ Զէաքեարին կոշտը, թա որ ինի ոչ, ետաւ էլ էն մինը գինայ: Մինը գինաց.

— Բարի օր, Զէաքեարա:

— Հստծու հզար բարին քեզ Ա.. համեցէք, համեցէք, բարի ա, քը մատաղ, գեալդ բարի ա: Փառք Հստծու, շատ բարի ա, թա որ խընդիրքս կտարես, ինձ գէարտակ, սէրես ետ չի տաս քու տանան ու դռնան, պատճառն որ իրես եմ դրալ եկալ:

— Դէ, ասի, տեսնանք հինչ ա խնդիրք:

— Զէաքեարա՛, քը մատաղ, գիտում ես, որ Սարգիսը մին քանի չէրեթ ա՝ հևանդ ա, թեք ընկած ա: Ընդրա հևանդութեան պատճառը օրիշ բէան չի. պատճառը մինակ Անուն սէրն ա: Դիւ առաջ ասալ ես թա «Են աղջիկը տսնի, հաւան կնի, նշան տի, հրսանիք ընի: Էն աղջիկը հաւան ի կացալ, ուղլացուք

ուղլացուք եմ, որ ուղլացուք եմ»: Էս խօսքաւդ էրկու հիւգի ես կենդանացրալ, էրկու էլ եղցի (սըրտեր) շինալ: Ետաւ էլ խօսքդ փոխալ ես, ասալ. «Էն աղջիկը օղիլ չեմ, որ օղիլ չեմ»: Էս ետի խօսքաւդ էլ համ էրկու եղցի ես քանդալ համ էլ էրկու տոն: Մհեկ Անան էլ, Սարգիսն էլ ըրկոքան էլ շատ հևանդ են համ էլ օրբանց օր մաշուում ու մաղուում են ուտան ելրայ, ետաւ էլ ընկալ են տեղի մէջ: Զէաքեարա, քը մատաղ, դիւ գիտում ես որ Սարգիսն ու Անան խօսխա չինականց մին տեղ մծացած, ըրիւկին, ըռաւէտ մինմնու իրես տեսած, ասած, խօսած, սէրած, սիրուած, մին հիւգի մին մարմին գէառած են: Գէորգ-քեովլիսան լէաւ համփա տոն, լէաւ էլ ըրըկամի մարդ. Անան էլ լէաւ հրսնացու: «Ելիած ճաշին մէջ վեզ չեն ածիլ» ասալ են մեր զուրմծընիւգի պապերը. աման հինչ պատրաստ ա, դիւ եկ նշանը տանենք տանիք, մին չէրթան ետը հրսանիք անենք:

— «Հու որ լէաւին վիս ասի, վիսին էլ լէաւ, ըռեխը կը ծոռւի», առակ ա, ասալ են: Գէորգ-քեովլիսան շատ լէաւ մարդ ա, Անան էլ շատ լէաւ աղջիկ ա, հիւգի օնեմ տլացուք: Ամմա հունց որ իմ հեր ինձ նշանալ ա, ես իսկի գիտացալ չեմ թա, ամօթը դէն, ինձ մհար նշանած աղջիկը քոռ ա, քառ ա, շիլդի ա, կադ ա թա թոփալ, սէրուն ա թա շիշոտ. «Քօու ես, շիլ ես, զաբուլ ես» ասալ եմ, իմ հօր հնազանդուալ, պսակուալ: Ուրենիքաւ ես պէտում ա աղջիկ տսնի, հաւան կնի, նշան տի, հրսանիք ընի: Էն աղջիկը հաւան ի կացալ, ուղլացուք

ի. քանի որ իմ տղան ինձ մծատեղ չի դրալ, ինքը հաւան ա կացալ, ինքն էլ օդի հրսանիք անի:

— Զէաքեարա, քը մատաղ, աշքը քուռանայ ժմընակին, ժմանակը փոխուալ ա. «Մեր տեսած ծառերը կտորալ են»: Բա իսկի Թիփիլիս, Ըրեան, Չօշուայ դալան չես զինացալ, բա իսկի տեսալ չես թա ըզքների նշանած եա նշնրծացու տղէր ու ըզքը-կէր հինչ չտես բէաներ են անում, անսելի, անպլու-մելի բէաներ են անում: Ես իմ հոգիս, տղադ ա-ման ժմանակ քեզ մեծ ա ճնանչալ, ընդունալ, մհեկ էլ ճնանչում ա: Բա որ քեզ մծատեղ շինի դրած Սարգիսը, խե օգում ա որ քո կամրաւն ինի: Էն ա ինքը նշան կը տար, հրսանիք էլ կանէր: Զէաքեա-րա, հունց որ ասած ա, դիւ եկ «Քարը գիւրգեադ վոր ածի»:

— Ինիւ չի, որ ինիւ չի:

Մ.-ը դիւս էր գեալիս որ դինայ. նի մտաւ էն մին մարդը—Թ. ու ասեց.

— Զէաքեարա, քը մատաղ, էլ էգսան օրվ շինը-մէջում ասես ոչ. «Ասենք թա ես կզնուալ ի իմ որ-դի Սրգիսին ելրայ, հունց որ հերերը կզնուում են իւրանց որդոց ելրայ. բա իմ բարեկամները լոխ էլ կտորուալ ին, հինչ կինէր որ զին (գայլին) մղակաւս նի մտնին, ըսին, խուսին, մին բերան ինդրին, հան-գամմնը հսկցնին: Ես էլ մարդ եմ, սուտանայ չեմ հու, որ նէան անեմ (յամառեմ) ըսածիս ելրայ պինդ սուը կենամ: Էն ժմանակ սրտիս կզնուցը կը քաշ-նար, որդուս զլսին էլ փորձանք չէր գեալ»: Զէա-քեարա, ըսօրան օրս Աստուծ զը երան ա վկայ,

տափը զը վորան, իմ խղճմտանիքը ըս տեղան, քոնն էլ ը տեղան, որ ես էս խօսքերը ասում եմ պարտ-քաս սլրծնում: Գիտում ես որ Սարգիսն էլ ա հե-ւանդ էն Անան էլ. ըրկորան էլ օրին օրին մաշուում են, մագուում, հալուում հենց զիտաս, Զէաքեարա, հենց զիտաս թա էս տղան ու էս աղ-ջիկը խօսք մին ըրած, կոնըրոնոկ ըրած զինալիս ինին զը պի զերբեզման թալուելու: Մհեկ դիւ եկ «ստունին զլոփիք կոխ տո», «քարը գիւրգեատ վոր ածի»: Նշանը տանենք տանք, հանցու որ էն էրկու անմեղ գեառները մեռնեն ոչ, Ըստծու կրակը թափին մեր զլիսին:

— Լէաւ էս ասում քը մատաղ, ա Թ. դիւ պարտ-քադ սլրծալ ես. քո խօսքերը սրտիս քար ըրին (աղ-դիցին), սերտս տիւրիւր եկը (շարժուեց) տեղան. տա-նենք նշան տանք, որ էրկու ըրնատէր չի գէաւնանիք:

— Ճնուրինակալ եմ, Զէաքեարա, որ իմ խնդիքը կտրեցիր, խօսքս տափը չի զցեցիր. ամմա հաստատ ինի տուած խօսքի, սոի խոտի մշնան պրընպարան շանես տուած խօսք—մին էլ մետք փոխես ոչ, էլլիա ասես. «օզում չեմ, ինիւ չի որ ինիւ չի»:

— Ասիւ չեմ, խօսքս խօսք ա, որ հաստատ խօսք ա:

## ԻԱ.

Մին քանի հրսանիք ըրալ ին պրծալ: Կորպա-տայ եղցում տէրէլները մին պսակ ին անում. շատ մարդիկ, կնանիք ին հւաքուալ: Մակառներան (փե-

սաւէր) մինն, որ կողպտեցի էր և Թիփլիզում շատ մնացած, տեսաւ որ կնքաւրը խաչն ու թուրը բռնեց փսին ու հարսնին գլուխներին երայ, սկսեց շատ մտածիլ: Հիպու որ պարկեցին, պրծան, հարսն փեսան տարան առաջ հարսին հերանց տոնը, էն Թիփլիզում մնացած մակառը առաջ հրցրուց իւրան հընկեր մակառներին: «Խաչը և թուրը որ խաչեղայրը բռնեց փեսային և հարսին զլսին, արդեօք ինչ օրինակ է»: Հընկերները ըսեցին: «Մունք գիտալ չենք ըտի բէաները, թա որ գիտան, էլլիա հիւոր մարդիկը կը գիտան: Ընդրանց հրցրնւ: Հլւոր մարդիկն էլ ըսեցին: «Որդի, էդ գիրոց բէան ա, ըտի գիրոց բէաները ըշխրըկանի բէան չի, հիւզւրականի բէան ա. թա որ գիտան, էլլիա հիւզւրականները կը գիտան, տրերին հրցրնւ: Հիպու որ հարսնը առօք փառօք տարան փսին հերանց տոնը, մածարքը (մեծ արք մեծամարդիկ) նստան կոօրի հացին, հւըրուեցին տէրտէրները, խմեցին թագաւոր-փսին կենացը ըսելաւ: «թագաւորին արեմ՝ խնդանը (յարկ՝ թագաւորին խնդանը)»: Ետաւ էլ թագուհի-հարսին կենացը, էն մակառը մհեկ էլ հրցրուց տէրտէրներին: Տրերան մինը աւագ երէցը ասեց: «Որդի, հայրական, պատական մունք ընդի ենք տեսալ որ խաչն ու թուրը բռնում են թագաւոր-փեսային և թագուհի-հարսնին զլսին»: Մին օրիշ տէր ասեց: «Խաչը Քրիստոսի խաչն ա, թուրն էլ Պետրոս առաքեալի թուրը. ըսդրա մհար են բռնում»: Մակառը բաւական չմնաց: Էլլիա մտածում էր, ընկած մտքին անտակ ծովի մէջ: Հրմներատան սուփրի երայ նստած էր մին դա-

րիպ աշուլ: Զար ծաղիկը լափալ էր ըշղի էրկու պայծառ աշքերը, հենց շինալ հա խւարած լիւսնկեայ. իրեսը, ճտկատը, քեթը ծկծըկոտալ, հենց շինալ հա ըլքատի շտարար ինի, ըս տեղան, ըն տեղան կպկըպորած: Ամմա ըշղի մետրը հենց լուսաւոր էր, հենց լուսաւոր էր, ասես թա յուլիս ամսուան պայծառ իրիգնակ ինի: Կտրեցին զուռնին, քեամանչին, թառին տնկլպաղին ձենը, ըս տեղան, ը տեղան, ըն տեղան խնդրեցին, որ աշուլը համ ածի համ էլ մին քանի բերան խաղ ասի: Աշուլը մեծ սաղը ճնկճնկցնեաւ քեօք ըլբաւ. ետաւ ասեց: «Եա՛ Ամորդի, եա՛ Մշու Սուլթան սուրբ Կարապետ, եա՛ եօթնան մուրազատու ո. Յոհաննէս»: Ետաւ մին պատառ ածեց էշսաւ. ու սկսեց.

«Ըկա՞նջ գրէք, ինչ եմ ասում.

Սուրբ գրբերից փանջ եմ ասում.

Հոգի, արիւն, շունչ եմ ասում.

Փառք ու պարծանկ միշտ եմ ասում

Սուրբ Խաչ, կեռ թուր գէնք եմ ասում,

Հոգու, մարմնու կեանք եմ ասում.

Խաչն ու թուրը ձեղ պահապան,

Երկումն էլ գէնք պատուական:

Մարդն ունի հոգի, մարմին,

Ոք միասին սիրով կ'ապրին.

Հոգին ունի իւր թշնամին,

Մարմինն ունի իւր թշնամին,

Խաչը գէնք է հոգեորին,

Թուրը գէնք է մարմնաւորին.

Խաչն ու թուրը ձեղ պահապան,

Երկուսն էլ զէնք պատուական։  
Թագ դնելու ժամանակը։  
Թուր են կապում Կայսեր մէջը,  
Խաչն էլ տալիս ազի ձեռքը,  
Աւանդում են օծողները,  
«Քեզ ամանաթ էդ երկուսը՝,  
Դրանցով պահիր երկիր, կրօնը»։  
Խաչն ու թուրը ձեզ պահապան  
Երկուսն էլ զէնք պատուական։  
Քրիստոնեայ թագաւորները  
Խաչով պահեն սուրբ հաւատը,  
Թրոյի կեանքը, ժողովուրդը,  
Հպատակներ, հայրենիքը,  
Խաչով գեր, թրով գողը  
Պատժում են միշտ իշխողները.  
Խաչն ու թուրը ձեզ պահապան,  
Երկուսն էլ զէնք պատուական։  
Հարսն թագուհի, փեսան թագւոր,  
Խաչն ու թուրը բռնէ քաւոր,  
Երկու զէնքեր խորհրդաւոր,  
Երկու կեանքի հովանաւոր.  
Փեսան իշխան և թագաւոր,  
Որդիք, թոռներ հպատակ տնւոր.  
Խաչն ու թուրը ձեզ պահապան  
Երկուսն էլ զէնք պատուական։  
Պատկադիր սուրբ քահանան  
Հարս, փեսայի հաճ միութեան  
Վկայ կանչէ սեղան, խորան,  
Դէմ յանդիման ժողովրեան

Պսակ դնէ ամուսնութեան։  
Տայ խաչ ու թուր կենաց դարման։  
Խաչն ու թուրը ձեզ պահապան,  
Երկուսն էլ զէնք պատուական։  
Հայոց ծառայ աշուղ Բաբա,  
Խաչն ու թուրը մեծ խորհուրդ ա.  
Երնիկ նրան, ով կիմանայ  
Գործ ածելու աեղը գիտենայ,  
Խաչի թրի խորհուրդն ահա  
Էսպէս սիրուն ու շատ մեծ ա.  
Խաչն ու թուրը ձեզ պահապան,  
Երկուսն էլ զէնք պատուական։  
Ըստ տեղան ըսեցին. «Բարաքեալլա աշուղ Բա-  
բա, բարաքեալլա»: Ըստ տեղան ըսեցին. «Մաշալլան  
աշուղ Բաբա, հալալ ինիքո կերած հացը»: Էդ կողման  
ըսեցին. «Ճառայ եմ Ս. Կարապետին զօրքին, չնորհ-  
քով լցրալ ա մեր աշուղ Բաբան, խմենք մեր աշուղ  
Բքին կենացը. օխնանքն ինի հարսնին ու փսին երաց»:  
Կերան, խմեցին, փողերը կիշեցին<sup>1)</sup>, ըշղին էլ  
մին բէան բխշեցին, էլլա ըծեցին, պար եկին, ե-  
տաւ ցրե եկին։  
Ոչ Սարգիսն էր էս հրսնաբումը, ոչ էլ Անան։

ԿԲ.

1930  
1883  
47

1883 փետրվարի 11-ն էր: Կողմանայ եղում

<sup>1)</sup> Կանչ անիլը տմբլաչու բէան ա, գիրք շինողե  
բէան չի, ընդրա մշար թողում ենք որ Տմբլաշ-Խա-  
շան ապերը անի հրսնաբի կանչը:

մին մեռալ կար նաժում դրուած։ Մոլին ըրսքաշին երրայ բռնուած էր մին աբրշումի սև եաղլուզ, երդլեխին երրայ էլ դրուած էր մին խաչ, մին աւետարան։ Նաժին չորս կողմաւը շարուալին խաչաւ, խչվառաւ, բուրփառաւ քհընէրը, տրլցուէրը, որ կտարեն մոլին կարգը։

Կարգը կտրելան ետը, լացի հանգաւ, սոզի ձենաւ սկսեցին ասիլ Բաղդասար դպրի էս գեանձը։ «Ժաղիկ նորաբոյս, տեսլեամբ նազելի, ցաւն եհար զըեզ, ևն»։ Եղցին լիքն էր ժղովրդաւ. ժամւորն էնչաշնք շատ էր, էնչանք շատ էր, որ ասեղ ցցիր, տափին չէր ընկնիլ։ չլուռ, պառաւ, մարդ, կնեկ, հարմնը, փեսայ լուս էլ լաց ին ինում, թառանչքաշում։ Աման բրանայ դիւս էր գեալիս. «Ախ, վախ, օխ, վայ, վայ, էս հինչ կրակ էր, էս հինչ փորձանք էր, էս հինչ պատիժ էր, որ Աստուծ մեր գլխին թափեց։ Վայ մեր անօրէն մեղաց. մեր մեղքն էնչանք շտացուա, որ չուրու երկինքն ա հօտա»։ Հենց դիտաս թալուին սրտերը ճճլամ ին, թոքերը խանձուում, աչքերը պղտորուում, քթը ճակերը էրուում, խրովուում, տըղտղորուում։ Աման սրտայ արին էր կաթում, աման հիւզի թոթուամ, աման ըջքերայ ավի ջրեր ծլծլամ, աման քթի ծոխ մլմամ։ Դեանձը ըսելիս աման մեծ, պիծի գինաց, պաշեց մոլին սրտի խաչն ու աւետարանը, խչընամբիւր ըրաւ, լաց ինիլաւ իրան մաքումը ասեց մոլին. «Աստուծ ճանապարհ բարի անի. դատաստանդ էլ բաղցը» ընտեսը ետ դէառաւ։

Մոլի տէրերն էլ թիւլացած ծկներաւ, կռացած մէջքաւ, ճմոռուած սրտաւ գինացին, խտանցին

նաժը, արիւն-ըրտսունքաւ թրջեցին մոլին իրեսները։ Մշանք լաց իլան, մշանք լաց իլան, դիւ ասես թա մեռալը ոննան չուրու գլուխը ըրտսունքաւ թըրջուեց։ Տղամարդիկը մին բանի հետ նաժան բռնեցին, որ մեռալը դիւս օնեն եղցան, տանեն տէրտէրներին հետան, ամմա կրացին ոչ. պատճառն որ շատ ին մոլին տէրերը, պինդ բռնալ ին նաժան։ Եկին օժաւ տղամարդիկը, եր կալան նաժը, օժաւ դիւս կալան. ամմա հենց հմարի թա նաժան կախուած մոլլոտէրելն էլ մոլին հետ հնեցին քաշ տալաւ, խրեկ մնաց որ նաժը կոտրուէր։

Էն օրը հենց մին օր էր, հենց մին օր էր, որ տեսնուիներն ասում ին մինմնու. «Ասես թա սպաւը ևն երկինքն էլ, գետինքն էլ, սարերն էլ, ձորերն էլ»։ Պատճառն որ երկինքն իրեսը մրկցրալ էր, օնքերն իւրիւր տուալ, տրտմալ. տշեղի մնան լաշտրակ լաշտրակ թափում էր ձիւն, հենց դիտաս թաշտրարաւ վոր էր ածում իւրան ըրտսունքերը։ Իրիւնակն էլ իսկի ըրեսում չէր, դիւ ասես թա իւրան իրեսը սև սև թուզբերի սոզի չրդաթաւ ծածկած հեռի տեղան լաց էր ինում։ Քշը թողբաւ ծածկուալ ին սար ու ձոր, հանդ ու խիւժ, հենց ին լիա սև սև չորեր գեցած, սոզ նստած կնանիք ընէին։

Մեռալը գժրթիւնաւ տարան գելընեղմանստ, գրին գելընեղմանում. ըրեսքաշը չորս մարդով բռնեցին գելընեղմանին երրայ, վեց հետ բուրփառ ըրին մոլին ըրեսին, մոլի տոնը ծխաւ լցրին, ետաւ եր կալան իրեսքաշը։ Մոլտէրերը մին մին հարուու (բուլըն) օրհնած վեղ գցեցին մոլին ըրեսին. կարգը

կտրեցին պրծան, վեղաւ լցրին գելրեզմանը, վեղին ելրայ էլ շրեցին քարերը, սրտըրարին ելրայ թփեցին բուրվառին խոնկին ու կրակը. լու էլ մին մին պչեցին գլամարը, ետ դէառան դրակի գեղը: Մինակ մռածին հերն ու աղբերքը ետ չի դէառան պատճառն որ օգում ին թա իւրանք էլ էն սհաթում մռնին ու թղումն նոր թղուածին հետ. ամմա տէրտէրները, մարդիկը թուղեցին ոչ, իւրանց հետ տոն տարան:

Մռածին ցաւերը տափաւը հնցան: Մեռածը սարի չանք ցաւ օնէր, ծովի չանք մտածմունք օնէր, ըշխարհիս ծնտրթիւնաւ քնենք օնէր, ըազի հմբարքաւ էլ եարաներ իւրան սրտին ու թոքերին ելրայ. պատճառն որ սրտինը սրտումը մնաց, մըտքինը՝ մտքումը, հիւգւմնը՝ հիւգումը, էշխինն էլ էշխումը: Աշխարհքս կարաց ոչ թա խեղճին մին ճարանի, կարաց ոչ թա մին գեղ, մին մհլամ դնի խեղճին եարալու թոքերին, ճարուած սրտին, ճմուռուած մտքին, տանջուած հիւգւմն, վառուած էշխին, մաշուած մարմնին: Մինակ գելրեզմանը պրտակեց խեղճին անձար ցաւերը, հալուած, մաշուած, տրորուած մարմինը. մինակ գելրեզմանն էր էս ջրլստարին վերջին գեղը, ճարը, մհլամը, կեանքը, ուրխոթիւնը, տոնը, տեղը, դնջոթիւնը:

Մեռալը թղելիս մին 25 տրեկան տպայ հեռու տեղան եշում էր, որ տեսնայ թա հինչ տեղ են թաղում նոր ննջեցելը: պատճառն որ հմանչում էր, որ մարդոց հետ խառնուէր, նաժան բռնէր, մոլին հետան գինար, ըրեսին օրհնած վեղ զցեր. մեր երկ-

րում սովորութիւնը գեռ հալա ուրէնքի տեղ ա բըռնում...: Պատճառն որ մեր երկրի սովորութիւնը քանդողը, ոննատակ տուողը չար լիւզուի գելրանի տակաւն ա լինում, ջրջեխուում. ըսդրա մհար էս խեղճ տղան մին բաձրի տեղ, մին քովի տակ գճոր էր ըրալ (‘ի գումս անկանիլ), հանցու որ մարդ տեսնայ ոչ. պատճառն որ համօթ ա: Ամմա էնչանք լաց էր իլալ, էնչանք լաց էր իլալ, որ աշքերն օռալ ին: Հունց որ մսաւ ու ջրաւ լիքը զզանը (կաթսայ) դնում են կրակին ելրայ, թժանում ա կրակը, հեռ գենամ, պլթպլթամ ջիւրը, փրփրում քափը, մլմլամ բուղը (փոլորչի). Էսա ըսդհենց էր էս խեղճ տղան էլ. պատճառն որ ըսդրա փորումը վառուալ էր մին անճար ցաւի թէժ կրակ, փետի մնան էրուում ին ճղմաղինքները, հեռ գեալիս սերտը, էփում թոքերը, պլթպլթամ մետքը, քթլծկերաւ դիւս ածում քափն ու բուղը: Քուռանամ բալամ. ջոխտ աչքս մին բիւնաւ դիւս պրծնի քըզ մհար, որդի, էդ հինչ ա քո հալը: — Ճատ լաց ինիլան կրմրտալ ին աշքերը, ըրտսունքաւ խանձուալ իրեսը, տղտղորուալ քթրծակերը, մրկալ թոքերը, գոճ եկալ սերտը, փթոթուալ աղիքները, ճուլանք դէառալ ոնները, թիւլացալ կոները, հոռ դէառալ մէջքը, կախուալ գլուխը, կծկուալ ծկները: Քար կտրուեմ, բալամ, ես քո ցաւերին որ մինն տսեմ, որ մինն գելրեմ, որ մինը չասեմ, որ մինը թողեմ, ոչ ըսելաւ ա պրծնում, ոչ էլ գելրելաւ: Թա որ երեմիա մարդարէն էլ դիւս գեայ իւրան գելրզմանան, եր կալած գեայ իւրան ոսկի դալամը, ըրծաթի թնըրամանը, էլլաշ կարալ չի

թա մին տղստեղ գերրի քո ցաւերը։

Քամին վղվզնւմ էր, փսընկիւն տպտղնւմ, բօրանը (բուք) հլոր հլոր անում, ձիւնը լաշտրակ լաշտրակ վրբ ածում, ցորտը թրէ մնան կտրում, գիւլլէ մնան թոքերը ծակում, անց կենում։ Ամմա ըսդրանք իսկի քար չին անում էս տղին, պատճառն որ ցան մշանք թիւնդ էր, մշանք թիւնդ էր, որ աման հնչին եաղթում էր (յաղթել)։

Քոլին տական եր կացաւ մեր տղան, ոնները քաշ տալաւ, ձիւնը ճղելաւ հսաւ նոր թղուածին, ընկաւ գերբզմանին երայ, խտտեց քարերը։ Նորը մինա լաց իւլաւ, մին պատառ սերտը հվզցրուց, քրերին ձիւնը դէս ու դէն ցրե տուաւ, փշքերքաւը սրբեց, քարերը խտտեց, պշպշորեց, ետաւ նստեց գերեզմանին կշտին։ Եշեց, եշեց թումբ դէառած վեղին, տեսաւ կաշկառ դէառած քարերը։ Էլհանուրուպուեցին խեղճին ցաւերը։ Էլհանուր եշեց, եշեց, գլոխը տիւրիւր տուաւ, ընկաւ մտքին տոնը։ Մին քանի հետ մտքաւը հնցաւ, որ քարերը դէս ու դէն թող թող անէր, վեղը դիւս տար, ինքն էլ մուածին հետ էն գերբզմանումը թաղուէր, էլ լիւս աշխարհ չի տեսնար, էլ մարդի իրես չի տեսնար, էն սհաթումը մեռնէր, պրծնէր էս անխղճմտանք ըշխարհան։ հանցու որ գինար երկինք, հիւգին ապրէր մուածին հիւգուին հետ, ցաւերը խոնուին ընդրացւերին հետ, ոսկերքն՝ ոսկերքին հետ, վեղն էլ վեղին հետ։ Ամմա հինչ անես, որ սիրտ հսկացող մարդ չի կար կշտին, որ վեղը իւրան երայ տար, քարերը էլհանուր շարէր իւրանց տղերումը։

— չիւգիս դիւս գեայ բըզ մհար հալամ……

2ուրացալ ին ըրտսունքերը, ցմաքալ իրեսները, էլ լացը գեալիս չէր. պատճառն որ մլորուալ էր մետքը, տրորուալ սերտը, շաղուալ խելը, շուարալ հիւգին, գիտում չէր թա հինչ անի։ Հենց հմարի թա ոչ քոն էր, ոչ զարթին, ոչ մեռած էր, ոչ կենդան, ոչ պել էր, ոչ խելունք, ոչ ըրազում էր, ոչ լիւսում էր, ոչ միմում, ոչ էս ըշխարհում էր, ոչ էլ էն։ Իւրան հետի ոչ ցիրեկ էր, ոչ գիշեր, ոչ տաք էր, ոչ ցորտ, ոչ սոված էր, ոչ էլ կոշտ, էրկու օր քէան չէր կերալ……

Մթնըժուալ էր, աման մարդ քաշուալ էր իւրան տոնը, մին պենդ հազոցի ձեն լսեց, եր կացաւ գինաց տոն։ Ամմա էն գերեզմանան հոացան ոչ իւրան սերտը՝, մետքը՝, խելը՝, հիւգին……

#### ԻԳ.

Մեծ բարիկենդանի օրերն ին։ Ժղովուրդին սերտը կոտրուած էր. ամմա օխտը շերէժ պաս ին պհըլական, առաջը մեծ պասն էր դիալիս։ Էփած կերակուրներին ոտը բոնալ էր Կորպատայ ու Ղարա-Թփի չորս կողմերը։ Աման տան մեծ, պիծի էս շերթում էփիլ էր տամ իւրան սրտուգիլիք կերակուրները։ Մին քանինը էփում ին խաշու, փլաւ, եղղածիւ, թանաւ, կաթնաւ, հաւ, մին քանինը խաշել, կուրկուտ, սամիր։ մին քանինը տոլմա (խճողակ) քընկեօց, խրոված, հարուստները՝ կաքեւ, մըհաւ, թուրաջ, սալամնը, տապակած միս, ծուկ-

Ն՛Ծ. մին քանինը՝ շփոթ, խալիճ, կունչով, քաշովի,  
զղոլակ, հալուա, խորովու. տիսում ին գեածա,  
թերթերուտ, բիշի, հասալի, երդահունց, կժնա-  
հունց, ծիւիրես. Անջուկը կանչի նարինենց Վան-  
շի-ապօրը, էն լէաւ կիմանար կերակուրների անուն-  
ները, պատճառն որ լէաւ կերակուր էփող ա:

Բարիկենդանի վերջին շէթում ջահիլ տղէրը,  
խոխերը խաղում ին, հիլոր, մէջ-մարդիկ էլ նստո-  
տած թմաշա ին անում: Մին քանինը խաղում ին  
զնիի, մին քանինը՝ կակրանքի. մին քանինը՝ մա-  
ղալախի, մին քանինը՝ կարպետների տակ մտած-  
լախտի, մին քանինը՝ ոխծնվագի, մին քանինը՝  
ջզր-լախտի, մին քանինը՝ փափաղ-քովի, մին քա-  
նինը՝ ըշկոկապի. մին քանինը՝ թամնի. մին քա-  
նինը՝ ջուխտըթապի, մին քանինը՝ կորեկ-կուրեկի:  
Պիծի խոխերն էլ խաղում ին գեուղուկանի, վէգի,  
թոփի: Մին քանինն էլ քրկը-պկո ածողը եր կալած-  
քեսա-գեալդի շինած՝ լծելաւ, պար գեալաւ, օյին-  
պազութիւն ընելաւ ծծցնում ին թմաշա անուները:  
Հսկրանք տղստեղ գերիլը աման թանակ լպգտողի  
բէան չի. գիրողը եա պէտում ա զուռնաշի ինի եա  
տմբաչի եա օխտը տարի եալանչի փահլուանութիւն  
արած ուստա-բաշի դէառած մարդ:

Կսօրայ հացը կերալ ին, թխմնդ գինան կոշ-  
դումը խմալ, շինամէջ դիւս եկալ: Մարդոց իրեն-  
ներին որ եշում իր, կծըպուզը եր էր ինում: Էս  
գիրը գրելիս մին քանի թանաք լպգտած բարեկամ  
ջահիլ տղէք (երիտասարդք և պատանիք) գիրթ  
դէօնս բացին, օժաւ ինք կալան, բարիկենդանի

Էս զլոխը կրգեցին. ետաւ մինմնու հետայ ըղաշանք,  
պղատանիք ըրին: Մինն ասեց.

—Ինձ թաղես, թա խաթրս կոտրես, այն գի-  
նու երգը, որ գրել էք «Միրզա և Աննա» գրքում,  
խնդրեմ, ընդօրինակէք և այս տեղ զետեղէք: Մինն՝

—Ես մեռնեմ, թա խաթրս կոտրես, այս տեղ  
խիստ յարմար է այն երգը, որովհետև «Միրզա և  
Աննա» գրքից չկայ Կովկասումս, հետեապէս խնդ-  
րում եմ ընդօրինակել այս տեղ: Հսդհենց էլ մե-  
կալը, մեկսալը շատ խնդրեցին, ես էլ կրացի ոչ,  
բարեկամներիս խաթրը կոտրեմ, ընդրա մհար գը-  
րում եմ ըս տեղ:

«Միշտ ման եկի ձաքի, ձիրուան, ձամախի,  
ֆիշեր, ցերէկ քաղքից քաղաք չորս տարի.

«Ամեն ցաւոց ինչ է դեղ» ես հարցըի.

Ողջ բժիշկներ ինձ ասացին. «Լաւ գինիր:

Դէ, մատուռակ, լի անապակ ած գինի,

Խմենիք կենաց մեր բաժակներ չայ ազգի:

Ալս, տէր տէր ջան, ես այն օրից ուխտ արի,  
չացի վերայ միշտ գործ ածել լաւ գինի.

Փորձով տեսի հոգւով, մարմնով հիւանդի

Մի հատ բժիշկ, դեղ ու ճարն է լաւ գինի.

Դէ, մատուռակ, լի անապակ ած գինի,

Խմենիք կենաց մեր բաժակներ չայ ազգի:

Ազնիւ գինի, ով կարող է քեղ գովել,

Քո յատկութիւնըն մին մին կարգաւ լոխ շարել.

Աշխարհ ողջ թուղթ, ծմակ զալամ էլ լինին,

Ոչ ոք կարէ քո գովասանք լի գրել.

Դէ, մատուռակ, լի անապակ ած գինի.

Խմենք կենաց մեր բաժակներ չայ աղզի:

Աղնիւ գինի, երբ ըս շիրան կարասում  
Կծպլծում է, եռում, եփում, պլճալընում.  
Երբ կուլայից ձայն ես տալիս, քըլքըլում,  
Կեանք ես կանչում, անմահութիւն խոստանում.  
Դէ, մատուակ, լի անապակ ած գինի,  
Խմենք կենաց մեր բաժակները չայ աղզի:

Աղնիւ գինի, դու աննման երկնային  
Յատ ուկ չնորհուած մի մեծ պարզե ես անգին  
Ուժ, զօրութեմ, խելք և չնորհք ամենին,  
Միշտ դու կը տաս քեզ շափաւոր խմողին.  
Դէ, մատուակ, լի անապակ ած գինի,  
Խմենք կենաց ողջ շափաւոր խմողի:

Աղնիւ գինի, երբ քեզ խմէ խեղճ մշակ,  
Կը մոռանայ աւուր քաշած աշխատանք.  
Դու կը բանաս նորա փակուած ախորժակ,  
Յամաք հացը հենց կը զգէ մեղր, կարագ.  
Դէ, մատուակ, լի անապակ ած գինի,  
Խմենք կենաց ժիր մշակաց չայ աղզի:

Աղնիւ գինի, երբ քեզ խմեն ծերերը,  
Իսկոյն կ'ուղղին նոցա ծռուած մէջրերը,  
Կը սղալեն իւրեանց մօրւոք, պեխերը,  
Եւ կըսկսեն լաւ պատմութեանց հիները.  
Դէ, մատուակ, լի անապակ ած գինի,  
Խմենք կենաց ողջ ծերունեաց չայ աղզի:

Աղնիւ գինի, երբ քեզ խմեն պառաներ,  
Ջուտով փայլին նոցա աչաց մութ բիրեր,  
Տեսնես ինչպէս կը վըզվըզան լիսեռներ,  
Եւ կը դիզուին բուրդ, բամբակի կծիկներ.

Դէ, մատուակ, լի անապակ ած գինի,  
Խմենք բաժակ ողջ պառաւանց չայ աղզի:

Աղնիւ գինի, երբ քեզ խմեն գղիրներ,  
Ջուտ կը տնկուին նոցա կախուած գլուխներ.  
Մի վայրկենում պտոյտ կ'անեն ողջ տուներ,  
Պատուէր կը տան ինչպէս զահի վեզիրներ.  
Դէ, մատուակ, լի անապակ ած գինի,  
Խմենք կենաց բոլոր գղրաց չայ աղզի:

Աղնիւ գինի, երբ քեզ խմեն զօրականք,  
Մատաղ կ'անեն 'ի սէր աղզի մահ ու կեանք,  
Արիմք եռան, սրտեր թնթան կարդ ի կարդ,  
Վաղեն յառաջ 'ի թնամեաց մեծ բանակ,  
Սուրեր շողան, թօփեր տեղան շատ գնդակ,  
Չորք որոտան, սարեր կրկնեն արձագանք,  
Աշ, մատուակ, ուր զօրականք չայ աղզին,  
Ուր է բաժին նոցա կենաց թունդ գինին:

Աղնիւ գինի, երբ քեզ խմեն հիւանգիներ,  
Դէն կը զցեն բարձ ու դէօշակ, եօրդաններ,  
Կը փըլփըլան վարդի գունով երեսներ,  
Եւ կըստանան նոր կեանք, ողի, նոր սրտեր.  
Դէ, մատուակ, լի անապակ ած գինի,  
Խմենք կենաց ողջ հիւանդաց չայ աղզի:

Աղնիւ գինի, երբ քեզ խմեն հայրսուրբներ,  
Վարուց սրբոց կը լինին քաջ պատմիչներ,  
Առակներով կը տան սիրուն խրատներ,  
Լիանալով կը զարմանան լսողներ.  
Դէ, մատուակ, լի անապակ ած գինի,  
Խմենք կենաց կրօնաւորաց չայ աղզի:

Աղնիւ գինի, երբ քեզ խմեն քահանայք,

Մաշտոցն առած շուտ կը վագեն տունօխնանք,  
Անզիր կ'ասեն աղօթք, մաղթանք, շարականք,  
Մրտով կ'օրհնեն տաշտ ու կարս, եղամանք.  
Դէ, մատուակ, լի անապակ ած գինի,  
Խմենք կենաց քահանայից չայ աղգի:

Կարմիր գինի, երբ քեզ խմեն տիրացուք,  
Բիւրբիւլի պէս կ'անեն պէս պէս ծըլվըռուկ,  
Երգեր, խաղեր, տաղեր կ'երգեն կըլկըռուկ  
Կը զարդարեն կնումիք, հարսնիք ու խնճոյք.  
Դէ, մատուակ, լի անապակ ած գինի,  
Խմենիք կենաց բոյսը դպրաց չայ ազգի:

Կարմիր գինի, երբ քեզ լսմեն աշուղներ,  
Կեռան, կեփին և ջնշ կը դան սուրբ էշխեր.  
Լեզու կ'ելնեն սապ, քեամանչա, սանթուրներ,  
Վածեն, կահչեն լաւ ու ընտիր շատ երգեր.  
Դէ, մատուակ, լի անապակ ած գինի,  
Խմենք կենադ ողջ աշուղադ չալ ազգի:

Կարմիր գինի, երբ քեզ խմեն սաղանդէք,  
Զայն կը հանեն փնդ, տնկըլըազգ և զուռնէք,  
Եալի կը տան բաշ տղամարդք և փեսէք,  
Պար կը բռնեն հարսն ու աղջիկ և տղէք.  
Դէ, մատուակ, լի անապակ ած գինի,  
Խմենք կենազ սաղանդալիզ չալ ազգի:

Սզնիւ գինի, դու դատաւնը արդար ես,  
Ով քեզ խմէ իւր չափից դուրս, կը պատժես,  
Յեխի, ձիւնի, փոշւոյ միջում կը թաթիւնս,  
Եւ կատարեալ մոխրաթաւա՛լ մի կանես.  
Դէ, մատուակ, լի անապակ ած գինի,  
Խմենք կենաց ողջ չափաւոր խըմողի:

Ո՞վ սուրբ գինի, դու ամենից կը սիրուիս,  
Դու օրհնուած ես, դալձեալ Տէրից օրհնուիս。  
Ա.՝ իս, կը կանչեմ բոլոր սրտով Քրիստոսիս,  
Որ անպակաս չայ սեղանից միշտ լինիս。  
Դէ, մատուակ, լի անպակ ած զինին,  
Խմենք, փառք տանք երկնից երկրիս մեծ Տէրին։

Ինչ սեղանում քո բաժակներ գտնուին,  
Ղարիպ եղբարց անունները կը յիշուին,  
Բաժակ բաժկի ծընկծընկալով կը թխուին,  
«Խերով, բարով դան» ասելով կը կոնծուին.  
Այս տէր տէր ջան, լի բաժակներ էս գինին,  
Խմենք կենադ ողջ զարիպադ չայ աղքին:

Աղնիւ զինի, երբ դու չը կաս 'ի սեղան,  
Տխուր կ'անցնին կնունիք, հարսնիք բարեկենդան.  
Իսկ հոգեհաց կամ ժամահաց, երբոր բեղ հետ  
միանան,  
Ցնծան երեսը, փայլին աշեր, բերանիք լինին  
օրհնաբան.

Այս տէր տէր ջան, լի բաժակներ էս զինին,  
Խմենիր հոգուոց ննջեցելոց չայ աղքին:

Ով սուրբ պիմի, նվ կարէ քո արժանին  
Գովել խօսքով, կանչել ձայնիւ բիւրից մին,  
Ներիիր քո խեղճ ծառայ Ուստա-Զամալին<sup>1)</sup>

<sup>1)</sup> Ուստա՞րէսը ի աշուղական անունն է:

Որ շատը թողուց երդըս լսողաց սուր խելքին.  
Դէ, մատուռակ, լի անապակ թաս վերջին  
Ա՛ծ, որ խմենք, պատուով վիրջ տանք մեճլիսին»:  
Էս բարիկենդանին մնացած գերբելի բէաներն  
էլ թողում ենք, որ Կորպուեցի բանաստեղծ-Յարու-  
թիւնը գերի. պատճառն որ էն մըզանայ լէաւ  
ա գիտում խրանց գիւղի բարիկենդանի աման  
բնոթիւնը:

ԻՊ.

Կրդացողը մտահան ըրած չի ինիլ որ Պտրու-  
սանց Զէաքարան ի. գլխի վերջում հաստատ խօսք  
էր տուալ որ Անուն նշանը տին (տային), հրսմնիք  
ընին. Զէաքեարան մին խօսքի ելքայ հաստատ ոտը  
չէր կենում. ոչ հան հա էր, ոչ էլ չէն չէ. ընօրան  
հան՝ հենդ օրան ետը չէ էր, էպսան չէն՝ ութ օ-  
րան ետը հա էր. Զէաքեարան հաստատ կամք չօնէր.  
պատճառն որ էս մարդին կամքը հենց էր սովի խոտ  
ինէր, որ մին տեսնում ես՝ որ դը պի հարաւ ծը-  
ռուեց, մը խրեկ ետքը՝ դը պի հիւսիս, էպսան օրն  
էլ արևելք, արևմուտք:

Զէաքեարան ետի եկող մարդին հաստատ խօսք  
էր տուալ, որ նշանը տանեն տան: Էս մարդը Սրգի-  
սին ասալ էր. «Աչքի լիւս, Սարգիս, օրախ կաց, ա-  
ման հինչ վրջացալ ա, հրսանիք ենք ընլացուք,  
պսակենք քեզ Անուն հետ»: Էս հաստատ խօսքը լը-  
սելան ետը Սրգիսին էլ, Անան էլ լւացալ ին, եր

կացալ թեր ընկած տղերան: Ամմա մինքանի օրան  
ետը էն մարդը եկալ էր Զէաքեարին կոշտը, որ  
նշանը տանեն տան, պրծցնեն, հրսննիքին պտրաս-  
տոթիւնը տեսնան: Զէաքեարան խօսրը փոխալ էր  
էլլիա. «Ինիլ չի, որ ինիլ չի, էլ օգում չեմ էն աղ-  
ջիկը»:

Սարգիսն ու Անան, Էնչանք ուրխացալ ին, Էն-  
չանք ուրխացալ ին, որ օգում ին թա թե անեն  
թոչեն. պատճառն որ էս ետի մէջ ընկած (միջնորդ)՝  
մարդը իմաց չէր տուալ Սրգիսին, որ Զէաքեարան  
մետքը փոխալ ա, էլ օգում չի որ Անուն նշանը տա-  
նի, վախում էր թա Սրգիսն ասէր, էլլիա հիւսնդա-  
նան, մեռնեն, ինքը պատճառ դէառնայ: Մին քա-  
նի օր բէանը ծծկելան ետը՝ գինաց էս մարդն ի-  
մաց տուալ բէանի հանգամանքը Մէծ-շէնացի Տէր-  
Մկրտչին, որ ըզգական էր Սրգիսին: Տէր-Մկրտիչը  
մին բարի, խելունք, բաձրի, լիքը մարդ ա, աման  
բէանում փորձուած: Էս տէր տէրը Դալի-մահրաստ-  
յին ազգան ա, հիպու որ աման ասած, խօսածը,  
բէանին էտոթիւնը մին մին հսկացաւ, գինաց Զէա-  
քեարին կոշտը, էրկեան, բարակ խօսեց, Զէաքեա-  
րին հսկցրուց որ պատճառ չի դէառնայ էրկու նոր  
ծլածների մահուան:

— Ա՛ տէր, լէաւ ես ասում, ամմա ես օգում  
եմ որ Սրգիսին հետի օրիշ աղջիկ օղեմ:

— Դիւ էլ ես լաւ ասում, Զաքարա, ասենք թէ  
ուրիշ աղջիկ ուղեցիր. Սարգիսն էլ հաւան չի կա-  
ցաւ քո ուղածին. որ քահանան կարող է էն նշանը  
օրհնել. որովհետեւ Գէորդ վեհափառից սաստիկ հրա-

ման կայ բոլոր քահանաներին վերայ, որ ոչ մի քահանայ չհամարձակուի նշան օրհնել առանց կանխաւ փեսացուի և հարսնայուի հաճութիւնը ստանալու։ Քո հաւանածը տեսնանք Սարգիսը կը հաւանի։ Սրգիսին չհաւանածը տեսնանք քո քահանան կը նշանի։

—Ա տէր, իմ տուած նշանը կարալ չի օրհնի իմ տէրը։

—Զէ, կարալ չի, որովհետեւ նշանը օրհնող տէրը կարգալուծ կը լինի Առաջնորդան։ Են որ քահանան ա պլացալ, որ քո նշանը օրհնի և մինչեւ իւր մահը զրկուի իւր քահանայութիւնից։

—Ա տէր, էս բէաները ինձ հսկացրալ չին։ Իինչ լէաւ որ տղստեղ հսկցրիր ինձ դիւ։ Ղարդ ա, մհեկ խելքո հսաւ, ինելի բէան չի, գերլոխ չի գեալ առանց Սրգիսին հաւան կնելու։ Ա տէր, քը մատաղ, մին բէան էլ կայ—ասում են թա մին պատառ չսովթիւն կայ Անոն ու Սրգիսին մէջ տեղը։ Բա էն հնանց կինի։

—Էս պնդաւ պորտ եմ ըրալ, Զաքարա, խնամէական վեց պորտ ա, աման տեղ իրաւունք են տալիս պսակել խնամէական վեց պորտը։ Թա որ մինակ էդ ա պատճառն, միամիտ կաց, ես գինամ, պսակի թուղթը առնեմ, բերեմ, քեզ տում։

—Մինակ էդ ա, էլ օրիշ պատճառ չօնեմ։

—Էլ խօսքդ փոխես ոչ հա՛, Զաքարա։ Թա որ էլի փոխես, տղադ էլ ես սպանլացուք, հրսնացուկ էլ Բայց եթէ հաստատ մնաս տուած խօսքիդ վերայ, էրկու մեռած մարդի յարութիւն կը տաս, ինչպէս Քրիստոս յարութիւն տուաւ չորս օրուան մեռած Հաղարոսին։ Հակացար Զաքարա։

—Լէաւ հսկցայ, ա տէր, լէաւ։

Եզսի ըռւտհանայ ճելլի եր կացան։ Տէր Մկրտիչը ձին պտրաստեց, որ գինա Ջօշուայ դալան, պակի թողթը ինք օնի, բերի։

—Ա տէր, կաց, գինալ մի, կուղես տղաս էլ մեռնի, չիւսնունց աղջիկը օղնում չեմ, որ օղնում չեմ—ասեց Զէքարարան պենդ պենդ ճղճղալաւ՝ տէրին երայ կինուած։

—Արին քո ՚ի գլուխ քո եղիցի, Զաքարա, առաջի Աստուծոյ պարտականը դու մնաս—ասեց տէրը, գինաց իւրանց տոն։

## ԻԵ.

Սրգիսին վերջին յոյսը Տէր-Մկրտիչն էր։ Զէքարին էս ետի խօսքերը, Տէր-Մկրտչին էնշանք թափած բշխտանքին փուչ դիւթ գեալը, լոխ էլ մին մին հսցըին Սրգիսին ու Անուն։ ըրկորան էլ էլինայ ընկան տեղերի մէջ, հիւանդացան։ Ամմա Սարգիսն էս շառ խաբարը որ լսեց, սերտը թութը ուաց, աչքերը մթնեց, մետքը մլորուեց, դմխը շոռ տուաւ, վոր ընկաւ։ Սարգիսը հինջքան ըրաւ որ էս շառ խաբարը իմանայ ոչ Անան, ամմա ճար չիլաւ, Անան էլ լսեց, էլ իւիլ հիւանդացաւ։

Սերտ կայ, որ ըրկաթայ պենդ ա, սերտ էլ կայ, որ մումայ կակուզ ա։ Սերտ կայ, որ պուղւատի մնան գիմացկան ա, սերտ էլ կայ որ չաթանի (եղեգն) մնան ջլջեխուող ա։ սերտ կայ, որ սպարի մնան կրկուտին ըռըխին մհալ չի դնում, սերտ

Էլ կայ որ ցաւերի մեծ մեծ կրկուտներան շօչի մնան փշըրուում ա: Մերտ կայ, որ գերանի մնան հաստ ա, սերտ էլ կայ, որ խայաթու մնան բարակ ա. սերտ կայ, որ ալմասի մնան ա, խարտուցը մուտանում չի. սերտ էլ կայ, որ մածնի մնան կակուղ ա<sup>1)</sup>: Սրգիսին սերտը շատ բարակ էր, ամմա Անուն սերտըն էլ իւիլ բարակ էր:

Գինն իմացողին հետի պատիւն անդին ա, չիմացողին հետի ոչինչ: Պատիւը իւիլ ա իմացողին հետի քանց ապրիլը. չիմացողին հետի՝ ապրիլը քանց պատիւը: Պատիւ կայ՝ կեանք ա, անպատուութիւն կայ, մահ ա. պատիւ կայ կենդան, պատիւ կայ մեռած: Սարգիսը քնենք էր անում, ինքն իւրան ասում. «Խե, ես իմ հօր անհնազանդ եմ. բա ես հինչ անհնազանդոթիւն եմ ըրալ իմ հօր, հիպի եմ դիւս եկալ իմ հօր խօսքան: Իմ հաւան կացած աղջիկը պատուաւար, աբուովան, հայալն, տնարար, բնարար, հնազանդ: Իմ հեր սպանեց իմ պատիւը, ինձ սաղ սաղ թաղեց Զրբերգայ մհալումս. Էլ ես կարալ չեմ որ ապրեմ, պատճառն որ իմ հեր դէյնը (եղունդն) մսան ա բժաննւմ, բիւլրիւը վարդան ջոկնւմ, կեանքս էլ ախ կեանքան: Էլ ես ապրիլ չեմ, պատճառն որ իմ հիւգիս հիւգուան ջոկից, սերտա՝ սրտան, մնաքս

<sup>1)</sup> Արցախի գաւառներում բացի գրագէտներից գործածական չեն, զգալ, զգացում, զգայուն, զգացողութիւն բառերն, որոց տեղ գործ են ածում փոխաբերական բառերս սերտը փափուկ ա, սերտը կակուղ ա, էլ իւիլ բարակ ա—չափաղանց զգայուն և այլն:

մտքան, սէրս՝ սէրան: Բա էսչանք ցաւին մարդ կը դիմանայ. բա էս Աստուծ եր կօնի»...:

Անուն սերտն էլ իւիլ փափուկ (զգացմանց աստիճանն զերազանց—անդիմադրելի) էր, շատ մետք ընելաւ ինքն իւրան ասում էր. «Միթամ ես անհամօթ աղջիկ եմ, միթամ ես անպատեալ աղջիկ եմ, միթամ ես էնչանք անարժան եմ, ոք Պարուսանց Զրբերան կոտրում ա իմ անումը, սպանում իմ պատել, ինձ էլ հիւգաւ մարմնաւ էս հալ քցում, իմ մահուան էլ հրեշտրակ դէառնում»:

Հունց որ որդնը ճպրին (ընկուղին) մէջը մտնելաւ կրծում ա կրծում, մէջը օտում, փչացնում, թոգում քչիլ (կեղել), ըսդէնց էլ էս անձար ցաւը զրսան Անուն սերտը մանելաւ, կրծկործելաւ լափեց, լափեց, փչացրուց խեղան ըղկան սերտը, մետքը, մեմն ու եղը, թոգեց միակ չոր ոսկուները: Էլ օրիշ մին ճար չէր մնացալ, մին հնարը չէր մնացալ. Անուն ճարն ու հնարը մինակ մնացալ էր Աստուծ: Մին օր մինակ էր մնացալ տանը, հենց հմարի թաքսաչոր ծառի մնան (բուսած տեղը չորացած) ոտան երայ չուրացալ էր խեղան Անան, դէառալ մին ոսկուռի մարդ. մնացալ էր իւրանանում մին տաք քամի (չունչ) որ բրանսաւը գինամ էր գեալիս: Չորեց տափին երրայ, աչքելը բձրցրուց երկինք, մին քանի հետ թառանչ քաշեց, ինչխանչեց, աղի ըրտսունկերը ծլծլցրուց, ձեռքերն էլ սրտին, մտքին, հիւգին հետ դըպի դը եր բձրցրուց և ըրաւ էս աղօթքը.

— Աստուծ, իմ եարալու հիւգիս Քը մատաղ, էլ կարում չեմ, որ ապրեմ, իմ հիւգիս առ, որ պըրծ-

նեմ էս անխղճմտանք ըշխարհքաս։ Աստուծ, բա տես-  
նում չես որ բիւլիկլը վարդան են ջոկում, վարդն  
էլ բիւլիկան. բա առանց բիւլիկլի վարդ կապրի,  
բա առանց վարդի բիւլիկլը կապրի։ Աստուծ, իմ  
էրուած, խրովուած, տղտղորուած թոքերս Քը մա-  
տաղ, մարդիկ աման բէան եր են օնում, Դիւ էլ  
ես եր օնում։ Պարուսանց Զքեարան ինձ հաւան չի  
կենում, արժան չի տեսնում, որ ինձ իւրան տոնը  
հարս տանի... ամմա Դիւ արժան կը տեսնաս, որ  
ես Քո տան մէջ հարս ինեմ. Դիւ ինձ կընդունես,  
որ գեամ, Քեղ երրկինքումը հրանոթիւն անեմ։ Դէ  
իմ հիւգիս առ Աստուծ, ամմա Սարդիսը պահիւ

### Ի՞Զ.

Անուն մերը եկը, տոն մտաւ. հինչ տեսաւ,  
վախ, հինչ.— տեսաւ, որ իւրան աղջիկը մեռալ աւ։  
Կրդացողը խելքաւ զիտաց, որ էն նոր թաղած մե-  
ռալը Անուն մարմինն էր, էն քոլին տակին զճոր  
ըրած լաց ինողն էլ Սարդիսն էր։

Սարդիսը մհեկ էլ ըռջի (առաջի) Սարդիսը չի.  
պատճառն որ Անուն հետ թաղուալ ին Սրգիսին  
սէրն ու էշլը, ուրխոթիւնն ու ծիծաղը, խաղն ու  
տաղը, սերտն ու մետքը, կեանքն ու առողջոթիւ-  
նը։ Օրքանց օր ոտան երբայ մաշուռում էր, ու մաք-  
րուռում, հալուռում ու մաղուռում։ Մին անճար ցաւի  
թեժ կրակաւ հալուալ ին եղը, էրուալ մեսը, խան-  
ձալ սոկերը, սւցրալ մորթին։ Հենց հմարի թա-  
ռչ կերածն էր զիտում, ոչ խմածը, ոչ ասածը, ոչ

լսածը, ոչ քոն ինիլը, ոչ եր կենալը, ոչ ըրածը, ոչ  
էլ չըրածը։ Սրգիսին ելրայ ոչ տեսք էր մնացալ,  
ոչ լաւոթեան նշան, ոչ օժ էր մնացալ, ոչ էլ կրողո-  
թիւն։ Գլխին, ըրեսին մազերը քնձմնալ ին, գոճ  
եկալ, մճուռալ, իրեսը սւացալ, մորթին էլ ոսկուռ-  
ներան կացալ (կպչիլ) աչքերը փոս ընկալ, պրտո-  
դուալ, ոնները սորան դէառալ, ծիներն էլ թիւպացալ։  
Կովերը, ոխճարները, էծերը ծնալ ին. նախ-  
շուն նախշուն, պիծի պիծի գեառները, հէօկերը  
մկկամ ին, լոր լոր անում։ Գեարունքն եկալ էր.  
մարդ, ընասուն, հայք, գեաղան, սոզուն, ճանճ,  
պղոճ լոխ էլ դիւս ին եկալ իւրանց տներան, գիւ-  
մերան, բիւներան, ծկերան, ճղքերան, պտըծկերան,  
ուրխոթիւն ին անում։ Սար ու ձոր կնանչալ ին,  
հաւքերն էլ ծլվում ին. ամմա ըսդրանիր լոխ էլ Սըր-  
գիսին մհար չին, ասես թա Սրգիսին աչքին մի-  
նակ ըրեսում էր Անուն գերբեղմանը, պատճառն որ  
իւրան խելքն էլ էն գերբեղմանումն էր, մետքն ու  
սերտն էլ, հիւգին էլ։ Հունց որ նախշուն տաշած  
սէրուն քրերաւ շինուած մին նոր վանիր, որ մին  
թփընքելաւ քանդում ա, փոլ ածում, պրիշակ անում  
մի օժաւ ժաժ (երկրաշարժ), փոլ եկած քրերին տա-  
կին թաղուած, ծածկուած ա մնամ մին սորբի  
գերբեղման։ Էս ա ըսդինց էր Սրգիսին սերտն էլ։  
Քանդուալ, պրիշակ էր դէառալ իւրան սրտի սէ-  
րին տաճարը, փշրուալ յոյսին սիւները, թափուալ  
կեանքի քարերը, ցրկ եկալ խուրհրդին պատերը.  
ամմա Անուն գերբեղմանը մնացալ էր ծածկուած  
էդ փլատակում։ Ըսդրա մհար Սրգիսին օշն ու մետ-

Քը գչեր ցերեկ հռանում չին էն գելքմանան:

Սրգիսին ըզգըկանները, բրըկամները տեսան որ  
Սրգիսին հալը հալ չի, գինացին կոռնը չփողին  
կոշտը, կոռնը չափիլ տուլին, որ ասեց.

— Սրգիսին մհար պէտում ա զիր անիլ տար:  
Գինացին Փրզըմալա զիրքացին կոշտը, որ ա-  
ռաջ հրցրուց Սրգիսին հօրն ու մօրը անունները,  
տրըղորման (համրիչ) իրիք հետ դէս քցեց, իրեք հետ  
էլ դէն, ետաւ ասեց.

— Սատանայական հնարքի բան ա, զիր ա  
ռւզում, մին սիպտակ որձակ բերէք, մորթենք, ա-  
րիւնովը զիր անենք, կը լաւանայ:

Հիպու որ տեսան էս զիրը քար չրաւ (ոչինչ  
չօգնեց, անզօր էր) մհեկ էլ գինացին Ղայիրալի  
շէնին զիրքացին կոշտը, որ էլլիա հրցրուց, տրը-  
ղորման դէս ու դէն քաշեց, ասեց.

— Գիր ա օզում. մին սեւ հաւ բերէք, մոր-  
թենք, արիւնովը զիր անենք: Ետաւ իրեք զիր զի-  
րեց, գինացողին ասեց. — Էս զիրը կը թաղէք չորս  
հոցի մէջ տեղում. էս մինն էլ կը կարէ՛ք Սրգի-  
սին քարծին մէջ, ամմա իրանից թագուն. էս մին  
զիրն էլ քցեցէ՛ք ջրի մէջ, ջուրը մին քանի անզամ  
խմի, ետաւ զիրը կը քցէ՛ք կրակի մէջ, չուտով կը  
լաւանայ:

Մին ամսան ետը տեսան որ էս զիրենն էլ  
քար չրին, մհեկ էլ գինացին նուրագեղ զիրքաց  
Զօհրաբին կոշտը. որ ասեց.

— Էղպէս հիւանդիները իժում, ոչ մի օքմին չի  
կանայ առողջացնել. էդ մինակ իմ բանն է. — Ետաւ

զիրեց իրեք զիր ու ասեց.

— Էս մէ զիրը կու թաղես Անայի գերեզմա-  
նի հողի մէջ, էս մէ զիրն էլ թագուն կու կարիս  
Սարգիսի փափաղի արանքում: Էս մէ զիրն էլ՝  
արխալուղի արանքում: կու առողջանայ:

Էս զիրքացները լիս էլ ինք կալան իւրանց  
զիր անելու հախը (վարձքը) ամմա Սարգիսը լացաւոչ:  
Հայ քոչն էլլիա զինաց սար:

## ԻԵ.

Ոտան երբայ չուրացած, ուկերք ու մորթի դէա-  
ռած Սրգիսին սրտին հվոժիւն չի տուին հոցին երբայ  
իւրած, Կորպատայ չուրու Մռաւ սարը գտնուած  
հաւքերի ծլվլոցը, զրերի վշվոցը, աղբիւրների բչրչո-  
ցը, ծաղիկների պայծառ տեսքը, զրավարդերի հա-  
մուղ ոտր, սրերի ու ձուրերի գուրական տեսքը.  
պատճառն որ աման տեղ տեսնում էր Սարգիսը Ա-  
նուն պատկերը (յուշարար յլիշտակները) էլլիա  
մրմնջում, մրմոքում, կսկծում ին խեղճ տղին էր-  
ուած, խորովուած սերտն ու թոքերը, մլմլում քթին  
ծոխը, Սարգիսն ինքն իւրան էս խօսքերը ասում էր,  
ջնջորում, տպակուում ցւերի կրակաւ. «Էս տեղ էր  
վոր թողած Անունց ըլաջուկը». «Էս ծառին տակին  
նստալ էր Անան». «ըս տեղ մինմնու հետ խուսե-  
ցինք ես ու Անան». «ըս տեղ Անան ինձ ջիւր տուաւ,  
խմեցի». «Անան էրկու լէաւ վարդ կտրեց էս մհոարի  
քուան». «Անան աման օր ջիւր էր տանում էս ըղբրան». «Անան ըս տեղ էր կթում կովերը, ըս տեղ էլ ոխճար-

ները». լսդրանց մ՞նան էլ շատ շատ բէաներ մետքն էր բերում, լաց ինում: Աման ըրիւկին, աման ըռան-ւետ եշում էր, տեսնում որ չիւսնունց ըլաջուկը տեղն ա, ամմա Անան տեղը՝ չի: Աչք էր ածում, աչք էր ածում, ամմա իւրան Անան տեսնում չէր ըղջկորանց մէց, կաթնը կիթողներին մէց. լսդրա մհար թառանչ էր քաշում, խնչսանշնում, լէաց ինում, ախ քաշում: Կարճ ասեմ, դիւ ասես թա աման մին քար, աման մին ծառ, աման մին աղբիւր, աման մին ծաղիկ Անուն պատերը հիլու մնան բերում ին Սրգիսին աչքին առաջը: Ուստա-Գէորգը քը մատաղ բալամ, էդ հինչ ա քո հալդ...: Ջատ գիշերներում էլ ըրազում տեսնում էր որ Անան իւրան հետ խօսում էր, ասում էր. «Մարգիս, հերիք ա հինչ որ լաց ես իլալ. էլ լաց մի ինիլ. պատճառն որ շատ չնցած մինմեռ հետ էլհա կ'ասենք, կը խօսենք, ուրախոթիւն կանենք»:

Սրգիսին շուին (հովուական սրինգ) ըս տարի փոխալ ա իւրան հանգը: Մարգիսն էն շուաւն, որ ամման տարի համ ուրիսացալ էր համ էլ ուրիսացրալ մարդ, կնեկ, հարսնը, աղջիկ, մեծ, պիծի, սար ու ձոր, հաւք ու ընասուն, մհեկ էլ էն շուաւը համ ինքն ա տրտմում համ էլ տրտմցնում, համ ինքն ա լաց ինում, համ էլ լսողները լցցնում: Ասես թա Սրգիսի սրտին հետ փոխուալ ա շուուն սերտը, մտքին հետ՝ մետքը, հանգին հետ՝ հանգը, ձենին հետ էլ՝ ձենը: Էն շուաւը, որ ամման ըրիւկիւն մին հրմնքատոն էր շինալ օպերը, մհեկ էլ սգատոն էր շինում: Էն շուաւը, որ ամման որ գովալ էր Անուն

շնորհները, ինդրալ Հստուծանայ, որ էրկեան կեանք տար համ Անուն համ էլ իւրան, մհեկ աղօթք ա անում, լղաչանք, պղատանք անում, որ Աստուծ իւրան հիւգին ճելի առնի, տանի Անուն հիւգուին կոշտը: Էն շուաւը, որ շատ անգամ պար էր ածալ իւրան սրտի սիրական Անան, մհեկ էլ ճելի ճելի ածում էր Անուն վերջի խօսքը, որ Սրգիսին ըզգական մին հարսնը լսալ էր Անուն բրանան, եկալ, ասալ Սրգիսին. «Աղջի Մարեան, իմ բիւլիւլին բարձ անես, ասես որ ես գինամ եմ երկինք, իմ բիւլ բիւլին (Սարգիսը) էլ պահ եմ տամ Հստծու»:

Ոխճարներն էլ, հենց գիտաս թա, սերտ ին խմանում, իրանց շուբանին հետ տրտմում ին, լաց ինում: հենց գիտաս թա յսդրանց սրտերն էլ ին փոխուալ. պատճառն որ առաջ որ իւրանց չօբանը շուկին ածում էր, լոք լոք ին անում, ուրիսանում, համուղ համուղ ըրածում: ամմա մհեկ որ Սարգիսը շուկին լացի հանգաւ, սոգի ձենաւ ածում ա, էլ ըրածում չեն, լոք լոք չեն անում, գեամ են, կշտին նստոտում, անկուց օնում շուուն ձենին: Լիւս գէառնայ հնցած պպերին հիւգին. դորդ են ասալ. «Ընասունքն էլ իւրանց կեօրա հասկացողութիւն օնեն»:

## ԻՇ.

Ոխճարը սարան վոր էր եկալ: Մին ըրիւկիւն Սրգիսին սրտակից չօբան աղբերը խօսք մին ըրին եկին Սրգիսին կոշտը, հանցու որ զրուց անեն, շուի ածեն, ասեն, խօսեն, ածեն, կանչեն, որ Սրգիսին

սերտը մին պատառ բացուի, ցաւերը մուռանայ։  
Ճուի ըծեցին, խաղ ըսեցին, ամմա տեսան որ Սըր-  
դիսին ունրամէջը բացուում չի, էլ իւկի տրտմում ա,  
մերքը ծովի մնան դալզա տամ, սերտը բշըբաձրի  
անում, ըրեսին ռանգը փոխուում, աշքերը լցնուում։  
Լոյս էլ սկսեցին ըղաշանք, պղատանք անիլ, որ Սար-  
դիսը խաղ ասի։ Էս մինը ասեց։

— Սարդիս, ես մեռնեմ, մին խաղ ասի։  
Էգ մինը։

— Ինձ թաղես, Սարդիս, մին խաղ ասի, լսենք։  
Էն մինը պոկը բռնած ասեց։

— Դիւ ինես էն մը տեղ կերած հացը՝, Սար-  
դիս, մին խաղ ասի, մեր սերտը կոտրիլ մի։

Սարդիսը առաջ մին խոր թառանչ քաշեց,  
ետաւ ասեց։

— Տղէք, շատ ժմանակ ձըզ հետ աղուհաց եմ  
կերալ, ձըզ հետ ըղբրոթիւն ըրալ, ասալ, խօսալ,  
նստալ, եր կացալ, ուրխացալ, ուրխցրալ. մհեկ իմ  
սերտս կոտրուած ա, ամմա ձեր սերտը կոտրիլ չեմ,  
ձեր խնդիրքը անտես չեմ անիլ։ Դէ, անջուկ կա-  
լէք, որ ասեմ, պատճառն որ մահս մօտ ա, գիտում  
եմ, որ ձզանայ ջուկլացուք (բաժանելոց) եմ։

Ո՞չ աշուղ եմ, ո՞չ սազ ածող,  
Ո՞չ շայիր եմ, ո՞չ խաղ կապող,  
Էշըս կրակ պըլպըլացող,  
Սէրըս բիւլբիւլ ծլլացող,  
Երուած սերտս մսի խանձող,  
Կապուած հիւգիս անձար տանջուող,  
Աստուծ, հիւգիս առ եմ ասում,

Վարդիս կոշտը տար եմ ասում։

Ցաւըս ասեմ, ախ համօթ ա,

Ասեմ ոչ, կրակ, բարութ ա,

Չտես մարդն էլ որ քամոտ ա,

Լիւգին կասի, բամբասոտ ա,

«Էս Սարդիսը անհամօթ ա».

Էլ ասիլ չի-շա՛տ ցաւոտ ա.

Աստուծ, հիւգիս առ եմ ասում,

Վարդիս կոշտը տար եմ ասում։

Մշանք մէծ են իմ ցաւերը,

Տակին կը ճկուն մեծ սարերը՝

Աւազ կանեն սալ քարերը՝,

Ոննը կանեն մեծ գետերը՝,

Ալիր կանեն ծմակները՝,

Հոր են արդար դիւանները՝.

Աստուծ, հիւգիս առ եմ ասում,

Վարդիս կոշտը տար եմ ասում։

Մին բիւլբիւլ ի սէրի եըրայ,

Տասը տարի էշի եըրայ,

Կեանքըս դրի վարդի եըրայ,

Լէաւ մծացաւ թաղի եըրայ.

Կոճակ վարդը ճղնի եըրայ,

Սուրը ծեղի պարզ սաղը եըրայ,

Աստուծ, հիւգիս առ եմ ասում,

Վարդիս կոշտը տար եմ ասում։

Ճուիս ածեց «Աստուծ ու Վարդ».

Աստուծ պահեց էն կոճակ վարդ.

Կոճակը ծաղկեց հոնեց մին չարդաթ,

Վարդուր, նախշըն, սէրուն, պաւարդ.

Հե՞նց ուրիսացայ, հունց որ մին մարդ  
Դիրթ գտանայ թագաւորի բախտ.  
Աստուծ, հիւզիս առ եմ ասում,  
Վարդիս կոշտը տար եմ ասում:  
Վարդին ոտաւ, պայծառ տեսքաւ  
Հայիլ մայիլ իլայ մտքաւ.  
Խեղճ բիւլբիւլս ծլվլալաւ,  
Գիշեր ցերեկ հարայ տալաւ,  
Վարդիս գլխաւլ շատ շարխ տալաւ,  
Մին փարվանա դէառած խելքաւ.  
Աստուծ, հիւզիս առ եմ ասում,  
Վարդիս կոշտը տար եմ ասում:

Օրքանց օր վարդս ճորեց,  
Ճաղ չի գրաւ, թուլմոշկեց,  
Տաք տաք բամին ճելի խանձեց,  
Կեծ արևին էլ իստակ էրեց,  
Պարմուր վարդս էս հալ քցեց,  
Խեղճ բիւլբիւլս սէրն էլ խեղդեց.  
Աստուծ, հիւզիս առ եմ ասում,  
Վարդիս կոշտը տար եմ ասում:

Մին մարդ քանդեց սիւն ու գերան  
Համ իմ տանը համ էլ իւրան,  
Վարդը ջոկեց խեղճ բիւլբիւլան,  
Բիւլբիւն էլ իւրան Վարդան.  
Հիւզին հիւզուան, սերտը սրտան,  
Մետքը՝ մտքան, սէրը՝ սէրան.  
Աստուծ, հիւզիս առ եմ ասում,  
Վարդիս կոշտը տար եմ ասում:  
Վարդը ջոկուեց ախ քշելաւ,

Բէյմուրանտ, թառանչ քշելաւ,  
«Աստուծ, Բիւլբիւլ, Մէր ըսելաւ,  
Մնաս բարաւ Բիւլբիւլ» ձեն տալաւ,  
Հրեղան կրակ գլխիս թփելաւ,  
Հիւզիս, մարմինս անծուղ ընելաւ,  
Հերիք Աստուծ, առ եմ ասում,  
Վարդիս կոշտը տար եմ ասում:

Մէրը՝ որ կայ, հրեղան կրակ ա,  
Հինչ սերտ ընկաւ, կրակ կը տայ,  
Դեղ ու մնաւ անօգուտ ա.  
Հարիմ, զառահ, Լողմանն էլ գեայ,  
Հնցընելու էլ ճար չի կայ,  
Վերջի ճարը գերբեղմանն ա.  
Աստուծ, հիւզիս առ եմ ասում,  
Վարդիս կոշտը տար եմ ասում:

Ո՛չ քոն օնեմ, ո՛չ էլ դադար,  
Ո՛չ դինջոթիւն, ո՛չ էլ մալմար,  
Ո՛չ մին հնար, ո՛չ էլ մին ճար,  
Ո՛չ ձեն մնաց, ո՛չ էլ կատար,  
Ճատ տնջուեցի վարդաս օտար,  
Զենս լսի, հիւզիս դէ տար.  
Հերիք Աստուծ, առ եմ ասում,  
Վարդիս կոշտը տար եմ ասում:

Զրատուեց զաղացս, քանդուեց բազս,  
Կոտրուեց տաշտս, պտառուեց մմզս,  
Հրամուեց հացս, ընհամուեց ազս,  
Ճլճաց սերտս, մրմնջաց տաղս,  
Թոթուաց հիւզիս, սոսուաց ջանս,  
Որշանք ասեմ, գլխիլ չի խաղս.

Հերիք Աստուծ առ եմ ասում,  
Անուս կոշտը տաք եմ ասում։

Մի քանի օրան ետը Կողաստայ ժղովուրդը լաց  
ինելաւ, սոդ ընելաւ տարաւ մին մեռալ էլ թաղեց։  
Էս էլ մեր խեղճ Սրդիսի մարմինն էր։



### Վ Ր Ի Պ Ա Կ

Երես	տող	սլաք	ուղիղ
6	29	կը չին	կը չինն.
11	26—27	բարաճըտ	բարաճզտ.
14	11	լիննկի	լիւմննկի.
16	11	հմբոանքաւ	հմբրանքաւ.
17	1	նուեր	նովեր.
21	5—6	քարերին	քրերին.
25	5	տեղերից	տղերան.
25	24	դաշանկ	դաշէանկ.
26	14	ընդրա	ընդրանա.
31	28	կային	հային.
36	26	անպէտ	անպէտը.
40	22	եալանի	եալանչի.

## ՀԵՂԻՆԸԿԻ ԵԲԿԱԾԻՐՈՒԹԻՒՆԵՐՆ

### Տ Պ Ե Ա Լ

1. Միրզա և Աննա (սպառեալ):
2. Արազը տարին կտարի (հազուագիւտ):
3. Պըլը Պուղի (սպառեալ):
4. Չնաշխարհիկ տղայ (սպառեալ):
5. Քննադատութիւն Քննադատութեանց:
6. Գաղտնիք Լարաբաղի (թարգմ.):
7. Աղուանից երկիր և դրացիք:
8. Արցախ:
9. Քրիստոնէական վարդապետութիւն:

### Ա Ն Տ Ի Պ

Նախապաշարմունք:

Պատմութիւն Աղուանից:

10. Զօրանն ու նշանաձը:

### ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.

---

Ծախւում է Թիֆլիզում Կենտրոնական գրավա-  
ճառանոցում, Շուշում Արժանապատիւ Գարեգին քա-  
հանայ Յովհաննիսեանի մօտ, Բագուտում պ. Շիրա-  
ղեանցի մօտ, Երևանում պ. Կ. Գատամեանցի մօտ,  
Աղէքսանդրապօլում պ. Ա. Միհթարեանցի գրավաճա-  
ռանոցում, Գարբանդում Արժ. Արրաջամ քահանայ  
Սպանդունու մօտ, Բաթումում պ. Ա. Ծատուրեանցի  
մօտ, Պուբայում Արժ. Խաչատուր քահանայ Փանեան-  
ցի մօտ. Ասխաբադում Արժ. Շմաւոն քահանայ Աղ-  
բալեանցի մօտ:

